Էջմիածին



1967

ՌՆԺԶ
ԻԳ ՏԱՐԻ

Մայիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ե

1967

ՍԱ-8198

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ազգային-եկեղեցական տոներ	3
Փրկչի նուաշտիան և սուրբ հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս. Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բույր եկեղեցիների ճոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	6
Վեհափառ Հայրապետը Մոսկվայում	13
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատասխանը մամուլի գործակալության թղթակցի հարցին	17
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	18
ՊԱՐԿԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Հայ ժողովրդի ազգապահպանման և ազգաճավամանն սուրբ օջախը	20
Լուրեր սփյուռքահայ ազգային-եկեղեցական կյանքից	24
ԱՐՍԵՆ ԱՆԱՍՅԱՆ—Հայերեն Աստվածաշնչի տպագրության 300-ամյակի տոնակատարությունն Ամստերդամում	29
Ս. Ներսես Շնորհալու անտիպ տաղերը	30
Ա. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ—Ջրույց վանականի և հարուստի մասին	32
Սուտ լուր...	34
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Կամիտասին հետ	37
Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ—Մեր ձեռագրական կորուստները	46
Ս. Ա. ԱԼԱԳՅԱՆ—Մարդ ձարդ վանքը և նրա վիմագրանշագրությունները	58
Հանգիստ Ջյուլիետ Ջոնսոնին	61
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՑԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine». Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1987 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Ս. հարության, համբարձման և հոգեգալստյան տոներից անմիջապես հետո ըստ մեր եկեղեցական օրացույցի, շուրջ երկու շաբաթ, նվիրված է զուտ ազգային-եկեղեցական տոների հիշատակության, տոներ, որոնք սերտորեն կապված են ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական, քարոզչական գործունեության, ս. Էջմիածնի Սայր տաճարի շինության, Հայրապետական Աթոռի հաստատման և 4-րդ դարու հայ եկեղեցու պատմության հետ:

Այդ տոներից առաջինն է, ըստ տոնական բացատրության, Երկրորդ ծաղկազարդը կամ Մեծահրաշի կիրակին, Զատկի կամ Հինանց յոթերորդ կիրակի օրը, և որը նվիրվել է մի սրտառուչ ավանդության հիշատակությանը, ավանդություն, որը կապվում է ս. Գրիգոր Լուսավորչի խորվիրապային կյանքի հետ, ինչպես նշված է օրվա հատուկ շարականի մեջ.

«Մեծահրաշ այս խորհուրդ
Աւանդութեամբ առ մեզ հասել,
Զոր հոգւոց Լուսատուն
Ի պաշտպանէն իրմէ լուեալ,
Եթէ տօն մեծ է այսօր,
Իմոյ դասուն, որ ի յերկինս»:

Սույն գեղեցիկ շարականի հեղինակն է ս. Ներսես Շնորհալու եղբայրը՝ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը (1113—1166), որը ավանդության հիման վրա սուրբ ներշնչումներով և կրոնաբույր խոհերով գրել է տասներկու տներից բաղկացած այս շարականը և կարգադրել՝ որ համբարձման տոնի չորրորդ օրը՝ կիրակի, հիշատակվի այդ ավանդությունը, մասնավոր կարևորությամբ:

Ըստ Խորենացու վկայության, ս. Գրիգոր Պարթև համարվում է «զմերոյ լուսաւորութեանցն լուսաւոր վերակացու և երկրորդ լուսաւորիչ»:

Լուսավորիչ իր քրիստոնեական հավատքի և համոզմունքների համար ընդհարվում է Տրդատ Գ-ի՝ հայոց արքայի հետ, որի հետ աշխատել և գործակցել էր «ի մանկութենէ վաստակովք» և ծառայել նրան՝ «միաբանութեամբ», ինչպես վկայում է Ագաթանգեղոս:

Տրդատ որպես նախանձաժիանդիր հայրենի սովորությունների պաշտպանության հրովարտակներ է հրապարակում քրիստոնյաների դեմ, որոնց ընթացքում նահատակվում է ս. Հռիփսիմյանց կույսերի խումբը, Վաղարշապատում, իսկ ս. Գրիգոր Լուսավորիչը՝ ենթվում Արտաշատի քաղաքա-

գիական մահապարտների բանտը՝ Խորվիրապ: Լուսավորիչը աստվածային նախախնամությամբ ապրում է «յայն վիրապի ամս երեքտասան...» և մի բարեպաշտ կին հոգում է նրա օրապահիկ հացը: Այդ բարի կինը, շատ հավանաբար, արքայադուստր Խոսրովիդուխտն է եղել:

Ազգային-եկեղեցական տոների երկրորդ շարքը նվիրվել է ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակության հիշատակին և հոգևոր նշանակությանը:

Մեր եկեղեցին զատկական, տնօրինական հիշատակություններից անմիջապես հետո, իր զավակների ուշադրությունը հրավիրում է Ավետարանի լույսին ու, քարոզչության մեջ գեղեցկացած, զուտ ազգային սրբերի և դեպքերի հիշատակության վրա:

Ազգային տոների այս շարքը ներշնչող է, թելադրական ու շինիչ՝ իր կրոնական ու ազգային խորիմաստ նշանակությամբ:

Հայ եկեղեցու տոների այս շարքի մեջ հանդես է գալիս մեր ժողովրդի հավատքի գեղեցկությունն ու հոգու կենսունակությունը, նվիրումի ոգին, ազգային անուշիկ ավանդությունների դաստիարակիչ, հոգեթով շունչը՝ պայծառացած Ավետարանի լույսին ու քարոյականին մեջ:

Ահա այդ լուսափայլ տոների շարքը, **ս. Հռիփսիմյանք և ս. Գայանյանք, Լուսավորչի «եղն ի վիրապէն» և ապա ս. Էջմիածնի Մայր տաճարի կամ կաթողիկե եկեղեցու հիմնարկության տոնը:**

Ս. Հռիփսիմյանք 4-րդ դարու մեր եկեղեցու պատմության մեջ գործող գլխավոր դեմքերն են, «անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի», որոնք հայ ժողովրդի հոգևոր կյանքի և լուսավորության համար հանդիսացան «ողջակէզք բանաւորք և զոհք փրկութեան, բառնալով զխաւար դիւապաշտ մոլորութեանց յաշխարհէն և եղեն փրկանք աշխարհին» հայոց:

Քրիստոնյա Հայաստանն ու հայ ժողովուրդը հոգևոր ծնունդն են սուրբ կույսերի նահատակության:

«Ծնան կուսանք ազգս բազում»:

Ս. կույսերի նահատակությունը վճռական նշանակություն է ունենում Հայաստանում քրիստոնեական կրոնի վերջնական հաղթանակի համար:

Ս. Գրիգոր ազատվում է Խորվիրապից և նրա քարոզությամբ հայոց աշխարհը խոնարհվում է Քրիստոսի խաչի առաջ և դառնում Ավետարանի աշակերտ:

Ս. Լուսավորչի քահանայապետական ձեռնադրությամբ նորոգվում է հայոց հայրապետությունը «ի տեղի ընտրելոց սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի»:

Այնուհետև ս. Գրիգոր Լուսավորիչ, իր շողոկաթ տեսիլքի համաձայն, Վաղարշապատում կառուցում է քրիստոնեական հայկական առաջին Մայր տաճարը. «Եւ տեսին այն եղիցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից ամենայն խնդրուածոց հաւատացելոց և Աթոռ Քահանայապետութեան»:

Որով, հոգեգալստյան երկրորդ կիրակին, նվիրված է Լուսավորչի տեսիլքին, ս. Էջմիածնի Մայր տաճարի շինության և հայրապետական Աթոռի հաստատման պատմական դեպքին. **«Ցօն է կաթողիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի, զոր կարգեաց Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր՝ յեղանելն ի վիրապէն»:**

Ս. Էջմիածինը ոչ միայն **կենտրոնն** է ս. Լուսավորչի առաքելական, քարոզչական, եկեղեցական գործունեության, այլ նաև **մարմնացումը**՝ նրա լուսեղեն **տեսիլքին:**

«Այս կաթողիկեն, որ Միածնի ինման հիշատակին կոչվեցավ Էջմիածին, դարձյալ զուտ հայեցի ըմբռնումով, հայեցի բնուակերտությամբ, Հայաստանի առաջին և Մայր եկեղեցին է, որ նոր ի նորո հիմնված և կառուցված է մյուս երեք վկայարաններուն հետ:

...Եվ այդ թվականեն ի վեր, Էջմիածին կեդրոն եղավ հայոց հոգեկան միության:

...Էջմիածինը պահեց իր կեդրոնաձիգ զորությունը և հայեր ու հայրապետներ, ուր որ ալ գտնվեցան, հիշեցին Էջմիածինը և չխզեցին իրենց հոգեկան հաղորդակցությունն ու միությունը անոր հետ:

Լուսավորչի տեսիլքը միշտ պայծառացավ, իրականացավ 302-են ի վեր:

Գիտեմ որ այդ տեսիլքը պիտի չկործանի» (Բաբգեն կաթողիկոս, Դասեր Աւետաս-

ուանէն, Անթիլիաս, 1936, էջ 317—325)։

Արդարև, մեր եկեղեցին և ժողովուրդը երկար դարերի իր տառապալից ճանապարհը անցավ Լուսավորչի տեսիլքով, որը հրեղեն սյունի և ամպի նման հին դարերի մեր բոլոր թափառումների և տառապանքների միջով մեզ առաջնորդեց ու բերեց հասցրեց այսօրվա արևոտ ու խաղաղ օրերին, երբ մեր ժողովուրդը մի անգամ ևս և՛ մայր հայրենիքում, և՛ սփյուռքի բոլոր տարածություններում, Ավետարանի հրաշափառ լույսն ու տեսիլքը իր հոգում, ոտքի կանգնեց և քայլում է մեր օրերի քրիստոնյա, քաղաքակրթված ժողովուրդների շարքում՝ նայվածքը հառած Լուսավորչի կանթեղին, Էջմիածնի խորհուրդին և վերածնած իր մայր հայրենիքի լուսաշող ներկային ու գալիքին։

Այսօր Մայր Աթոռ ս. Էջմիածնի տոնի ուրախ առիթով, բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն է, որ միշտ վառ ու պայծառ մնա Լուսավորչի տեսիլքի հուրը, Ավետարանի լույսը բոլոր հայ եկեղեցիների կամարների տակ ու բոլոր հայ սրտերում։

Մեր բոլորի մաղթանքն է նաև, որ Լուսավորչի հայրապետական գահը մնա հավերժորեն անսասան և հայ եկեղեցին՝ մեկ ու անբաժանելի։

Ճանաչենք, սիրենք ու միշտ շեն պահենք Մայր Աթոռ ս. Էջմիածինը, մեր ազգային-եկեղեցական սրբություն-սրբոցը, «քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Սրբություն
ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Ղպտի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ԿՅՈՒՐԵՂ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),

Անտիոքի և համայն արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն արևելքի պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի պատրիարք, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),

Հնդկաստանի և արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՈՒԿԵՆ Ա-ԻՆ (Կերալա),

Համայն վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումեն օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),

Լիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԶԻԱԴԻՆ (Բեյրութ),

Քենտրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Սրբություն, դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻՆ (Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի պատրիարք, Նորին Սրբություն ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Համայն Ալբանիայի և Տիրանի և Տուրեստի միտրոպոլիտ, Նորին Սրբություն ԴԱՄԻԱՆՈՍԻՆ (Տիրանա),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Սրբություն ՍՏԵՖԱՆԻՆ (Վարշավա),

Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն ԳՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Սրբություն ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),

Նորին Ամենապատվություն կարդինալ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ (Վատիկան),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար ԲԼԵՅԿԻՆ (Ժնև),

Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ եպիսկոպոսին (Նյու-Յորք),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Սրբազնություն ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (Ռիգա),

Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Սրբազնություն ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (Տալլին),

Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ, Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ Հ. ԼԻՆՈՒՍ ԿՈՊՊԻԵԼԼԻԻՆ (Երուսաղեմ),

ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ, Գերարժանապատիվ Հայր ՌՈՒԲԵՆ ՄՅՈՒԼԼԵՐԻՆ (Նյու-Յորք),

Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ ՇԱՌԼ ՌՅՈՒՊԻՆ (Մոնակո),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերհարգելի Հայր
ՀՄԱՅԱԿ վարդապետ **ԿԵՏԻԿՅԱՆԻՆ** (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՄԵՍՐՈՊ վարդապետ **ՀԱՊՈՉՅԱՆԻՆ** (Վիեննա):

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մեր Տիրոջ լույս հարության ավետիսով, եղբայրական հարգալից սիրով կողջունենք և կշնորհավորենք Ձերդ Սրբության այն կենդանի հավատքով, որ մեծ ավետիսը ամեն տարի նոր լույսով և նոր հույսով կլեցնի հոգեկան աշխարհը մարդոց՝ ցույց տալով բոլորիս ճանապարհը իսկական կյանքին և ոգեկան անմահ ճշմարտություններուն:

Քրիստոսի հարության լույսը թող առաջնորդե մեր օրերու մարդկությունը դեպի նավահանգիստը տևական խաղաղության, եղբայրության ու երջանկության:

Ուրախ սիրով կմաղթենք նաև անսասանություն Ձեր առաքելական սուրբ Աթոռին ու երջանիկ և փառավոր հովվապետություն՝ Ձերդ Սրբության:

Լույս և խաղաղություն ընդ Ձեզ:

Ջերմագին ողջունիվ և սիրով ի Քրիստոս:

ՎԱՉԳԵՆ Ա
ԵԱՅՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

***

Թանկագին եղբայր ի Քրիստոս,

Տիրոջ հարության այս տոնակատարության առթիվ, հայեցյալ ի փառավորություն Հոր և «առաւելութիւն մեծութեան զօրութեան նորա ի մեզ հաւատացեալս՝ ըստ յաջողութեան կարողութեան զօրութեանն իւրոյ, զոր յաջողեաց ի Քրիստոս, զի յարոյցն զնա ի մեռելոց և նստոյց ընտ աջմէ իւրմէ յերկնաւորս» (Եփ. Ա, 19—20): Մեր սիրտը լեցված է հիացմունքի, երկրպագության և երախտագիտության զգացումով: Այս զգացումները Մենք փափագում ենք բաժանել Ձերդ Սրբության հետ, որպեսզի միևնույն ուրախությունը մեզ ոգևորի մեր հավատքի վեհ հարուցյալ Քրիստոսով, ընդհանուր միավորությամբ:

Այս զգացումներով է, որ Մենք Ձերդ Սրբության ներկայացնում ենք Մեր հարգալիր և եղբայրական սերը՝ հարուցյալ մեր Հիսուս Քրիստոսով:

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

ՎԱՏԻԿԱՆ

***

Քրիստոս հարյավ: Սրտագին շնորհավորում ենք Ձերդ Սրբության, Ձեր բարեպաշտ հոտին՝ ս. Հարության տոնի առթիվ, և մաղթում բարգավաճում և հաջողություն ձեր սուրբ եկեղեցուն:

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ

ՍՏԱՄԲՈՒԼ

Տիեզերական պատրիարք Հունաց

***

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Եղբայրական սիրով ողջունում եմ Ձերդ Սրբությանը՝ Քրիստոսի հարության լուսապայծառ տոնի առիթով:

Թող հարուցյալ Տերը օրհնի այդ բերկրալի տոնը և հավատացյալների սրտերում հոգեպարար այդ խորհուրդը պահի հավերժորեն:

Այս ուրախ առիթով ընդունեցեք եղբայրական սիրո ողջագուրումներս:
Օրհնյալ է հարությունն Քրիստոսի:
Ձերդ Սրբության հավատարիմ ի Քրիստոս՝

ԱԼԵՔՍԻ

Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

ՄՈՍԿՎԱ

***

Նորին Սրբություն, թանկագին Եղբայր, «արդարև Քրիստոս հարյավ»:

Այս սուրբ նախադասությամբ մենք, ինչպես ամբողջ աշխարհը, դիմավորում ենք Տիրոջ հրաշափառ հարությունը, որը քրիստոնեության ուրախալի մեծ տոնն է:

Սուրբ եկեղեցին փառաբանում է Հիսուս Փրկչին, միշտ մեղավոր մարդկային ազգի հանդեպ՝ իր աստվածային սիրույն համար. այս սերը պայծառորեն հայտնվել է մասնավորաբար Փրկչի չարչարանքներով, մահվամբ և թաղումով և իր հաղթական հարությամբ, մեզ մեղքերից ազատելու համար:

Արդարև հարյավ Տեր:

Ամբողջ սրտով Ձեզ շնորհակալություն եմ հայտնում, շատ սիրելի Եղբայր, Ձեր զատկական պատգամին համար, և այս առթիվ հղում եմ Ձեզ փոխադարձ անկեղծ մաղթանքներս, որպեսզի հայրուցյալ Տերը Ձեզ պարգևի երկար և բարօր կյանք՝ Ձեր սուրբ եկեղեցու և հավատացյալ ժողովրդի՝ բարգավաճում և երջանկություն, արդարություն և խաղաղություն երկրագնդի բոլոր ժողովուրդների հետ:

Թող Տիրոջ շնորհը լինի բոլորիս հետ ընդմիշտ:

Ի Քրիստոս Ձեր Եղբայր՝

ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

ԴԱՄԱՍԿՈՍ

***

Զատկի տոնի առիթով, Ձերդ Սրբության հղում ենք մեր սրտագին շնորհավորություններն ու անկեղծ բարեմաղթությունները, աղոթելով, որ հարուցյալ Քրիստոսը օրհնի Ձեզ, Հայաստանյայց մեծ և սիրելի եկեղեցուն, և Ձեր կյանքը լցնի ուրախությամբ և առողջությամբ:

Տիրոջմով Ձերդ՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ

Պատրիարք Անտիոքի և Համայն Արևելքի

ԴԱՄԱՍԿՈՍ

***

Զափազանց երջանիկ ենք Ձերդ Սուրբ Օծության ուղարկելու համար մեր հոգևոր շնորհավորանքները:

Երախտապարտ ենք շատ Ձեզ՝ զատկական Ձեր ազնիվ պատգամի համար: Մի աշխարհում, ուր չար ուժերը միշտ փորձում են պարտության մատնել բարին, պատգամը, որ ասում է, թե «Քրիստոս յարուցեալ է և Տէրն է բովանդակ պատմութեան»՝ մեզ քրիստոնյաներիս, նոր ուժ է տալիս վստահությամբ առաջ ընթանալու համար:

Աղոթում ենք, որ հարուցյալ Տերը շարունակի ներշնչել և պաշտպանել մեր բոլոր ջանքերը, որոնք կատարվում են իր անվան փառքին համար:

Թող Տերը պահի-պահպանի մեզ գալիք բոլոր օրերի մեջ:

ԲԱՍԻԼԻՈՍ

Պատրիարք Եթովպական եկեղեցու

ԱԴԻՍ—ԱԲԵԲԱ

***

Եղբայրական ջերմ մտածումներով և զգացումներով Ձերդ Սրբություն կուղղենք մեր քրիստոնեական բարի մաղթանքները, որ Տիրոջ Սուրբ Հարությունը տոնախմբենք Ձեր Եկեղեցու հոգևոր դասու և հավատացյալ ժողովրդի հետ՝ հոգևոր ուրախությամբ լի, քաջառողջությամբ ու երջանկությամբ: Աղոթում ենք առ Փրկիչն մեր Քրիստոս կենաց պարգևատու, որ շնորհի Իր ողորմությունն ու անսահման սերը բոլոր քրիստոնյաներին և համայն աշխարհին, որպեսզի նրանք ապրեն խաղաղության և եղբայրական միության մեջ:

Ողջագուրում ենք Ձեզ եղբայրական սիրով ի Քրիստոս Փրկիչն մեր Հարուցյալ:

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ

Պատրիարք Ռումինիայի

ԲՈՒԽԱՐԵՍՏ

***

Սիրով ու անկեղծ հարգանքք շնորհավորում եմ Ձեզ՝ Քրիստոսի հարության լուսապայծառ տոնի առիթով:

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Քրիստոսի հարությունը ուրախության ու մխիթարության անսպառ աղբյուր է բոլոր ժամանակների հավատացյալների համար և վստահություն առ այն, որ հավերժ կենդանի է Խաղաղության Իշխանը մարդկանց սրտերում, ի հաճություն ու հաշտություն մարդկանց:

Բաժանելով Ձեզ հետ զատկական տոնի ուրախությունը, ջերմագին աղոթում ենք Ձեր կենաց առողջության համար, և հայցում Հարուցյալից բազմապատկելու իր ողորմությունը Իր իսկ ստեղծած աշխարհի խաղաղության և մարդկանց բարօրության համար:

ԿԻՐԻԼ

Պատրիարք Բուլղարիայի

ՍՈՖԻԱ

***

Արդարև հարյավ, ալելուիա:

Աստված մեծ զորությամբ հարություն տվեց իր Միածնին՝ Հիսուս Քրիստոսին, երրորդ օրը՝ ըստ ս. Գրոց: Հարուցյալն առաջին անգամ հայտնվեց սուրբ կանանց, որոնք իրենց գորովալի սիրով դեպի մեր Փրկիչը վաղ առավոտյան եկել էին գերեզման՝ խնկելու Նրա սուրբ մարմինը:

Հրեշտակը նրանց ավետեց. «Ձէ ասա, քանզի յարեաւ՝ որպէս ասացն» (Մատթ. ԻԸ, 6):

Հարությունից անմիջապես հետո, երբ բոլոր աշակերտներին հայտնի դարձավ այդ, ինքը՝ հարուցյալ Տերը, երևաց «բազմաց»:

Ինչ նրանց աչքերը տեսան, նրանց շրթները վկայեցին:

Հնազանդ Տիրոջ հրամանին այս առաջին վկաները տարածեցին հարության ավետիսը երկրի ամենահեռավոր սահմանները:

«Եւ եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ եւ յամենայն Հրէաստանի եւ ի Սամարիա, եւ մինչեւ ի ծագս երկրի» (Գործք Ա, 8):

Ոչ նվազ չափով այսօր էլ աշխարհի ամեն մի անկյունում Քրիստոսի Ընդհանրական և Առաքելական եկեղեցիները շարունակում են ավետել այս ուրախ լուրը, որը բերում է մեղաց թողություն, խաղաղություն և հույս՝ բոլոր մարդկությանը:

Թող ամենակարողն Աստված օրհնե Ձեզ, իմ սիրելի Եղբայր, ս. Հարության տոնի առթիվ, ինչպես նաև Ձեր միաբանությանը և հավատացյալ

***

ժողովրդին և թող Ձեզ պարգևի ամենայն ուրախություն՝ իր ծառայության մեջ:
Եղբայրական սիրո ողջույնով՝

ՄԱՅՐԼ ԴԵՄՅԻ
Արքեպիսկոպոս Քենտրբերիի, եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ համայն Անգլիայի

ԼՈՆԴՈՆ

***

Քրիստոս հարյավ ի մեռելոց:
Մեր Փրկչի հարության տոնի առիթով ընդունեցեք մեր եղբայրական ողջույնները: Ավետում ենք Ձերդ Սրբության, Ձեր եկեղեցու հավատացյալներին և հոգևորականության մեծ լուրը՝ Քրիստոս հարյավ ի մեռելոց:
Քրիստոս չարչարվեց և խաչվեց մարդկության համար, որ աշխարհ խաղաղի:
Մաղթում ենք Հարուցյալ Տիրոջը՝ մեզ շնորհելու հոգեկան ուժ և եռանդ՝ վառ պահելու նրա պատվիրանները սրբությամբ՝ ի մխիթարություն իր եկեղեցու հավատացյալներին:
Հայցելով Ձեր աղոթքները, մնամ Ձերդ Սրբության սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝

ՀԵՐՄԱՆ
Պատրիարք համայն Սերբիայի

ԲԵԼԳՐԱԴ

***

Քրիստոս հարյավ ի մեռելոց:
Զատկական ուրախ տոնի առիթով մեր սրտերը լիքն են անսահման հրճվանքով՝ Քրիստոսի հրաշափառ հարության մտածումով:
Քրիստոնեական սովորության համաձայն, սրտագին ողջունում եմ Ձեզ, ձեր հավատացյալներին և հոգևորականներին՝ անձամբ իմ և մեր եկեղեցու հավատացյալների անունից:
Թող Հարուցյալ Տերը նոր ուժ ու եռանդ պարգևի Ձեզ՝ շարունակելու Ձեր եկեղեցանվեր, բարի գործերը՝ ի մխիթարություն եկեղեցու և հավատացյալների:
Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՍՏԵՓԱՆ
Վարշավայի և համայն Լեհաստանի Միտրոպոլիտ

ՎԱՐՇԱՎԱ

***

Զատկական տոնի այս սրբազան օրերին շարականագիրները կոչ են անում ամենքին ներկա լինելու Քրիստոսի հարության հանդեսին, որը ցույց տվեց մարդկանց անմահության ճանապարհը:
Սրտագին շնորհավորում եմ Ձերդ Սրբության Քրիստոսի հարության տոնի առթիվ և մաղթում առողջություն և արևշատություն, Ձեր աստվածահաճո գործոց հաջողություն՝ ի բարօրություն Քրիստոսի սուրբ եկեղեցու:
Քրիստոս հարյավ ի մեռելոց:
Հայցելով Ձերդ Սրբության աղոթքները մնամ եղբայրական սիրով՝

ԴՈՐՈՖԵՅ
Միտրոպոլիտ Պրագայի և համայն Չեխոսլովակիայի

ՊՐԱԳԱ

***

Վեհափառ Տեր,

Հաճեցեք ընդունիլ, Հիսուսի հարության տոնին առթիվ, մեր եղբայրական ջերմ մաղթանքները՝ միացած մեր աղոթքին հավատիքին, որպեսզի Աստված շնորհե Ձեզի երկնային պարգևներու առատություն, առաքելական և հովվապետական ձեռնարկներու հաջողություն և բազմաթիվ հոգևոր ու ժամանակավոր մխիթարություններ:

Այս օրերս ամենուս միտքը կուղղվի մասնավորապես Գողգոթա լերան, ուր կատարվեցավ մարդկության փրկության խորհուրդը: Ջերմորեն կաղաղթենք, որ մեր սիրելի հայ ժողովուրդը, պաշտոնապես առաջին քրիստոնյա ազգը, շարունակե ապրելու հավատքը մեր նախնյաց, որոնք պարծանքով կդավանեին. «Քրիստոս է իմ Աստուած, եւ փառաւոր առնեմ զսա»:

Շնորհակալությամբ ստացանք «Էջմիածին» ամսաթերթին բացառիկ թիվը՝ նվիրված ս. Գրքին հայերեն տպագրության երրորդ հարյուրամյակին: Խնամված, ճոխ հրատարակություն մըն է, որուն համար մեր շնորհակալությունները կհայտնենք և կմաղթենք, որ ան օժանդակե Աստուծո խոսքը ավելի սիրեցնելու մեր ազգին մեջ:

Մնամք եղբայրական սիրո ջերմ ողջունիվ և հարգանաց հավաստյոք, Վեհափառ Տերությանդ աղոթակից՝

ԻԳՆԱՏԻՈՍ-ՊԵՏՐՈՍ ԺԷ ՊԱՊԱՆՑԱՆ
Պատրիարք Կաթողիկե Հայոց

ԲԵՑՐՈՒԹ

***

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Երկինք և երկիր ուրախության մեջ են, հրեշտակները և մարդիկ ողջունում են Տիրոջ հրաշափառ հարությունը:

Երկնքի և երկրի Արարիչը, մեր փրկության համար մարդացած և խաչված Փրկիչը, երրորդ օրը հարություն առնելով, ակիզբը դրեց բոլոր մարդկանց հարության:

«Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքին կենդանասցին» (Ա Կորնթ. ԺԵ 22):

Սենք ևս նույնպիսի ուրախությամբ և տոնականորեն տրամադրված մտածումներով ողջունում ենք Ձերդ սիրեցյալ Սրբությունը:

Ամբողջ սրտով աղոթում ենք Ձեր քաջառողջության համար, որպեսզի բարձրյալն Աստված հոգեպես և մարմնապես զորացնի Ձեզ Հայաստանյայց ս. եկեղեցու առաքելության և պայծառության նվիրված Ձեր աստվածահաճո աշխատանքներում:

Մնամ միշտ Ձեր Սրբության եղբայր ի Քրիստոս՝

ՄԱԿԱՐԻՈՍ
Արքեպիսկոպոս Կիպրոսի

ՆԻԿՈՋԻԱ

***

Մեծապես շնորհակալություն զատկական սիրալիր պատգամին համար: Եղբայրորեն միանում ենք Ձերդ Սրբության՝ հարուցյալ Տիրոջից խնդրելու խաղաղություն իր եկեղեցու և համայն աշխարհին համար: Բարգավաճություն Ձեր սիրելի ժողովուրդին, ուրախություն և մխիթարություն Ձերդ Սրբության բազում տարիների Իր փափուկ, սուրբ առաքելության մեջ:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԱՏԻԿԱՆ

***

Վեհափառ Տեր,

Երախտագիտությամբ ստացա հայրական և եղբայրական հոգեշունչ սուրբ Հարության պատգամը և մաղթանքները: Մեծապես զգացված և շնորհակալ եմ:

Քրիստոսի հարությունը եկեղեցիին հույսի և զորության, հավատքի ու ծառայության ակն ու աղբյուրն է: Այդ զորությամբ Ընդհանրական ս. եկեղեցին, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական ս. եկեղեցին իր գոյությունը և ծառայության ուժը ու կորովը պահած է դարերու ընթացքին: Հայաստանյայց Առաքելական ս. եկեղեցին ռահվիրա եկեղեցի եղած է լուսափայլ շավիղ մը ձգելով իր ետին հետ քրիստոնեական դարերու մութ ճարահետներու վրա: Հայ եկեղեցին Քրիստոսի հարության զորության քաջ վկան հանդիսացած է իր անհամար մարտիրոսներով և նահատակներով՝ հեթանոս միջավայրի մը մեջ: Այն «պատերազմած է հավատքի բարի պատերազմը... և շատ վկաներու առջև դավանած է բարի դավանությունը»: Աստվածային նախախնամությամբ Դուք այս ժառանգին Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց նշանակված եք: Ծանր պարտականություն մը, որը սիրով և հավատարմաբար կկատարեք ի սլայծառություն Հայաստանյայց Առաքելական ս. եկեղեցվո և ի եղբայրություն ու խաղաղություն հայ ազգին:

Կմաղթենք Աստուծո առատ օրհնությունները և Քրիստոսի հարության զորությունը, որպեսզի առավել չափով Հիսուս Քրիստոսի անունով առաջնորդեք հայ ազգը նորանոր հաջողությանց:

Ձերդ աղոթարար՝

ՎԵՐ. ՀՈՎՀ. Փ. ԱՀԱՐՈՆՅԱՆ

Միջին Արևելքի հայ ավետարանական
եկեղեցիների միության նախագահ

ԲԵՅՐՈՒԹ

***

Ձերդ Սրբություն, սիրով ողջունում ենք Ձեզ, Հայց. ս. եկեղեցուն՝ Քրիստոսի հրաշափառ հարության տոնի առթիվ, հայտնելով Ձեզ, հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին մեր եղբայրական անկեղծ, ամենալավ բարեմաղթությունները:

ԼԻՆՈՒՍ

Կուստոդ սուրբ երկրի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

***

Խորապես զգացված Ձերդ Սրբության պատգամից, որը բարեհաճել եք ուղարկել ինձ Զատկի առթիվ, ուրախ եմ Ձեզ ներկայացնելու իմ բարեմաղթություններն ու երախտագիտությունը:

Ի Քրիստոս Ձեր հավատարիմ ծառան՝

ՇԱՌԼ ՌՅՈՒՊ

Եպիսկոպոս Մոնակոյի

ՄՈՆԱԿՈ

***

Փրկչի հրաշափառ հարությունը փառաբանելով կմաղթենք Ձերդ Վեհափառության արևշատ ու երջանիկ օրեր և Ձեր առաքելանվեր նպատակներուն լիուլի հաջողություն, ցանկալով Քրիստոսի հարության պայծառ լույսը հավետ

փայլի սուրբ Էջմիածնի վաստակավոր Գահակալին և հայ ժողովուրդին վրա։ Ամենախորին մեծարանքով՝

Հ. ՀՄԱՅԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՏԻԿՅԱՆ

Ընդ. աբբահայր Մխիթարյան միաբանության

ՎԵՆԵՏԻԿ

Վեհափառ Տեր,

Փոխարինելով Ձեր ազնիվ մաղթանքները մեր Փրկչին շնորհափայլ հարության առթիվ, պաղատախառն աղոթքով կհայցեմ Բարձրյալեն հանայն աշխարհի և մասնավորապես հայ ազգի զավակներուն՝ հրաշափառ հարության հուսանորոգ շունչը կենսատու։

Մաղթելով Ձերդ Սրբազնագույն Օծության երկարատև կյանքի ուղի մը, որպեսզի կարող ըլլաք իրականացնել Ձերդ լավագույն տեսիլքները ի փառս Աստուծո և ի պայծառություն ազգին։

Սույն սրտագին ջերմ իղձերով մնամ Ձերդ Վեհափառության աղոթակից՝

ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈՋՅԱՆ

Արքեպ. և Ընդհ. աբբահայր
Մխիթարյան միաբանության

ՎԻԵՆՆԱ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ապրիլի 25-ին՝ երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելության մեկնեց Մոսկվա՝ ընկերակցությամբ Արարատյան թեմի փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանի և դիվանապետ Հ. Առաքելյանի։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանությունը՝ լուսաբարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի գլխավորությամբ։

Հայոց Հայրապետին ճանապարհեցին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

Մոսկվայի Վնուկովոյի օդանավակայանում Ամենայն Հայոց կաթողիկոսին դիմավորեցին՝ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը, թեմական խորհրդի անդամները և տ. Ալեքսի արքեպիսկոպոսը՝ Ն. Սրբություն Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք տ. Ալեքսիի անունից։

Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել նաև՝ ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնից գործերի խորհրդի նախագահի տեղակալ Մակարցևը և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Օդանավակայանում ողջույնի և բարիզաւրստյան ջերմ խոսքերից և ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետը իր շքախմբով առաջնորդվում է «Լենինգրադսկայա» հյուրանոցը։

Ապրիլի 26-ին՝ չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնից գործերի խորհրդի նախագահ պր. Կուրոյեդովին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը և Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը։

Ամենայն Հայոց կաթողիկոսի և կրոնից գործերի խորհրդի նախագահի միջև տեղի է ունենում զրույց՝ ջերմ մթնոլորտում։

Ապրիլի 27-ին՝ Ավագ հինգշաբթի, և 28-ին՝ Ավագ շաբաթ, Մոսկվայի Հայոց ս. Հարություն եկեղեցում, ավանդական հանդիսությամբ, կատարվում են դատկական սրբազան արարողություններ՝ ոտնալվան, խավարման գիշերի ժամերգությունը, խաչելության և թաղման կարգը՝ տ. Պարգև և տ. Վահան եպիսկոպոսների մասնակցությամբ, ի ներկայություն հավատացյալների։

Ապրիլի 29-ին՝ Ավագ շաբաթ. Ճրագալույց։

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ ս. Հարություն եկեղեցում կատարվում են Ճրագալույցի ժամերգությունն ու երեկոյան հանդիսավոր պատարագը։

Ճրագալույցի պատարագը մատուցում է թեմական առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը և քարոզում «Չէ աստ, այլ յարեաւ» բնաբանով։ Պատարագիչ սրբազանը իր քարոզի սկզբում, հանուն թեմի եկեղեցական իշխանության և հավատացյալների, ջերմորեն ողջունում է Վեհափառ Հայրապետի

շնորհաբեր ներկայությունը՝ բարի գալուստ մաղթելով Ն. Ս. Օծությանը։

Ապրիլի 30-ին՝ կիրակի (հին տոմարով). «Տօն հրաշափառ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի».

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով։ Եկեղեցին լիքն է հավատացյալ բազմությամբ։ Այնուհետև հանդիսավոր ս. պատարագ է մատուցում և քարոզում Վեհափառ Հայրապետը՝ «Քրիստոս հարյալ ի մեռելոց» բնաբանով՝ ի մխիթարություն և ի հոգևոր ուրախություն բոլորի, հաղորդելով նաև Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնություններն ու իր հայրապետական ողջույնները։

Պատարագից հետո, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, թեմական խորհուրդը ճաշկերույթ է տալիս։

Մայիսի 1-ին՝ երկուշաբթի օրը, կեսօրվա ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը Մոսկվայի ռուսաց պատրիարքարանում այցելում է Նորին Սրբություն տ. Ալեքսի պատրիարքին, որը շրջապատված ռուս բարձրաստիճան հոգևորականներով, եղբայրական ողջագուրումով դիմավորում է Հայոց Հայրապետին։

Տեղի ունեցած ջերմ զրույցի ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսը Ալեքսի պատրիարքին հրավիրում է Մայր Աթոռ ս. Էջմիածին։ Ն. Սրբություն Ալեքսի պատրիարքը սիրով ընդունում է հրավերը։

Մայիսի 2-ին՝ երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առնելով Մոսկվայի հայ համայնքից և թեմական խորհրդից, վերադառնում է Մայր Աթոռ ս. Էջմիածին։

Վնուկովոյի օդանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին ճանապարհելու էին եկել տ. Պարգև եպս. Գևորգյանը և թեմական խորհրդի անդամները։

Հայոց Հայրապետին ճանապարհում են նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնից գործերի խորհրդի նախագահի տեղակալ Մակարցևը։

Երեկոյան ժամը 6-ին Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունում են Մայր Աթոռի միաբանությունը՝ լուսաբարապետ սրբազան հոր գլխավորությամբ։ Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը։ Մայր տաճարում իր աղոթքը կատարելուց հետո, վեհարանում, միաբանությունը աջահամբույրով բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՄԱՄՈՒԼԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻ ՀԱՐՑԻՆ

(2 մայիսի 1967)

ՀԱՐՑ.—Արտասահմանի մամուլից տեղեկացանք, թե մայիս ամսին Անթիլիասի Խորեն կաթողիկոսը այցելություններ է տալու դանազան եկեղեցական կենտրոններին, ինչպես՝ Վատիկան, Ժնև և Քենտրբերի։

Կկամենայի՞ք արդյոք մեզ հայտնել Ձեր կարծիքը այդ այցելության բնույթի և նպատակների մասին։

ՊԱՏԱՍԽԱՆ.—Իրոք ճայ եկեղեցու գերագույն Պետ, Մենք տեղյակ չենք Խորեն Կաթողիկոսի Եվրոպա ուղևորության և ոչ էլ նրա նպատակներին։ Ցանկալի և անհրաժեշտ կլիներ, որ նման առիթով Անթիլիասի Կիլիկյան Աթոռը գործեր ճայ եկեղեցու Աթոռների իրավասության սահմանների պահպանման ու միասնության ոգիով։

Համենայնդեպս, ճայտնի է, թե Անթիլիաս հաստատված Կիլիկյան Կաթողիկոսությունը, ճայ եկեղեցու ծոցում լինելով տեղական բնույթ կրող Աթոռ, ինչպես անցյալում, նաև այժմ չի հերկայացնում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին միջեկեղեցական ճարաբերությունների մեջ։

2 ՄԱՅԻՍ 1967
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

***

Սփյուռքից էլ նախապես ուղղված հարցի վերաբերյալ եղան մի շարք հարցումներ, որոնց տրվեց հետևյալ պատասխանը, Մայր Աթոռի դիվանի կողմից։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լիազորված ենք այսու հայտարարելու ի պատասխան արտասահմանից Մայր Աթոռիս ուղղված ճարցումներին, թե Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը որևէ տեղեկություն չունի Տանն Կիլիկիոյ դանակալի ճանապարհորդության և այցելության մասին, ճառաջիկա ամիսներին. ս. Էջմիածնի իշխանության ներքև գտնվող Եվրոպայի ճայ Եկեղեցիներին և ճամայնքներին։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
14 ԱՊՐԻԼԻ 1967

ՊԱ-8198

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 19-ին՝ շաբաթ օրը.—Ճեմարանի հարկի տակ տեղի ունեցավ քույր և եղբայր Սվաճյանների (ջութակ և դաշնամուր) համերգը, որին ներկա էին ուսանողներն ու Մայր Աթոռի միաբանությունը։ Կատարվեցին Բախի, Ցայկովսկու, Ա. Խաչատրյանի, Քենդի ստեղծագործություններից և իսպանական ժողովրդական «Կրանդոն» պարը։

Հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսպայանը համերգի վերջում շնորհակալություն հայտնեց ներկաների կողմից քույր և եղբայր արվեստագետ Սվաճյաններին։

***

Ապրիլի 20-ին՝ հինգշաբթի.—Կեսօրից հետո, ժամը 3-ին, Բյուրականի աստղադիտներից Հայկ Բագալյանը «Երկնային մարմիններ» թեմայի շուրջ կարդաց իր երրորդ շահեկան դասախոսությունը։ Վերջում տեսուչ հայր սուրբը ջերմ շնորհակալություն հայտնեց հարգելի դասախոսին՝ հետաքրքիր դասախոսության համար։

***

Ապրիլի 23-ին՝ կիրակի.—«Ծոն երեման ս. խաչի». Մայր տաճարում պատարագ մատուցեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսպայանը և քարոզեց «Այսօր նշան ս. խաչի ի յերկնից երևեալ» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Ապրիլի 24-ին՝ երկուշաբթի.—«Ցիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի». Ապրիլյան եղեռնի հիսուներկուերորդ տարեդարձի առթիվ Մայր տաճարում պատարագ մատուցեց և քարոզեց լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Եմուտ ի նոսա շունչն և եղեն կենդանի և կանգնեցին կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում յոյժ յոյժ» (Եզեկ. Լէ. 10) բնաբանով։

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Մայր տաճարում կատարվեց հոգեհանգիստ՝ Ապրիլյան եղեռնի նահատակների խնկելի հիշատակին։ Ապա Ն. Ս. Օծությունը եկեղեցական թափորով առաջնորդվեց Մայր Տաճարի հյուսիսային շրջափակում ապրիլյան նահատակաց հուշարձանի մոտ, որտեղ ևս կատարվեց հոգեհանգստյան հատուկ արարողություն։ Հոգ. բազմության ներկայությամբ։

Նույն օրը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, զատկական տոների առթիվ, երուսաղեմ ուխտի մեկնեց Մայր Աթոռի միաբան հոգ. տ. Նարեկ վրդ. Շարարյանը՝ մի խումբ ռուս հոգևորականների և հավատացյալների հետ։

***

Ապրիլի 26-ին՝ շաբաթ (հին տոմարով).—Զատկական տոնի առթիվ Բաքու մեկնեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսպայանը՝ ընկերակցությամբ արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանի և ուրարակիր Հովսեփ Հակոբյանի՝ պատարագելու և Թանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին։

Հայր սուրբը Ավագ հինգշաբթի օրը՝ խավարման գիշերը, քարոզել է «Սիրա իմ սասանի վասն Յուդայի» բնաբանով։ Ապա Հրաբալույցի օրը, ս. պատարագի ժամանակ՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» բնաբանով։

Կիրակի, Հարության տոնի առթիվ, հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսպայանը կրկին պատարագել է ու քարոզել «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս» բնաբանով։

Հոգ. հայր սուրբը Մայր Աթոռ վերադարձավ մայիսի 2-ին։

Նույն օրը, գատկական տոնի առիթով, Քրիլիսի մեկնեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ հախագահելու եկեղեցական արարողություններին։ Զատկի տոնի օրը սրբազանը պատարագել և քարոզել է Քրիլիսիի հայոց եկեղեցում՝ «Չէ ասա, այլ յարեաւ» բնաբանով։

Սրբազանը Մայր Աթոռ վերադարձավ մայիսի 2-ին։

* * *

Ապրիլի 30-ին՝ կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոդ. տ. Մուշեղ վրդ. Պեսիկյանը։

Մայիսի 4-ին՝ հինգշաբթի.—«Համբարձումն Քրիստոսի». Մայր տաճարում պատարագեց հոդ. տ. Գեորգ վրդ. Սերայդարյանը և քարոզեց լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Արք դալիլեացիք, դի՞ կայք հայեցեալ ընդ երկինս» բնաբանով։

Հավարտ ս. պատարագի, ի հիշատակ Հայրապետական Աթոռի Սսից ս. էջմիածին փոխադրության տարեդարձի, կատարվեց հայրապետական մաղթանք։

Օրվա հանդիսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մայիսի 6-ին՝ շաբաթ.—Հոգևոր ճեմարանի հարկի տակ դասախոսեց աշխարհագրագետ Կամսար Ավետիսյանը՝ «Հնդկաստան» թեմայով։

Տեսուչ հոդ. տ. Ներսես ծ. վարդապետը դասախոսության ավարտին շնորհակալություն հայտնեց հարգելի դասախոսին՝ հետաքրքիր բանախոսության համար։

* * *

Մայիսի 7-ին՝ կիրակի.—Երկրորդ Մաղիզարդը։ Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Մկրտիչ սարգ քհն. Մկրտչյանը և քարոզեց հոդ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը՝ «Մեծահրաշ այս խորհուրդ ավանդութեամբ յաւ մեզ հասեալ» բնաբանով։

* * *

Մայիսի 11-ին՝ հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը տեսուչի և դասախոսական կազմի առաջնորդությամբ ուխտի մեկնեց Խորվիրապի վանքը։ Ուսանողները այցելեցին նաև Դվինի պատմական ավերակները։

* * *

Մայիսի 14-ին՝ կիրակի.—Երեկոյան ժամը 6-ին Մայր Աթոռ ս. էջմիածին այցելեցին Մոսկվայում Զիլիի մեծարգո դեսպան Մակսիմո Պալենկոյի առաջնորդությամբ Սանտ-Յագո քաղաքի կաթոլիկ համալսարանի ռեկտոր Ալֆրեդո Սիլվա Սանտ-Յագո արքեպիսկոպոսը, Վալպարադիզոյի կաթոլիկ համալսարանի ռեկտոր Արթուրո Զավալա Ռոխաս և Դիլ Նորդե համալսարանի ռեկտոր Կարլոս Ալզունատեն։

Հարգարժան հյուրերը եղան Մայր Տաճարում, ուր ծանոթացան եկեղեցու կառուցման պատմության, ճարտարապետական կառուցվածքի, Հովնաթանյան ժանրանկարչության։

Հյուրերը եղան Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանում, ուր ծանոթացան հայ եկեղեցական արվեստի ցուցանմուշներին։

Այնուհետև հարգարժան հյուրերը վեհարանում այցելեցին Ամենայն Հայոց Հայրապետին, որը ջերմորեն ընդունեց այցելուներին։

Ամենայն Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։

Հյուրերը վեհարանում դահասարահը, դահլիճները այցելելուց հետո հրաժեշտ տուին Հայոց Հայրապետից և Մայր Աթոռից՝ լավագույն տպավորություններով։

ՊԱՐԳԵՎ ՆՊԻՍԿՈՊՈՍ
(Առաջնորդ Ռուսաստանի և Հյուսիսային
Կովկասի Հայոց թեմի)

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱԶԳԱՀԱՎԱՔՄԱՆ ՍՈՒՐԲ ՕՋԱԽԸ

Էջմիածի՞ն կաթուղիկէ... Էջմիածի՞ն պարծանք
Հայոց, Էջմիածի՞ն ժողովարան։

Առաքել Բաղիշեցի

Պատմական չարաչար իրադարձությունների հետևանքով ամբողջ աշխարհով մեկ ցրված հայությունը, դարեր շարունակ ձգտելով ապրել որպես հայ մարդ, հայ ազգ, իր հույսը դրել է մայր հայրենիքի և Ամենայն Հայոց Հայրապետության վրա, խորապես հավատալով, որ նրանք են իր հարազատ, նվիրական իղձերի կատարողն ու պահապանը։

Օտար հորիզոնների տակ դեգերող ամեն ազնիվ և հայրենասեր հայի պարտքն է եղել չլքատել հայրենիքի և ս. Էջմիածնի բարոյական ուժը և հեղինակությունը, սառնություն չքարոզել նրանց դեմ և չմոլորեցնել ժողովրդին։

Անցյալում, ինչպես և մեր օրերում, նվիրագործված և ճշմարտություն դարձած հայ ժողովրդի այս զգացումներն այսօր մոռացության են մատնվում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասի Աթոռի կողմից։ Ահա տասը տարի է, ինչ Անթիլիասը անում է հնարավորը՝ սփյուռքում գրավելու Ամենայն Հայոց Հայրապետության թեմերը. զանազան միջոցներով հարկադրում է պանդուխտ հայությանը՝ մոռանալու հայ ժողովրդի լուսո Մորը՝ ս. Էջմիածնին, ձգտում է հայության սրտում մոռացնել տալ հայրենի կենդանի իրականությունը, որոնք հայ ժողովրդի կյանքի ճանապարհին դերադույն մխիթարությունն ու ապավենն են հանդիսանում։

Այլ կերպ չի կարելի բացատրել այն սառնությունը, ժմոռացկոտությունը, որ երևում է Անթիլիասի Աթոռի պաշտոնական ամսագիր «Հասկ»-ի էջերը թերթելիս։ Ամսագիրը սկսել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ կապված նյութերը կա՛մ մոռացության տալ և կա՛մ էլ խեղաթյուրել։ Այսպես օրի-

նակ, հայերեն լեզվով Աստվածաշնչի տպագրության 300-ամյակին նվիրված համարում թեև խոսվում է Ոսկան վարդապետի մասին, սակայն երբեք չի հիշվում, որ Ոսկան վարդապետը Երևանցի էր։ Հիշատակություն անգամ չկա երբեմնահիշատակ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մասին, որ Աստվածաշնչի տպագրման գործի ջատագովն ու կազմակերպիչն էր։ Եվ վերջապես «Հասկ» ամսագրի բառապաշարից դուրս են ընկել «Մայր Աթոռ ս. Էջմիածին», «Հայաստան», «մայր հայրենիք» բառերը։ Էլ չենք խոսում «Ամենայն Հայոց կաթողիկոս....» ինքնակոչ հորջորջման մասին, որով սկսվում են ամսագրում տպագրված Տանն Կիլիկիո կաթողիկոսի կոնդակները։

Անթիլիասի կաթողիկոսությունը նման մտածումներով և արարքներով հեռավոր նպատակներ է հետապնդում. նա մի կողմից փորձում է սփյուռքի հայությանը կտրել Մայր Աթոռից և մայր հայրենիքից, իսկ մյուս կողմից այդ նույն հայության համար ստեղծել կրոնական մի նոր կենտրոն, որ փոխարինի ս. Էջմիածնին։

«Վասն Սիոնի ո՛չ լռեցից եւ վասն Երուսաղեմի ո՛չ ներեցից, մինչեւ ծագեսցի իբրեւ ղլոյս արդարութիւն նորա...» (Նսայ. ԿԲ. 1)։ Հոգնջունչ մարդարեի առաջնորդող ձայնը մեզ կոչում է, տագնապ ապրող հայ եկեղեցու այս օրերին, խոսքով և գրչով պաշտպան կանգնել հայ ժողովրդի Սիոնին՝ ս. Էջմիածնին, բացատրել նրա խորհրդի ու հմայքի իմաստը նաև ապագահման գործում։ Հոգով և հավատով դարերի դաղտնարաններից դուրս հանել և ներկայացնել սփյուռքահայությանը մեր խնկելի նախնյաց հիշատակները, որոնք սիրազեղ միության մեջ կոռեցին և կոփեցին այն ամենը, ինչ որ սուրբ և նվիրական դարձավ հայի համար և, պահպանվելով ս. եկեղեցու անաղարտ ծոցում, փրկեց հայ ազգն անխուսափելի կորստից։

Հայոց եկեղեցին կազմակերպվեց այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ պարսկական և բյուզանդական բռնապետությունները ձգտում էին ոչնչացնել հայ պետականությունը, հայ ժողովրդի ինքնուրույն գոյությունը։ Պատմական այսպիսի հանգամանքներում էր, երբ ս. Լուսավորիչը և Տրդատ Գ թագավորը, տեսնելով որ հեթանոսությունը չունի կենտրոնաձիգ ուժ, ընդունեցին և պետական կրոն դարձրին քրիստոնեությունը, որի վսեմ հոգևոր, բարոյական գաղափարներով մեր նախնիքը շաղախեցին հայ ժողովրդին, ստեղծեցին անրաժանելի և անպառակտելի ազգային միություն։

Այսպիսով, հայ եկեղեցին, իր սկզբնավորության իսկ օրից, իր վրա սրբազան պարտականություն վերցրեց՝ դորավիգ լինել հայ պետականությանը, նրա ազգային և ինքնուրույն գոյությունը պահպանելու գործում։

Ավետարանի լույսով լուսավորվող և պայծառացող ս. Էջմիածնից սկիզբ առած այս գաղափարները հետագայում, գիր ու գրականություն ստեղծելով, զարգացրին և ամուր հիմքերի վրա դրեցին հայ եկեղեցու երկու խոշորագույն գործիչներ ս. Սահակն ու ս. Մեսրոպը։

Սակայն ս. Էջմիածնին բախտ չէր վիճակված շարունակելու իր եկեղեցաշեն և հայրենանվեր գործունեությունը։ Սկսած 5-րդ դարի վերջերից Հայրապետական Աթոռը, երկրի քաղաքական իշխանության թուլացման և անկման պատճառով, փոխադրվում է Դվին, ապա Արամուս, Աղթամար, Արգինա, Անի, Սոփք, Հռոմկլա և Սիս։ Այդ երկար միջոցում, որ տևում է մոտ հազար տարի, ս. Էջմիածինը երբեք չի մոռացվում։ Նրա մասին հոգևոր երգեր են գրվում, նրա հետ կապված պատմական դեպքերը և ավանդությունները գրի են առնվում և պատմվում մատենագիրների կողմից։ Հարկադրաբար ուր էլ որ եղել է Հայրապետական Աթոռը, հայ ժողովուրդը միշտ երազել է նրա վերադարձը իր բնիկ, նախկին տեղը՝ ս. Էջմիածին։

Առանձնապես ս. Էջմիածնի կարոտը զգացվում է 11-րդ դարի կեսերից սկսած, երբ մայր հայրենիքում Թուրք-սելջուկների և Թաթար-մոնղոլների արշավանքների հետևանքով կործանվում է պետական իշխանությունը, և երբ ժողովրդի մի մասը գերեվարվում է, իսկ մյուս մասն էլ, չկարողանալով տանել օտար բռնակալների ճնշումները, ստիպված է լինում հեռանալ հայրենի երկրից։ Սակայն տարագիր հայությունը չի համակերպվում իր գաղթական լինելու վիճակի հետ, նա ձգտում է վերադառնալ հայրենիք, վերականգնել հայոց թագավորությունը և բնիկ երկրում ունենալ կրոնական կենտրոն։ Հայ ժողովրդի այն ժամանակվա մտածումները, իղձերը և տենչանքներն իրենց լավագույն արտահայտությունն են գտել ԺԴ դարի պատմագիր Ստեփանոս Օրբելյանի՝ ս. Էջմիածնին նվիրված «Ողբ և հառաչանք Մօրն մերոյ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» և կամ «Ողբ ի ս. կաթուղիկէն» բանաստեղծության մեջ, որը գրված է 1301 թվականին։

Այս հանգամանքը, ինչպես և կաթոլիկ եկեղեցու ոտնձգությունները Սսում Հայրապետական Աթոռի դեմ, որ հետզհետե ուժեղանում էին Կիլիկիո հայոց թագավորության անկումից հետո, առիթ են ստեղծում

հայ եկեղեցականությանը և աշխարհիկ տարրին 1441 թվականին կաթողիկոսական Աթոռը Սսից տեղափոխել ս. էջմիածին։

Հաջորդ հինգ դարերում, ավերակների կույտի վերածված Հայաստանում, ս. էջմիածինը միակ տեղն էր, ուր, ինչպես կասեր հայ ժողովրդի մեծ բարեկամ Վալերի Բրյուսովը՝ բաբախում էր Հայաստանի սիրտը։

Ս. էջմիածնի այդ շրջանի պատմությունը բազմաթիվ մանր ու մեծ բռնակալների կողոպուտի և ավերածության պատմություն է. այն միաժամանակ պատմություն է իսկական հերոսության, անձնազոհության, հայրենասիրության և մարտիրոսության։

Ո՞վ կարող է պատմել այն անթիվ և անհամար տառապանքների և չարչարանքների մասին, որին ենթարկվում էր Հորի համբերությամբ տոկուն Մայր Աթոռի միաբանությունը։

Ո՞վ կարող է մոռանալ մեր երանելի հայրապետներ Մովսես Տաթևացուն, Փիլիպոս Աղբակեցուն, Հակոբ Ջուղայեցուն և Սիմեոն Երևանցուն՝ այդ բազմարդյուն հոգևորականներին, որոնց կենաց և գործոց մատյանները կարդալով չենք կարող չզարմանալ, թե ինչպես են նրանք կարողացել այդքան դառն և նեղ ժամանակներում շեն ու պայծառ պահել մեր եկեղեցիները, զբաղվել շինարարական, կրթական, ազգապահպանման գործերով և, ի վերջո, երբեմն էլ չկարողանալով տանել հայրենի նահատակ եկեղեցու շնչով օր ու արև տեսած զավակների տառապանքներն ու թշվառությունը, վշտահար լինելով մեռել են՝ «Զայն հառաչանաց, սրտի հեծութեան, ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ տեղդ գաղտնեացս» մեծ վարդապետ Նարեկացու խոսքերը շթներին։

Ս. էջմիածնի այդ ժամանակվա պատմությունը պատմություն է նաև հայ ժողովրդի հերոսական ոգու և կենսունակության։

Այստեղ տեղին է բերել 18-րդ դարի ականավոր հոգևորականներից մեկի՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի սրտազդեցիկ գրությունը, որտեղ նա նկարագրում է ս. էջմիածնի վրայով անցած արհավիրքները, բայց և նրա կենսունակությունը.

«Բայց դու ի սկզբանէ անտի մինչև քայ սօր,— գրում է նա,— իբրև զվէմ անսպարտելի՝ հաստատուն կացեր ի վերայ վիմին ճշմարտութեան, որ ոչ դրունք դժոխոց և ոչ բռնութիւնք հակառակորդաց զքեզ հաղթահարել կարացին. այլ իբրև զմրրիկ անցին զքև... Իսկ արդ՝ ո՞ւր եղան նախնի հալածիչքն քոյ, ով լուսատու մայր մեր ս. էջմիածին, Անցին նոքա իբրև զհեղեղս ջուրց... Զի դու յաղթեցեր զնոսա համբերութեամբ քով. ընկղմեցեր զնոսա արտասուօք քովք և մարմնով քով դարձուցեր զնետս նոցա. և արեամբ քով շիջուցեր զ՝ուր նոցա»։

Ինչպես այստեղ չհիշել Հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռացած լեհահայերին, որոնք երբ լսում էին, թե ս. էջմիածնից նվիրակ է եկել և իր հետ ս. Մյուռոն է բերել, դուրս էին գալիս քաղաքներից և մեծ հուզումով, արցունքն աչքերին դիմավորում էին նվիրակին, համբուրում էին նրա հողաթափերը, ձեռքերը, հագուստեղենը, այնուհետև ցնծության աղաղակներով, հոգևոր երգերով և սաղմոսներով առաջնորդվելով եկեղեցի, ցույց էին տալիս իրենց անհուն սերն ու նվիրվածությունը հանդեպ ս. էջմիածնի և նրա սրբություններին։

Ի՞նչպես չհիշել Արարատյան դաշտից Պարսկաստան գերի տարված հայ գաղթականությանը, որին աշխարհավեր Շահ Աբասը Պարսկաստանի հողի հետ կապելու նպատակով մտադիր էր ս. էջմիածնի տաճարն ամբողջությամբ քանդել տանել Նոր Ջուղա, կարծելով՝ որ հայ ժողովրդին ս. էջմիածնի հետ կապողը տաճարի նյութական քարերն են և ոչ թե դարերի ընթացքում հավատացյալների խտացված ջերմեռանդ զգացումները և հայրենի հողի կարոտը։

Ի՞նչպես չհիշել աշխարհե-աշխարհ, ծովեծով, սարե-սար թափառող հայ մարդուն, որ օտարության մեջ զգալով մոտալուտ մահը, համբուրում և կրծքին էր ցանում ս. էջմիածնից բերած մի բուռ հողը և վերջին անգամ, մինչև աչքերի հավիտյան փակելը, հիշողության թևերի վրա, պանդուխտի կարոտով, թռչում էր դեպի տուն, դեպի մեր լուսո խորանը՝ ազգային սուրբ եկեղեցին։

Ս. էջմիածինը նվիրական է դարձել հայության համար, հիշեցրել է մայր հայրենիքը, որի մխացող ավերակների վրա լաց է եղել հայ մարդը և բռնել զարիրության ճամփան, սակայն բանաստեղծ Մկրտիչ Նաղաշի խոսքերով՝

Հոգի, մի ասեր դարիր,
Թե չէ իմ սիրտս կարունի

գոչելով, տոչորվել ու պապակվել է հայրենիքի և ս. էջմիածնի կարոտից։

Ս. էջմիածինը նվիրական է դարձել հայության համար նաև այն պատճառով, որ կանգնած է եղել հայ նահատակների հողի վրա, հին-հին հիշատակաց դամբարանների մոտ։ Հայրենյաց հիշատակները ոգևորիչ և փրկարար են եղել. նրանք հսկայական դեր են խաղացել հայ ազգի բարոյական և հոգեկան վերածնության գործում։ Դեպի ս. էջմիածինն ունեցած սիրո զաղափարը սերտորեն կապված և շաղախված է եղել այդ հիշատակների հետ՝ որպես արգասիք հավատացյալ

...ի անցյալի փառքի և ապագայի ոսկեղեն ...ությունների և երազների։

Ամեն ազգ, հոգևոր կյանքով ապրող ամեն ...նիստոնյա ժողովուրդ իր Թափոր լեռը ունի, ...ուտեղ Փրկչի հրաշափառ պայծառակերպու...թյան տեսիլքի առջև, երկնային լույսի տպա...վորության տակ ոգևորվող առաքյալներից ...Պետրոսը բացականչեց. «Տէր, բարւոք է մեզ ...սա լինել»։

Հայ ազգի Թափոր լեռը ս. էջմիածինն է. ...սա է եղել հայ մարդու կրոնական բարձրա...գույն զգացումն արտահայտող սրբավայրը. ...այնտեղից է բխել օրհնության աղբյուրը. ...այնտեղ է զգացվել հոգեկան ներկայությունը ...Աստծու երանելի հայրապետների, սուրբ վար...դապետների և հավատքի ու հայրենիքի հա...մար նահատակված վկաների, որոնք ոգե...նչել են հայությանը՝ համախմբվել ս. էջ...միածնի շուրջ, դորավիգ լինել հայրենի պե...տության, պահպանել հայ եկեղեցու դարա...վոր ավանդությունները, կարգն ու կանոնը։

Այսպիսի ազգանվեր հաստատություն է ...եղել ու մնում է հայ հավատքի անաղարտու...թյան մշտարթուն պահապան և հայրենասի...րության անմար օջախ, աստվածակառույց ...էջմիածինը։

Այստեղից էլ բնականաբար հարց է առա...ջանում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսու...թյունը և նրա Աթոռ Անթիլիասը, որոնք հա...մարվում են սփյուռքում փոխարինելու Ամե...նայն Հայոց Հայրապետությանը և Մայր Ա...թոռ ս. էջմիածնին, ունե՞ն վերջիններիս ...մայքն ու խորհուրդը հայության աչքում։ ...Անթիլիասի կաթողիկոսական Աթոռը չի ու...նեցել, չունի և չի կարող ունենալ մեր հայ...րենասեր և հավատավոր նախնիների արյամբ և տքնաջան աշխատանքներով պահպանված ու նվիրագործված ս. էջմիածնի բարձր հեղի...նակությունն ու ոգեկանությունը։ Անթիլիասի Աթոռը գտնվում է օտար հողի վրա, իսկ այս հանգամանքը չի կարող խորհրդածության տեղիք չտալ։ Հայ ժողովրդի պատմությունը ցույց է տվել, որ մեր անցյալի գաղթօջախները, անկախ իրենց բնակչության թվից և երկարատևությունից, ի վերջո դատապարտված են եղել օտարների հետ ձուլման և անհայտացման՝ գաղթահայության և մայր հայրենիքի, ինչպես և ս. էջմիածնի միջև եղած փոխադարձ կապերի հետզհետե թուլացման պատճառով։

Անթիլիասի Աթոռն իր բոնած հակահայրենական և հակաէջմիածնական քաղաքականությամբ արագացնելու է ձուլման այդ ընթացքը։

Գաղթօջախների հայությանը սպառնացող այդ վտանգը կանխելու նպատակով է, որ ազգիս Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսն իր հայրապետական կոնդակներով, պաշտոնական նամակներով և քարոզներով շարունակ կոչ է անում սփյուռքահայությանը՝ պաշտպանել ս. էջմիածնի ընդհանրական իրավունքները, պատմականորեն ճշտված իրավասության սահմանները պաշտպանած լինելու համար հայ եկեղեցու միասնականությունը՝ որպես հզոր կուլան ազգապահպանման և ազգահավաքման սուրբ գործի։

Ով ճշմարիտ հայ սիրտ է կրում, չի կարող մոռանալ ո՛չ սուրբ էջմիածինը և ո՛չ էլ մայր երկիրը հայրենի։

ԼՈՒՐԵՐ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

ՈՒՍՏՐԻ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ 75-ԱՄՅԱԿԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առաջնորդական վիճակի թեմական-պատմագրական ժողովը, ընդառաջ գնալով Ուստրի պատգամավորների ներկայացրած խնդրանքին, որոշել էր 1966 տարին հռչակել հոբելյանական տարի, Հյուսիսային Ամերիկայի առաջին հայ եկեղեցու՝ Ուստրի սուրբ Փրկիչ եկեղեցու հիմնադրման յոթանասունհինգամյակը նշելու համար, բովանդակ ամերիկահայ թեմի սահմաններում։

Առաջնորդ դեր. տ. Թորգոմ եպս. Մանուկյանը հատուկ շրջաբերականով հրահանգել էր թեմի բոլոր եկեղեցիներին, ոգեկոչել սուրբ Փրկիչ եկեղեցու հիմնադրման յոթանասունհինգամյակը։

Ուստրի հայոց ս. Փրկիչ եկեղեցին օծվել է 1891 թվականի հունվար ամսի 18-ին։

1966 թվականի դեկտեմբերի 11-ին՝ կիրակի օրը, տեղի է ունեցել սուրբ Փրկիչ եկեղեցու հիմնադրման յոթանասունհինգամյակին նվիրված շքեղ մի հանդիսություն, որին նախագահել է թեմական-առաջնորդ դեր. տ. Թորգոմ սրբազան եպիսկոպոս Մանուկյանը։

Ամերիկայի հայոց թեմը հաստատվել է՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի 1893 թվականի հայրապետական կոնդակով։ Այնուհետև, շնորհիվ մեր ժողովրդի նվիրումի և զոհաբերության, ամերիկահայ թեմը կարողացել է հասնել այսօրվա ծաղկյալ և փայլուն շրջանին։

Ուրախալի է և մխիթարական արձանագրել, որ սփյուռքահայ բովանդակ տարածքի եկեղեցական-ազգային կյանքը տարեց-տարի ծաղկում է, բարգավաճում և հայ ժողովրդի ցրված բեկորներին առույգ ու կենդանի պահում։

ԼՈՐԵՆՍԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԸ

Լորենսի ս. Խաչ եկեղեցու՝ եկեղեցասեր տիկնանց միությունը վերջերս իր հիմնադրման հիսնամյակը ոգեկոչել է մասնավոր հանդիսությամբ։

Այս առթիվ հատուկ օրհնության գիր է հղել թեմական առաջնորդ դեր. տ. Թորգոմ եպս. Մանուկյանը, օրհնելով ս. Խաչ եկեղեցու հոգևոր հովիվը, ծխական խորհուրդը, տիկնանց վարչությունը և հավատացյալ ժողովրդին, բարեմաղթելով, որ նույնպիսի հանդիսություններ և օրհնության գրեր խթան հանդիսանան եկեղեցասեր տիկնանց միության անդամների համար, առավել աշխուժությամբ և եռանդով կատարելու իրենց ազնիվ պարտականությունները՝ ի շինություն և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու։

ՀԱՅ. ԵԿԵՂ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ամերիկահայ թեմի Հայաստանեայց եկեղեցվո երիտասարդաց կազմակերպության (Հ. Ե. Ե. Կ.) հիմնադրման քսանամյակը պատշաճ հանդիսությամբ նշվել է 1966 թվականի սեպտեմբերի 2—5 օրերին։

Շաբաթ առավոտյան, հավարտ պաշտամունքի, բացվել է համագումարը՝ թեմական առաջնորդ սրբազան հոր աղոթքով ու նախագահությամբ։

Երեսունհինգ զանազան մասնաճյուղերի պատգամավորներ և անդամներ՝ Ամերիկայի չորս կողմերից մեկտեղվել են և համերաշխ մթնոլորտում զեկուցել են նախորդ տարիների արդյունաշատ գործունեության մասին և առաջիկա գործունեության համար արել են մի շարք որոշումներ։

Ժողովում խոսք են առել ս. Ներսես Շնորհալի աստվածաբանական վարժարանի տեսչի օգնական, բարեշնորհ Հովհաննես սարկավագ Գասպարյանը, որ խոսել է «Երիտասարդների քրիստոնեական պարտականությունը արդի կյանքում» նյութի շուրջը։

Նույնպես եկեղեցյաց ազգային խորհրդի երիտասարդների վարիչ պ. Լ. Փիրս, որ խոսել է «Աստծո հեղափոխությունը և մարդոց պատասխանատվությունները աշխարհում» նյութի մասին։

Կիրակի օրը պատարագել և քարոզել է առաջնորդ սրբազանը ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցում։

Այնուհետև պատգամավորների պատվին տրվել է ճաշկերույթ։

ՕԾՈՒՄ ՆՈՐՔ ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ

1966 թվականի սեպտեմբերի 18-ին՝ կիրակի օրը, հանդիսությամբ կատարվել է օծումը՝ Նորք Ֆիլադելֆիայի նորակառույց ս. Երրորդություն եկեղեցվո։

Օծումը կատարել է ամերիկահայոց նորընտիր առաջնորդ գեր. տ. Թորգոմ եպս. Մանուկյանը, մասնակցությամբ գեր. տ. Բարգեն եպս. Վարժապետյանի՝ շրջապատված հոգևորականներով։

Օծումից հետո եկեղեցվո հոգևոր հովիվը՝ հոգ. տ. Զավեն վրդ. Արղումանյանը, կարդացել է Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ հղված հատկապես եկեղեցվո օծման առիթով։

Ապա, պատարագիչ սրբազանը քարոզել է՝ հորդորելով «բոլորին, որ այս հայկական ճարտարապետությամբ կառուցված սիրուն եկեղեցին վերակառուցվի նաև ներքնապես, որպես հոգևոր և իմացական հաստատություն, հօգուտ մեր նորահաս սերունդին։

Նույն օրը՝ հետ միջօրեին, եկեղեցուն կից նորակառույց մշակութային սրահում տեղի է ունեցել օրվա ճաշկերույթը, նախագահությամբ առաջնորդ-սրբազան հոր և մասնակցությամբ օտար, հյուր եկեղեցականների և հավատացյալների։

Խոսք է առել պ. Հերրի Գրլեճյան, որ ձրիաբար պատրաստել է և նվիրել է եկեղեցուն շենքերի ճարտարապետական «պլուրինդ»-ները և «շուլմերիք» էլեկտրական զանգակները։

Խոսել են նույնպես գեր. տ. Բարգեն եպս. Վարժապետյանը, հոգ. տ. Զավեն վրդ. Արղումանյանը, արժանապատիվ հայրեր՝ տ. Արդեն ավագ քահանան և տ. Պողոս քահանան, ինչպես նաև պ. Սարգիս Մանուկյանը և պ. Զավեն Հովսեփյանը։

Վերջավորության առաջնորդ սրբազան հայրը բարի գալուստ է մաղթել օտար հյուրերին։ Միաբերան երգված Տերունական աղոթքով ավարտվում է օրվա հանդիսությունը։

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԻՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅՈՒՄ

Մոնտեվիդեոյի հայ գաղութի երեք հարանվանությունների հոգևոր պետերը, ընդառաջելով Ամենայն Հայոց կաթողիկոս, Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի 1966 մարտ 11 թվակիր սրբատառ կոնդակին, միաձայն կերպով որոշել են հոկտեմբերի 23-ին համագաղութային հանդիսությամբ տոնախմբել Աստվածաշնչի հայերեն տպագրության երեքհարյուրամյա տարեդարձը։

Հոկտեմբերը հայ մշակութային ամիս լինելով, գաղութի հայկական ոգեհոգորդումների ժամերին հանգամանորեն անդրադարձվել են հիշատակության արժանի պատմական այս մեծ եղելության մասին, ընթերցումներով և զրույցներով։

«Արմենիա էն էլ Ուրուգվայ» հայկական հեռուստացույցի ժամն էլ տրամադրվել է այս մասին, ուր խոսել է դոկտ. Էմիլիո Քոսթրու։

Հոկտեմբերի 23-ին՝ կիրակի առավոտյան, հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցել հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը և քա-

ղոզել է Աստվածաշնչի հայերեն տպագրության երեքհարյուրամյակի մասին։

Նույն օրը կատարվել է հանդիսավոր տոնակատարություն՝ Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակին նվիրված, գաղութի մշակութային հանդիսասրահում։

Օրվա հանդիսության առիթով ելույթներ են ունեցել Ն. Ադդարյանը՝ «Ս. Գրքի հայերեն առաջին տպագրության պատմականը» նյութի շուրջ։ Ապա հայ կաթուղիկե համայնքի կողմից գեր. դոկտ. Հարություն ծ. վրդ. Թեքեյանը՝ «Ս. Գրքի առաջին հայերեն տպագրության մշակութային նպաստը» նյութի մասին։ Ավետարանական համայնքի կողմից խոսել է վերապատվելի Հակոբ Կյուրլեքյանը՝ «Տպագրության հոգևոր նպաստը» նյութի մասին։ Օրվա եզրափակիչ խոսքը արել է, շահեկան և ոգևորիչ ելույթով, հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը։

Մեջընդմեջ գործադրվել է նաև գեղարվեստական հայտագիր, լսվել են իսպաներեն և հայերեն լեզուներով արտասանական լավ կատարումներ, երգեհոնով՝ մեղեդիներ և հոգեզմայլ շարականներ։

Լատինաամերիկայի սուրբ Գրքի ընկերությունը ևս իր գործոն մասնակցությունն է բերել սույն հանդիսության՝ կազմակերպելով սուրբ Գրքերու ճոխ և գեղակազմի մի ցուցահանդես, այլազան լեզուներով և տպագրությամբ։ Նույնպես խոսուն և գունավոր մոգական լապտերներով ցուցադրել է սուրբ Գրքի այլազան տպագրությանց պատմականը, մինչև մեր օրերը։ Ապա նույն հիմնարկի կողմից գեղատիպ սուրբ Գրքեր նվիրվել են օրվա երեք հարանվանությանց պետերին։

Մոտ երեք ժամ տևող բովանդակալից հայտագիրը գործադրվել է մեծ հաջողությամբ։

ԵՐԱԹՇՏԱՀԱՆԴԵՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹՅԱՆ

Նյու-Յորքի Դաուն Հոլի դահլիճի մեջ հոկտեմբերի 30-ին՝ կիրակի օրը, ժամը 2.30-ին, առաջնորդ գեր. տ. Թորգոմ եպս. Մանուկյանի նախագահությամբ տեղի ունեցավ ճոխ հանդես՝ Ամերիկայի հայոց Առաջնորդարանի օժանդակ միության կազմակերպությամբ՝ նվիրված Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության երեքհարյուրամյակին, որին մասնակցեցին շուրջ 1200 ազգայիններ։

Հանդիսության բացումը կատարել է օժանդակ միության ատենապետուհի տիկ. Աստղիկ Իգնատիոսյանը։ Այնուհետև հանդես է եկել առաջնորդ սրբազանը՝ հայերեն և անգլերեն իմաստալից մի ճառով, նշելով «Սուրբ Գրքի հայերեն տպագրության երեք դարու նշանակությունը, որը հայ եկեղեցական և ազգային կյանքին մեջ հայոց քրիստոնեության դարձին, հայ դիրերու գյուտին և Վարդանանց պատերազմին հետ առընթեր կհանդիսանա կարևոր հանգրվան մը՝ արժանի տոնախմբությամբ։

Այդ հանդեսի գեղարվեստական բաժնին իրենց շնորհալի մասնակցությունն էին բերել ամերիկահայ երեք արվեստագետներ՝ Ժորժ Բալոյանը, ջութակահար Ժիրայր Գանթարճյանը և օպերայի երգչուհի Շաքե Վարդենիսյանը։

Հանդեսն անցել է մեծ հաջողությամբ։

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՀԱՅՈՑ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐԻ

Հոկտեմբերի 2-ին՝ կիրակի օրը, կեսօրին, հանդիսավոր իրագրության մեջ, գլխավորությամբ թեմական առաջնորդ գեր. տ. Թորգոմ եպս. Մանուկյանի և մասնակցությամբ «Կոմիտաս» երգչախմբի, կատարվում է ս. Էջմիածնից հատկապես բերված անկյունաքարի օրհնությունը։ Առաջնորդ սրբազանը օրհնեց նաև 16 քարեր, որոնք գոպիրի շապիկ հագած 16 կնքահայրերի ձեռքով դեսեղվեցին 12 առաքյալների և 4 ավետարանիչների անունով սյուների տակ։

Աղոթասացությամբ և երգեցողությամբ կատարվեց անկյունաքարի օծումը։

Նախքան անկյունաքարի օրհնությունը, ս. պատարագ մատուցվեց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մեջ։ Պատարագը մատուցեց եկեղեցու հոգևոր հովիվ տ. Կարեն քհն. Կտանյանը։

ՏՈՐՈՆՏՈՅԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Տորոնտոյում (Կանադա) ապրում են 1500 հայեր, որոնց մեծ մասը վերջին տարիներին են գաղթել Կանադա Միջին Արևելքի երկրներից։

Հայկական այս գաղութը Տորոնտոյի մեջ ունի իր ս. Երրորդություն եկեղեցին, որուն նորակառույց մշակութային սրահին մեջ քանի մը տարիներե ի վեր տեղի կունենան շաբաթօրյա դասընթացքներ 4—15 տարեկան հայ փոքրերու համար։

Ս. Սահակի և ս. Մեսրոպի անվան սույն վարժարանի 1965—66 տարեշրջանի ամփերջի հանդեսը տեղի ունեցավ հունիսի 12-ին՝ համայնքային հովիվ հոգ. տ. Ժիրայր արդ. Թաշճյանի նախագահությամբ։

Հանդեսին ներկա բազմաթիվ հյուրերի մեջ էր նաև Երուսաղեմի հայոց պատրիարքու-

...ան ներկայացուցիչը՝ գեր. տ. Շահե եպս. Հեմյանը։

...ները հանդեսը սկսավ, աշակերտները բեմ ...ան հայերեն արտասանություններով և ...Ղրական երգերով, իսկ 5-րդ դասարանի աշակերտները հաչող կերպով ներկայացուցին պատկեր մը՝ ձոնված հայ դիրին և գրականությանը։

«Այս վարժարանը ունի 106 երկսեռ աշակերտներ՝ բաժանված 9 դասարանների. 5 նախակրթարան՝ 42 աշակերտներով, և 4 մանկապարտեզ՝ 64 աշակերտներով։

«Սփյուռքի մեջ հայ դպրոցը հայրենիքն է մեր ժողովրդին և աստիճանաչափը՝ մեր հայանպատակությանը,— գրում է տեղեկատուն։ Ուստով սույն վարժարանը կստանա նոր արկարաժին՝ իր լավագույն հարմարություններով։

Հանդեսը վերջանում է խանդավառ մթնոլորտում։

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ

Բուենոս-Այրես

Հոկտեմբերի 16-ին՝ կիրակի օրը, կեսօրից հետո, «Հայ կեդրոն» սրահի մեջ տեղի է ունենում հանդես, որն առանձնապես նվիրված էր հայերեն Աստվածաշնչի տպագրության 300-ամյակին և այդ «կարևոր գործը իրականացնող երկու լուսավոր դեմքերու տրանկահիշատակ տ. Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի և տ. Ոսկան վրդ. Երևանցիի հիշատակին ոգեկոչման»։

Սույն հանդիսությանը բանախոսությամբ անդես եկան Երիտասարդական միջ-միությանց վարչության ներկայացուցիչ Աղարանը, Համազգային տոնակատարությանց Ներկայացուցիչ Ա. Գրաճյանը և հոգ. տ. Հարությունն ծ. վրդ. Մուշյանը, որ ...ամանորեն անդրադարձավ հայ Աստվածաշնչի տպագրության դեպքին, դայն իրագործող անձնավորության գաղափարական նվիրումին, շրջանի պատմական կացության հայ ժողովրդի քաղաքական վիճակին, հույսերուն և ձգտումներուն։

Հանդեսին ներկա գտնվող հոգ. տ. Կյուրեղ վրդ. Գաբիկյանը իր լուսապատկերով ներկաներին ցուցադրեց հայ Աստվածաշնչի հնագույն ձեռագրերի էջերից նմուշներ, որոնք պահվում են Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրերի մատենադարանում։

Հանդիսությունը փակվում է հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն արքեպիսկոպոսի ելույթով, ու շեշտվում է «ս. Մեսրոպին դյուտը և Ոսկան Երևանցու իրագործումը, երկուքն ալ նույն ոգի են մշակած, լուսավորումը հայ ժողովուրդին, ամրացումը անոր քրիստոնեական հավատքին և ազգային գոյացումին»։

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Բուենոս-Այրես

Հոկտեմբերի 9-ի՝ կիրակի օրվա աղոթքն ու պաշտամունքն ամբողջությամբ նվիրված էր հայ մշակույթի և նրա անխոնջ գործիչների մեծարմանը։

Այս տարվա տոնախմբությունը հատկապես կենտրոնացավ հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 300-ամյակին և «գայն իրագործող երախտարժան դեմքերու երջանկահիշատակ Հակոբ Դ Ջուղայեցի, Ամենայն Հայոց կաթողիկոսի և Ոսկան վրդ. Երևանցիի ոգեկոչման շուրջ, ըստ հրահանգի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ի 1966 մարտ 11 թվակիր սրբատառ կոնդակին»։

Նախքան հանդեսային պաշտամունքի կատարումը, ընթերցվեց Վեհափառ Հայրապետի վերոհիշյալ սրբատառ կոնդակը։

Այնուհետև քարոզեց գեր. տ. Բաբգեն արքեպիսկոպոսը՝ հայերեն Աստվածաշնչի տպագրության հոգևոր և ազգային նշանակության մասին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Բուենոս-Այրես

Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու մեջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալության 11-րդ տարեդարձի առիթով, մատուցվեց մասնավոր ս. պատարագ և կատարվեց հայրապետական մաղթանք։ «Հայր մերս»-ից առաջ հայրապետական պատվիրակ սրբազան հայրը խոսում է Վեհափառ Հայրապետի կյանքի, նրա շինարար և բազմարդյուն գործունեության մասին։ Սրբազան հոր խոսքն արտահայտում էր «նան բոլորին սիրո ու հավատարմական զգացումը հանդեպ մեր ժողովուրդի հավատքի կեդրոն ս. Էջմիածնին և անոր արժանընտիր Գահակալին»։

ԳՈՐՏՈՊԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎԻՎ Տ. ՏԱԹԵՎ ՎՐԴ. ՂԱՐԻՊՅԱՆ

Հոգ. տ. Տաթև վրդ. Ղարիպյանը վերջերս ստանձնել է Գորտոպայի և շրջակայի գաղութային վարչության հոգևոր հովվությունը՝ Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Բարգեն արքեպ. Ապատյանի կարգադրությամբ։ Հայր սուրբը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբանության անդամ է։ Ծնվել է 1937 թվականին Սիրիայի Հալեպ քաղաքում։ 1963 թվականին Երուսաղեմում կուսակրոն քահանա է ձեռնադրվել՝ ձեռամբ պատրիարք սրբազան հոր։

ԱՐՍԼԱՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՄԲՈՂՋՈՐՅԱ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Բուենոս-Այրեսի Արսլանյան ազգային ամբողջորյա և երկրորդական վարժարանը հիմնվել է 1941 թվականին։ 1956 թվականին այդ վարժարանը տվել է թվով 43 շրջանավարտներ։ Տարեց-տարի այդ շրջանավարտների թիվը ավելանում է և անցյալ՝ 1966 թվականին այդ թիվը հասնում է 266-ի։ Անցյալ ուսումնական տարում դպրոցը ուներ 420 աշակերտներ։

Արսլանյան ազգային ամբողջորյա և երկրորդական վարժարանում սովորում են այդ պիսի աշակերտներ, որոնք բնակվում են այ կրթական հաստատությունից շուրջ 25—1 կմ հեռավորության վրա։ Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ այդ վարժարան մեծ համարում ունի տեղի հայ համայնքի շրջանում։

Վերջին շրջանում Արսլանյան վարժարանը ունեցավ իր նոր ուսումնական շենքը՝ իր ներքին բոլոր կահավորումներով՝ նվիրատվությամբ բարերար Տիապեքիրյան եղբայրների։

Արսլանյան ամբողջորյայի բաժնում աշխատում են 34 ուսուցչուհիներ։ Դպրոցը ղեկավարվում է հայրապետական նվիրակ գեր. տ. Բարգեն արքեպ. Ապատյանի և Կենտրոնական խորհրդի անմիջական ղեկավարությամբ։

Դպրոցի տեսուչն է հոգ. տ. Հարություն ծ. վրդ. Մուշյանը։

Արսլանյան վարժարանը 7 տարի առաջ ուներ պարզ նախակրթարանի մակարդակ, իսկ շուրջ 7 տարիներից ի վեր վերածվել է ամբողջորյա երկրորդական վարժարանի։

1966 թվականին սույն կրթական հաստատության ամբողջորյա երկրորդական բաժինը տվեց իր շրջանավարտները։

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 300-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՍՏԵՐԴԱՄՈՒՄ

Հայ տպագրության զարգացման գործում անակալից դեր է խաղացել Ամստերդամը, 1660 թվականին հիմնվել է առաջին հայերեն տպարանը։ Այնտեղ էր, որ ս. Էջմիածնի միաբանության անդամ Ոսկան վրդ. Երևանցու ջանքերով հրատարակվեց առաջին հայերեն Աստվածաշունչը։ 1966 թվականին լրացավ Աստվածաշնչի տպագրության 300-ամյակը, և Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով այդ տարեդարձը նշվեց ս. Էջմիածնում և աշխարհի բոլոր հայկական գաղթներում։

Առանձնապես հետաքրքիր են այն հանդիպումները, որոնք տեղի ունեցան հայերեն Աստվածաշնչի տպագրության վայրում՝ Հոլանդիայի երբեմնի մայրաքաղաք Ամստերդամում։

1966 թվականի նոյեմբերի 27-ի առավոտյան Հոլանդիայի հայերից շատերը հավաքվել էին Ամստերդամի հայկական հին եկեղեցու առաջ, ուր տեղի ունեցավ տոնական հանդիսավոր արարողություն՝ Փարիզից եկած տ. Գյուտ վրդ. Նագաշյանի ղեկավարությամբ։ Այնտեղ հոգեշնորհ վարդապետը բացման խոսքից հետո, մոտավորապես հետևյալ մի գեղեցիկ ճառով, հանձնեց նորակառույց Ամստերդամի Քաղաքապետական Դիվանի պաշտոնյա, Հոլանդիայի հայ գաղութի պատմության քրտնաջան ուսումնասիրող, գրագիտությամբ հոլանդացի Ս. Վան Ռույը։ Նա ուշադրությամբ հետաքրքիր փաստեր բերեց Ոսկան Երևանցու տպագրական գործունեության վերաբերյալ։ Այնուհետև տեղեկություններ հաղորդեց մի շարք նոր նյութերի մասին, որոնք նոր լույս են սփռում Ամստերդամի երբեմնի հայ գաղութի պատմության մասին։ Այդ նյութերի շնորհիվ հայտնաբերվել նաև այն վայրը, ուր ապրել ու Աստվածաշունչն է տպագրել Ոսկան Երևանցին։ Պարզվում է, որ Ամստերդամի հայոց եկեղեցու շենքը այդ ժամանակ մի պահեստ էր, որի մեջ գտնվում էր Ոսկան Երևանցու ապրած վերոհիշյալ տունը։ Պահեստի այդ շենքը 1713 թվականին գնվեց հայերի կողմից և վերածվեց եկեղեցու և ապա նրան միացավ նաև այդ տունը։

Այնուհետև իր ճառի մեջ Ս. Վան Ռույը հորդորեց հայերին գնել երբեմնի հայկական եկեղեցու շենքը, որ քաղաքապետությունը եկող տարի ծրագրել է քանդել։ Նոր ափսոսանք հայտնելով պատմական այս արժեքավոր հուշարձանի համար, նա առաջարկեց, որ միևնույն դուռը և մյուս պիտանի պարագաները օգտագործվեն եկեղեցու նոր շենքի կառուցման մեջ։ Վերջում նա իր խոսքը վերջացրեց ասելով, որ 300 տարի առաջ հայերը և հոլանդացիները միասին ստեղծել են մի փոքրիկ պատմություն, որը պետք չէ մոռացության տրվի, այլ ամեն կերպ շարունակվի, և չթողնել, որ հայությանը հետքերը կորչեն Ամստերդամում։

Նույն օրը, կեսօրից հետո, ժամը 2-ին, Գյուտ վրդ. Նագաշյանը պատարագ մատուցեց Ամստերդամի Հին Կաթոլիկական եկեղեցում։ Իր քարոզում նա վեր հանեց Ոսկան Երևանցու ազգանվեր, փայլուն գործունեությունը և կարդաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1966 մարտ 11 թվակիր կոնդակը՝ նվիրված հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 300-ամյակին։ Պատարագից հետո տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն։

Երեկոյան ժամը 5-ին քաղաքի հայտնի սրահներից մեկում Հոլանդիայի հայ գաղութը կազմակերպեց ճաշկերույթ, որի ընթացքում կատարվեցին հայկական երգեր ու պարեր։ Յուցադրվեց մի շարժանկար՝ Հայաստանի մասին, որտեղ հատկապես ուշադրություն էր դրավում ս. Էջմիածնի Մայր տաճարի արարողություններին վերաբերող մասը։

Հոլանդիայի հայ գաղութի այս նշանավոր իրադարձությանը արձագանքեցին հոլանդական թերթերը։ Ամստերդամի կաթոլիկական թերթ «Նոր օրա»-ը 1966 թվականի նոյեմբերի 29-ի համարում մանրամասնորեն նկարագրել է այդ հանդիսությունը՝ տպելով նաև մի խմբանկար, որի մեջ երևում են Գյուտ վրդ. Նագաշյանը, Ս. Վան Ռույը և գաղութի ներկայացուցիչները։ Այս հանդեսի նկարագրությունը լույս տեսավ նաև հոլանդական այլ թերթերում՝ Ամստերդամի «Ժամանակ», Հաագայի «Հայրենիք» թերթերում և այլն։

ԱՐՍԵՆ ԱՆԱՍՅԱՆ

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐԸ*

ՏԱՂ ՎԱՍՆ ՏՆԱՒՐԵՆՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅՆ ՄԵՐՈՅ

Նորն Ադամ հնոյն Ադամայ որդիացաւ,
ի կուսէն Աստուած և մարդ որ խառնեցաւ,
երկակի անճառապէս յոյժ միացաւ,
և բնութիւն երկաբանչիւրն ոչ շրջոթեցաւ։
Բամեալքն ի մի լրութիւն բնութեան չբաժանեցաւ,
և յերկուցրն միութիւն ոչ քակտեցաւ։
Սա Աստուած նոյն է և մարդ որ մեզ ցուցաւ,
ի յերկրի ի մէջ մարդկան մարդ շրջեցաւ։
Էջ յաշխարհ և ի հաւրէ ոչ մեկնեցաւ,
ել առ հայր և յաշխարհէ ոչ հեռացաւ։
Սա ի խաչ վասն Ադամայ քեռեցաւ,
ճաշակեաց ըղմահ մարմնով զոր ըզդեցաւ։
Էր Աստուած նոյն էր և մարդ որ խաչեցաւ,
դնաւղն ի կեանս եդեալ ի մահ կամաւ տուաւ։
Զի անմահ բնութեամբն իւրով ոչ մահացաւ,
այլ իմով մարմնով մեռաւ մահկանացուաւ։
Ախեալ դուռքն դժոխոց խորտակեցաւ,
յորժամ էջ ի նոր տապան և թաղեցաւ։
Յարուցեան երրորդ աւուր որպէս դրրեցաւ,
մեռասան առաքելոցն երևեցաւ։
Սոյն յերկինս որպէս և էջ նա՝ վերացաւ,
ընդ աջմէ ծնաւղին իւրոյ նա բազմեցաւ։
Բայց գայցէ անճառ փառաւք որպէս ցուցաւ,
ի յերկուցրն հրեշտակաց մինչ համբարձաւ։
Ազդէ փող մեզ յարութեան զոր խոստացաւ,
դատաստան յաւիտենից որ ծանուցաւ։
Նմա փառք այժմ յաւիտեան որ ընթացաւ,
և անկէտ յաւիտեան ի նոր կայացաւ։

---

* Շարունակված էջմիածինս ամսագրի 1967 թվականի № 9-ից։

ՏԱՂ Ի ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՍԱՑԵԱԼ

Յայսրմ վայրի եղև յայտնեալ, այն որ Մեսրոպրն կոչեցեալ,
որ տեսսկան ուսմամբ վարժեալ, դործնականու դերազանցեալ։
Ճրգնողական վարս ընկալեալ, ի յանապատս հետեալ,
Աւր ըստ աւրէ զմահ յանձն առեալ, ընդ Քրիստոսի չարչարակցեալ։
Բարեաց պատճառ հայոց եղեալ, դիմաստութեան դանձրն խրնդրեալ,
զոր աղաւթից մասամբ գրտեալ, հոգւոյն մատամբք տրպաւորեալ։
Ըստ Մովսիսի արժանացեալ, դաստուածագիծ տառս ընկալեալ,
երիւք տասամբք վեցիւք յանդեալ, արեդական ելիւք լսփեալ։
Այսրմ շնորհաց սովաւ տրւեալ, սուրբրն Սահակ աւժանդակեալ,
որ Ներսիսի որդի ծրնեալ, համանրման նախնեաց նեղեալ։
Ակդ երկոքին սոքա ընտրեալ, եկեղեցւոյ ամոլք լրծեալ,
դրանին ակաւսրն պատատեալ, դիմաստութիւնրն սերմանեալ։
Մանկունս ուշիմրս ժողովեալ, նոր դրպրութիւն այնու վարժեալ,
որք թարգմանիչք հոգւովն եղեալ, ըստ Պրտղոմեայ ի նոյն շարժեալ։
Յաթենացւոց քաղաքն երթեալ, դիմաստութեան ծաղիկն առեալ,
որպէս մեղու թեաւք բարձեալ, յեկեղեցիս հայոց բերեալ։
Այս է Մովսէս Դաւթիւ եղեալ, և Մամրրէիւ այլք հաստատեալ,
այնքան շնորհաւք վերին լրցեալ, մինչ զի յունաց գերազանցեալ։
Բայց Մեսրովպայ շրջագայեալ, դամենեսեան լուսաւորեալ,
վրաց ։ ազուանաց գիր ստեղծեալ, հոգւոյն շնորհաւք տուստացեալ։
Չեկեղեցւոյ կարգ յաւրինեալ, և սքանչելեաւք վախճան առեալ,
լոյս ի յերկնից վերածագեալ, ի ձև խաչի մարմնոյն խաչեալ։

ԱՅԼ ՏԱՂ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Աստուածային հոգւով լրցեալ, այն որ Վարգան վերածայնեալ,
Մամիկոնեան դարմէն սերեալ, և սպարապետ հայոց եղեալ։
Չեկեղեցւոյ սիւն հաստատեալ, վասրն նորա նահատակեալ,
սրմա բազումք նիզակակցեալ, սուրբ նախարարք հանդիսացեալ։
Որք վարգաղոյն արեամբ գրնեալ, դարքայութիւնրն ժառանգեալ,
զոր թէ կամի ոք հաւաստեալ, զնդիշէի տառ վերծանեալ։
Որ ցուցանէ դայս գործեցեալ, ի Յաղկերտի աւուրս եղեալ,
ղզգլուխն ոտիւք ի բաց բարձեալ, զմեծրն փոքումրք տարամերժեալ։
Չհաւատրն հովուաւք սրրոյ տրւեալ, զգաոինսրն գայլ յափշտակեալ,
զերիտասարդսրն խողխողեալ, ի մարց գրրկաց տրղայք գերեալք։
Եւ ըդկուսանսն ոչ ոք սգացեալ, ծերք աթոռոյ պատուոյ անկեալ,
ըդքահանայսն ի սուր մատնեալ, զայրիս նոցա ոչ ոք լացեալ։
Որպէս Ղևոնդ ալեաւք ծաղկեալ, իմաստութեամբ պայծառացեալ,
հեղրն Սահակ պատարագեալ, և ոչխարոյ փոխան զենեալ։
Սուրբրն Յովսէփ հոգով մաքրեալ, և ոյք նոցին աշակերտեալ,
որք զերկնային լոյսրն տեսեալ, և պսակացն արժանացեալ։

Ա. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԶՐՈՒՅՑ ՎԱՆԱԿԱՆԻ ԵՎ ՀՐԱՇՔԻ ՄԱՍԻՆ*

Զրույց է սա հին ու ավանդական՝
Քաղված դարավոր մի հնամաշ գրքից.
Տարիներ առաջ կար մի վանական,
Ու չէր հավատում նա սուրբ հրաշքին:

Աշխարհը Հայոց արնով էր պատել՝
Ծիրմի պես տխուր ու չարագուշակ,
Ցցվել էին վեր լոկ ավերաշարք
Տնակներ լքված ու քանդված պատեր:

Վշտոտ ու տխուր երկնքից լազուր
Ագռավն էր անցնում արյունոտ կտցով,
Եվ բուն էր միայն իր կռնչոցով
Գիշերային լուռ խավարը խզում:

Ցրիվ էր եկել ժողովուրդն անտեր
Լեռներումն իր սեպ ու երկնակարկառ,
Որ այնտեղ բոցած խարույկներով վառ
Հայոց արևին կրակ հայթայթեր:

---

* Տպագրության ներկայացվող այս երկու քերթվածները գրված են 1942—1943 թթ. Ռումինիայում գտնվող սովետական ռազմագերիների ճամբարներում գրված մի հայ ռազմագերու անտիպ տետրակներից, որոնք ժամանակին պահ էին տրված ռումինահայ թեմի առաջնորդ տ. Վազգեն վ. Պալճյանին: Վերջերս Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Վազգեն Ա-ն իր գրոցներում հանդիպելով այդ բանաստեղծություններին, իր մոտ հրավիրեց նրանց հեղինակին և կամեցավ շուրջ քառորդդարյա պանդխտությունից հետո նշված ստեղծագործություններից մի երկու նմուշ հրատարակել «Էջմիածին» ամսագրում:

Բանաստեղծությունների հեղինակը՝ նախկին ռազմագերի, այժմ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտ. աշխատող Ասատուր Մնացականյանն է: «Սուտ էր...» բանաստեղծության մեջ հիշատակված Գ. Թովմասյանը՝ հեղինակի համագյուղացին (Ոսկեվազ գյուղից), մանկության և գերության ընկերն էր, որը գերությունից ազատվելուց հետո նույնպես վերստին մասնակցեց պատերազմական գործողություններին և ընկավ Բուդապեշտի ազատագրման համար մղվող դաժան մարտերում...

Գերության մեջ Գ. Թովմասյանն ստեղծել է փայտի փորագրության մի ուշագրավ աշխատանք («Սասունցի Դավիթ»), որը փրկվել է ռումինահայ գաղութի ջանքերով և այժմ, որպես հիշատակ, պահվում է նրա հարազատների մոտ: Ներկայացվում է լուսանկարը.

Քանդակի ներքևը գրվել է՝ Սասունցի Դավիթ, իսկ նրա կողքի երեսի վրա՝ Գործ՝ ռազմագերի հրտ. Գուրգեն Թովմասյանի IV—V 43 թ. Տիմիշուարա: 3-րդ երեսի վրա՝ Մասիսի քանդակն է, իսկ 4-րդի վրա՝ Նվեր ռումինահայ մատենադարանին: Չորս կողմը քանդակազարդ է:

Որ դաժան ցրտից չպրթռթային
Աստղերն էլ հայոց երկնքից կապույտ,
Ու եղնիկները ժայռերից թափուր
Գահավիժելով անդունդ չերթային:

Կուչ եկած մի խուլ, անմատույց վանքում
Խորհում էին լուռ հովիվ ու դպիր
Եվ տխո՜ւր, տխո՜ւր դեմքով անծպիտ
Աղոթում էին ու խաչակնքում:

Ու հույս էր տալիս մեկը մյուսին,
Մեկը մյուսին համոզում հաստատ,
Թե կիջնե՜ շուտով երկրին Հայաստան
Հրա՛շքը լույսի:

Զրույց է սա հին ու ավանդական՝
Քաղված գրչագիր մի հիշատակից.
Այն տխուր վանքում կար մի վանական,
Ու չէր հավատում նա այդ հրաշքին:

Նստած էր մի օր վանականն այդ լուռ
Վանքի պարտեզում, մի ծառի ներքո,
Երբ դյութեց նրան ջինջ ու քաղցրալուր
Զայնովն իր անտես թռչնիկ մի երգող:

Մոռացավ աշխարհ, հոգս ու հոգնություն,
Մոռացավ նույնիսկ նա ինքը իրեն,
Եվ կյանքը փոխվեց մի ակնթարթում:
Իսկ թռչնիկն անտես, թռչնիկն անանուն
Թռավ ոստից-ոստ, թռավ ծառից-ծառ
Ու գնաց հեռու երգովն իր պայծառ:

Հետևեց նրան վանականը լուռ,
Ինչպես թիթեռը կրակի բոցին,
Ու մեկը դյութող, մյուսը հրդ
Այդպես գնացին...

Երբ մի անտառում վանականն այն մեն
Հանկարծ ընդհատված դայլայլից հետո
Սթափվեց տխուր և արահետով
Դարձավ անապատ՝ գիշե՜ր էր արդեն:

Եվ ուշ էր արդեն·
Քնել էին լուռ խցերումն իրենց
Միաբանները՝ դռները փակած:
Իզուր էր բախում դարբասը նա մեծ,
Իզուր էր կանչում՝ «ժամկո՛չ, դուռը բաց»:
Սպասեց այդպես մինչև առավոտ,
Իսկ առավոտյան, մշուշում կապույտ,
Մոտեցավ նրան մի ծեր անծանոթ
Ու հարցրեց անփույթ.
— Ո՞վ ես, բարեկամ:
— Ե՞ս, մի վանական:
— Իսկ ի՞նչ ես ուզում:
— Խցիկս մտնել, ընկերներիս մոտ:
Երեկ դյութվեցի ինչ-որ դուրեկան
Թռչունի երգով,

Գնացի մինչև անտառը մթին
Ու երբ ետ դարձա՝ անապատ եկա,
Փակված էր արդեն դարբասը նիգով,
Եվ ուշ էր արդեն:

Ապշեց ծերունին:
— Այստե՛ղ, ո՛վ եղբայր, չի՛ ապրում հիմա
Ո՛չ մի վանահայր, ո՛չ մի վանական,
Ու չի էլ ապրել, հիշում եմ որքան.
Իսկ ես՝ ճիշտ ութսուն տարի եմ ահա
Այս հին տաճարում
Իմ կյանքը վարում:

Ապշեց այդ խոսքից վանականն էլ մեր...
Ու շա՜տ նայեցին իրար երեսի,
Փորձեցին իրար նոր-նոր հարցերով,
Բայց չհասկացավ մեկը մյուսին՝
Մեկը մյուսին հիմար կարծելով...

Զրույց է սա հին ու ավանդական՝
Քաղված գրչագիր մի հիշատակից,
Շատ դարեր առաջ կար մի վանական,
Ու չէր հավատում նա սուրբ հրաշքին:
— Եկ, ով ծերունի, խնդրում եմ,—ասաց
Վանականն անել մղձավանջի մեջ,—
Այս ծանոթ ու հին դարբասն իմ դեմ բաց,
Հետո՝ կլռեն կասկածանք ու վեճ:

Կտեսնես այնտեղ իմ ընկերներին,
Որ պիտի հարցնեն, թե ո՞ւր էի ես:
Վանահայրն էլ ինձ գուցե չների,
Որ դուրսն եմ քնել անառակի պես:

Կամ ո՞վ իմանա, գուցե մերոնցից
Դու մեկն ես՝ գաղտնի շորերդ փոխած,
Որ ինձ ենթարկես հարցի ու փորձի՝
Գիտնալու, թե ես ո՞ւր էի փախած:

Աստվածդ սիրես, հոգնել եմ սաստիկ,
Ինձ մի՛ չարչարիր, ո՛վ էլ որ լինես,
Փրկի՛ր խաղերից այս չարաբաստիկ,
Գուրը բա՛ց արա, թո՛ղ որ մտնեմ ներս:

Ընդառաջ գնաց ծերունկը նրան,
Ու ճռռաց դուռը կրունկի վրա...
... Դատարկ էին, լուռ խցիկներն ամեն,
Ու լքված, կարծես, յոթը դար առաջ.
Նրանց փոշեպատ մթին խավարում
Սարդերն էին մեն
Իրենց ոստայններն աջ ու ձախ փռած
Զանձրորեն պարում,
Ու մեկ էլ՝ քամին...

Սարսուռն էր պատել խեղճ վանականին...

Ու նայում էին իրար երեսի,
Ստուգում իրար նոր-նոր հարցերով,

Ու չէր հասկանում մեկը մյուսին՝
Մեկը մյուսին հիմար կարծելով։
Գալիս են խմբվում մարդիկ նորանոր,
Քննում են նրան, ճգնում են իզուր,
Անունն են հարցնում նրան վանահոր,
Վանականների անուններն ուզում.
Ու խոսում է նա տխուր ու մոլոր
Ու թվում է նա անուններ բազում
Ու շնչում է նա կարծես երազում...

Զրույց է սա հին ու ավանդական՝
Քաղված գրչագիր մի հիշատակից.
Շատ դարեր առաջ կար մի վանական,
Ու չէր հավատում նա սուրբ հրաշքին։

— Բերե՛ք,—ասում է վանականը այդ,—
Մատյանը վանքի, իմ միակ վկան,
Ի՞նչ է կատարվում, չգիտեմ ես արդ,
Մի՞թե այնտեղ էլ հետքերս չկան։

Մատյանը դեռ կար.
Թերթում են երկար
Եվ մաշված ու հին մի թերթի վրա
Գտնում են նշված անունները ամեն՝
Գրված իրենցից... յոթը դար առաջ։
Գտնում են նույնիսկ անունն էլ նրա,
Այս ծանոթությամբ.
«Էր նա վանական,
Կորավ պատահմամբ,
Ու չէր հավատում նա սուրբ հրաշքին...»

Այնժամ ապշեցին բոլորը մեկեն,
Ու տեսան, ինչպես հանկարծ ճերմակից
Այն վանականի միրուքը սաթե,
Զգվեց դեպի վար, որպես այծաթե
Հազար թելերե լուսեղեն մի խուրձ,
Ու գետին ընկավ հառաչով տխուր,
Առավ մի բուռ հող վանականը այն,
Շուրթերին սեղմեց ճիչով բարձրաձայն
Ու ասաց այսպես.
— Ների՛ր ինձ, մայր հող, հավատում եմ քեզ...

Ապա փոքրացավ մարմինը նրա,
Փլվեցին մեկ-մեկ ոսկրերը ներսում,
Գալարվեց ընկավ նա հողի վրա,
Միրուքը ճերմակ փոխարկվեց լույսի,
Եվ առատացող իր թեթև լույսում
Լուծվեց վանականն անվրդով, անցավ,
Փոխարկվեց լույսի, ցնդեց, վերացավ...
Զարմանքը մնաց նրա փոխարեն
Եվ տողերը այս՝ այն հին մատյանում.

«Էր նա վանական՝
Կորած պատահմամբ...
Գտնվեց ուղիղ յոթը դար հետո,
Հավատաց հողին, հրաշքին, լույսին
Եվ փոխվեց լույսի...»

Զրույց է սա հին ու ավանդական՝
Քաղված դարավոր մի հնամաշ գրքից։
Սիրելի երկիր, հող իմ հայրական,
Զավակն եմ ես քո լուսե հրաշքի։

2/12 1949 թ.
Կալիֆոռ
(Ռազմագերիների ճամբար)

ՍՈՒՏ ԷՐ...

Ընկերոջս՝ Գ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

Սո՛ւտ էր, եղբայր, տեսիլքն այն, որ ինձ տեսար գերվելիս
Կամ ճամփեքին գերության՝ ուժից ընկած ու փոշոտ,
Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար ինձ՝ կարոտից այրվելիս,
Դեմքս մռայլ ու տխուր ու հայացքս մշուշոտ։

Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար ինձ՝ մահամերձ ու հյուծված
Մեռնողների շարքի մեջ, որպես շնչող մի կմախք,
Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար հոտիդ արցունքից դեմքս թաց,
Մահը թառած ուսերիս՝ բուի նման թևը կախ։

Սո՛ւտ է, ընկեր սիրելի, որ դեռ գերի ենք հիմա,
Եվ շողում են մեզնից վեր օտար արև ու լուսին,
Սուտ ես և դո՛ւ, որ նստած ահա տխուր իմ դիմաց,
Մտորում ես անընդհատ ինձ հետ մեկտեղ-միասին։

Սո՛ւտ են և այս սրատամ ծանգոտ լարերն ամրապիրկ,
Որ մեր ճամբարն են զատում դրսի ազատ աշխարհից,

Սասունցի Դավիթ

Սո՛ւտ է և այն, որ հիմա մերոնք տանը հանդարտիկ
Արտասվում են ու սգում սրտամորմոք վշտերից:

Տե՛ս, փռված է իմ առաջ Թբիլիսին արևոտ՝
Տարիների ու սիրո ճոխ պատմուճանն ուսերին.
Արծաթ Քուռն է գալարվում իր ոտքերի փոշու մոտ,
Որպես երկրորդ առեղծված Ծիր-Կաթնային լույսերի:

Տե՛ս, գարուն է վերստին, ծաղկած ծառերն են շողում,
Ցնցուղելով իրենց բույրն անձրևորեն ամենուր,
Տե՛ս, գարունից էլ պայծառ տիեզերքն է ողողում
Ծով հմայքը կույսերի՝ որպես ցնորք, որպես հուր:

Օ՜, աղջիկնե՜ր, աղջիկներ, դուք օձիրան ու ճկուն,
Սիրտս ինչքա՜ն է նախանձել մայթերին՝ ձեր կոխոտած,
Ու որքա՜ն է թովքը ձեր իմ աչքերից խլել քուն
Կամ ձիգ տվել ինձ անքուն պողոտայից-պողոտա:

Տե՛ս, վազում եմ ես կրկին կարոտներով լեփ-լեցուն,
Քառուն տված սև մազերս ու փողպատս ծածանվող,
Որ դասերս մոռացած ու նրա հետ թևանցուկ,
Դալթի լեռը բարձրանամ ծաղկամացառ կածանով:

Տե՛ս, խնդում է նա նորից, չարաճճի մանկան պես,
Խվում է ինձ ու վազում, որպես վայրի եղջերու,
Տե՛ս, իր թևից բռնելով, կատակել եմ ուզում ես,
Բայց փախչում է նա նորից՝ հեռվում ծաղիկ փնջելու...,

Սո՛ւտ էր, եղբայր, տեսիլքն այն, որ ինձ տեսար գերվելիս
Կամ ճամփեքին գերության և՛ ուժասպառ, և՛ փոշոտ,
Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար ինձ՝ կարոտից այրվելիս,
Դեմքս մոայլ ու տխուր ու հայացքս մշուշոտ:

Դա երազ էր մի մթին, ծանր կոշմար ու ցնորք.
Չի՛ արտասվել իմ հոգին արևի տակ դեռ տրտում,
Տե՛ս, քայլում ենք ես ու նա Երևանից դեպի Նորք,
Որ երբ իջնի երեկոն, կրկին դառնանք դեպի տուն:

Կրկին վառենք լույսը մեր, նստենք շուրջը սեղանի,
Կարդանք Տերյան, Վարուժան, Սիամանթո ու Դուրյան,
Մինչև քունը ծրարե իր աչերը գեղանի,
Դառնան երազ ու տեսիլք կարոտները մեր բուրյան:

Իսկ վաղորդյան թարմ օդում, երբ սարյակը ճովողե,
Երբ ծիտիկներն արթնացած երգեն բազմած թթենում,
Կրկին ժպտան իմ առաջ իր բիբերը խաղողե,
Լցնելով իմ հոգու մեջ մի քաղցրատանջ խենթություն:

Ու դուրս ելնեմ ես տնից, գործի գնամ երգելով,
Սուրբ էջերը համբուրեմ մատյանների ձեռագիր,
Որ զրուցեն հոգուս հետ՝ դրվագներով սիրտ գերող
Հանճարները մեր անցյալ, գուսանները տարագիր:

Որ խոյանա իմ առաջ Նարեկացին՝ որպես սար,
Դարերի մուժն իր բաշին, կրծքին տավիղ հոգնաղի,
Որ Մասիսը մեր տեսնեմ Աստծու գահին հավասար,
Եվ ի՛նքն՝ Աստված նախանձե մեր սրտաբուխ ծիծաղին:

Որ շշնջան նախնիքս ինձ շրթունքներով հուր բոցի,
Երկինքն ի վար թավալած բաժակները դառնության,
«Մենք շանթեր ենք—երկնված Ազատության հնոցից,
Անմատույց է մեր հոգին շղթաներին բռնության...»:

Սո՛ւտ էր, եղբայր, տեսիլքն այն, որ ինձ տեսար գերվելիս
Կամ ճամփեքին գերության՝ քրտնաթաթախ ու փոշոտ,
Ցնորք էր այն, որ տեսար ինձ կարոտից այրվելիս,
Դեմքս մոայլ ու տխուր ու հայացքս մշուշոտ:

Սուտ է և ա՛յն, որ հիմա, սրտի անմար դողոցով,
Ես գրիչս եմ թաթախում հույզերիս ծով կարոտում,
Չէ՞ որ գուցե հենց հիմա, ես, Աբովյան փողոցով,
Անհոգ մի երգ շուրթերիս, շտապում եմ դեպի տուն...

8 ապրիլի 1949 թ.

ՏԻՄԻՇՈՒՐԱ

(Ռազմագերիների ճամբար)





Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

Ը

ՓԱՌՔ ՔԱՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

I.—Երազներով կբացվի տարին

1914 տարին բացեր էինք երազներով և հույսերով արբշիռ Գինովությունը, զոր ապրեր էինք քանի մը ամիս առաջ՝ մեծ հոբելյանի տոնի օրերուն, գեռ թոթափած չէինք։ Հոգեկան վերելքի ճիգը, տարի մը առաջ սկսած, հիմա արդեն ավելի բուռն էր մեր ամենուս մեջ, որովհետև կզգայինք, թե աշխատանքի անցնելու ժամն է արդեն։

Ով որ այդ օրերը ապրեցավ՝ չի կրնար անուշ հուզումով մը չլեցվիլ զանոնք վերհիշած ատեն հիմա, և սակայն հոգեկան դառնություն մը ևս զսպել պահ մը վերապրել փորձած ատեն այդ օրերու քաղցր երազները, որոնք պիտի փշրվեին տարի մը չանցած։

Հոգիներու մեջ բռնկած այս ոգևորության հիմնական պատճառներեն մեկն ալ՝ Հայաստանի վերածագումման համար մեր սնուցած հույսերն էին։ Ոչ ոքի համար գաղտնիք էր, որ այդ պահուն հայկական դատը կծեծվեր մեծերու սեղանին վրա, ու հայ պաշտոնական շրջանակները տենդոտ աշխատանքի մը լծված էին Պոլսեն մինչև Էջմիածին, ու անկե մինչև Փարիզ, այդ դատը հաջողությամբ պսակելու համար, պահու մը, որ ամենեն նպաստավորը կկարծվեր, ավա՜ղ։ Նպաստավոր, որովհետև աշխարհ հանդիսատես էր եղած Երիտասարդ Թուրքերու հինգ տարիներուն, որոնք սնանկությամբ վերջացեր էին, և նաև անոր համար, որ իր ամբարտավանությունը թոթափած ըլլալ կթվեր Թուրքը՝ Բալկաններու մեջ իր կրած ամոթեն հետո։

Մանրամասնությանց անշուշտ տեղյակ չէին լայն խավերը։ Բայց մամուլը ամեն օր լեցուն էր սուտ և իրավ լուրերով, որոնք կհրահրեին անոնց խանդավառությունը, և կլեցներին զանոնք հույսերով։ Ամեն ոք կհավատար հայ դատին արդարությանը, և չկար մեկը, որ վերապահություն ցույց տար։ Ոգևորությունը ընդհանուր էր ամենուրեք, բոլոր խավերու մեջ։ Պատրիարք ու կաթողիկոս, ու անոնց կողքին ամենեն զգուշավոր մարդիկը՝ Պողոս Նուպար փաշայեն մինչև Ստեփան էֆենտի Գարայան, փարած էին հիմա այդ դատին։ Պոլսո ազգային ժողովը միաձայն էր եղած, երբ 1912 օգոստոս 24-ին կոգեկոչեր հայկական դատը, և բոլոր հոսանքները ներկա էին այն հանձնաժողովին մեջ, որ հիմա կհետապնդեր զայն, թեև Գրիգոր Զոհրապն էր աշխատանքներու բուն ոգին՝ վմայլելի հայրենասիրության մը միացուցած անսահման լավատեսություն։

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № № Ա-ից, Ե—Զ—Է-ից, Ը—Թ—Ժ-ից, 1966 թվականի № № Ա—Բ—Գ-ից, Դ—Ե—Զ-ից, Ը—Թ—Ժ-ից և 1967 թվականի № № Գ—Դ-ից։*

Ոգևորությունը իր լրումին հասավ, երբ 1914 հունվար 28-ին (փետրվար 6) ռուս դիվանատան գործակատար Գուլկևիչ և մեծ եպարքոս Սայիդ Հալիմ փաշա կստորագրեին համաձայնություն մը հայկական բարենորոգումներու մասին։ Մեկուկես տարիներու տենդոտ աշխատանքը կրցեր էր ուրեմն իր պտուղը տալ և զիջումի հարկադրել Թուրքը։ Ճիշտ է, որ դյուրավ չէր շահված այդ հաղթանակը։ Մեծ ճիգեր պետք եղեր էին, որպեսզի ռուս պետությունը նախ ինքը որդեգրե մեր դատը՝ Անգլիան և Ֆրանսիան ևս մոտեցնելով իր տրամադրություններուն, բայց նաև մեծ զիջումներ սկզբնական մեր պահանջներուն մեջ, որպեսզի Գերմանիա ևս դեմ չկենա բարենորոգություններուն։

Ոչ նվազ դժվար աշխատանք էր եղեր Թուրքերը հարկադրել հավանել իրենց առաջարկած բարենորոգումներուն, անոնց ևս զիջումներ ընելով վերջնական ծրագրին մեջ, և այդ հակառակ այն դժնդակ կացության, ուր կգտնվեին Թուրքերը, Բալկանյան պատերազմեն դուրս եկած ըլլալով տկարացած ու նվաստացած։ Պարզ էր, որ եթե Թուրքերը համակերպեր էին ի վերջո, այդ իրենց սրտովը չէր։

Որուն հոգն էր սակայն Թուրքը այդ պահուն։ Եվրոպան իր կողքին կկարծեր հայը, ու կսպասեր չերմեռանդ, որ զույգ մը եվրոպացի մարզպանները գային ու բարեկարգեին Հայաստանը Եվրոպայի երաշխավորության տակ, մինչև ռուսը պիտի հսկեր մեր վրա մոտեն։

Ոգևորված հայ մտավորականության մեջ Կոմիտասն ալ կար։

Տեսանք, թե դեռ 1912 դեկտեմբերին, երբ նոր էր սկսեր արծարծվիլ, անգամ մը ևս, հայկական հարցը, որքան չերմությամբ կշարտագովեր Կոմիտաս ռուս հովանիին տակ ամփոփվելու գաղաժարը Պոլսեն Փարիզ, Արշակ Չոպանյանին ուղղած իր մեկ նամակին մեջ, և կրսեր համարձակությամբ. «Չիք փրկություն արտաքո Ռուսիոն։ Նույն այդ նամակին մեջ ըսեր էր նաև. «Չպե՛տք է բաժանվինք. չպետք է խաբվինք Եվրոպայի զանազան խոստումնալից խարկանքներեն. միանալու ենք և գործնական ճամփան բռնելու. ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայերն ամփոփել ռուսի իշխանության տակ. երկրորդ քայլն է տնտեսապես ու բարոյապես, զուտ ազգային, առանց օտարեն ու մեզ անմարս դաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլ, արդեն ինքը ռուս հեղափոխությունն է, որ պիտի անե, ոչ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն. սակայն պատրաստվելով, լեհերու պես զուտ ազգային շավիղը բռնելով, եվրոպական մարդկային գաղափարները որքան ալ ընտիր են ու փափագելի. բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերը մեր ջերմ արևին տակ կնեղվին։ Ես վախ չունիմ, թե ռուս կառավարության մեջ կհալինք. որքան ալ որ հալինք, այնուամենայնիվ մեր ինքնագիտակցությունը զարթնած է և եթե խելոք շարժվենք, կվաստակինք. ես այս կարծիքն ունիմ»[1]։

Մարզպաններու մոտալուտ ժամանումը գոտեպնդեր էր մեզ բոլոր խավերով, մեծով պզտիկով։ Եվրոպան անգամ մը ևս կախարդեր էր մեզ, ու քեռին կրկին եկեր էր մեր հույսերը օրորելու։

Աշխատելու նոր կորով կհասունեար տակավ մեր ներսը։ Ի՞նչ կարժեր դեսպաններու հովանին, եթե հայ ժողովուրդը ինքը պիտի չկրնար ոտքի կանգնիլ իր սեփական ուժերով։

Ու իրավ ալ, ոտքի կանգնիլ փորձեցինք։

II.—Խանդավառության նոր թափը

Կոմիտասը կարելի չէ ըմբռնել առանց այն ոգևորության, որ Պոլիսը համակեր էր այդ տարին, և այդ ոգևորությունը անհնար է ըմբռնել առանց Կոմիտասին՝ իրեն։ Տոնական տարին, որ նախորդեր էր, ինչպես տեսանք, Կոմիտասի շատ բան կպարտի իր խանդավառութենեն, ու հայ մտավորականությունը հոգեկան այն կապեն, որ ստեղծվեր էր հանկարծ իր իսկ ծոցեն ներս։ Հիմա, տարի մը հետո, նույն Կոմիտասն էր, որ կամրացներ այդ կապը, ոչ միայն իր ոգևորութենեն ներարկելով ամենուն, այլև գրգիռ դառնալով, որպեսզի մարդիկ ձգտին հավաքական ճիգերու։

Հավաքական ճիգերու շրջան մը բացավ, արդարև, 1914 տարին մեզի։

Գրական կյանքը, օրինակ, որ Հուրրիեթի առաջին քանի մը տարին նիրհելե հետո ընձյուղել սկսեր էր 1913 տոնական տարվան հետ, հիմա նոր թափ կստանար։ Կոստան Զարյան՝ Հակոբ Քյուֆեճյանի (Օշական) և Գեղամ Թարսեղյանի հետ՝ կշարունակեր լույս ընծայել Մեհյանը, իսկ մենք, Վարուժանն ու ես, կխմբագրեինք արդեն Նավասարդի երկրորդ գիրքը։ Միքայել Շամտաճյան և Տիգրան Չեոկյուրյան կշարունակեն իրենց Ոստանը, և Մերուժան Պարսամյան իր Շանթը։ Զմյուռնիան միշտ ուներ իր Հայ գրականությունը, Զարեհ Գավեղյանի խմբագրության տակ։ Անշուշտ կղզիացած ճիգեր էին ասոնք բոլորը, բայց կրնեին հասարակաց տենդ մը։

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1958, Ա. էջ 284—285։

Պոլսո բեմը ևս կյանք ստացած էր 1914-ի այդ գարնան։ Քանի մը տարիե ի վեր Կովկասեն խումբ չէր եկեր մեզի, իսկ մեր ձեռքեն հափշտակվեր էին մեր Փափազյանը, որուն չէինք գիտցեր մենք հարգը։ 1914-ի գարունը Կովկասեն մեզի բերավ Զարիֆյան-Սեումյան խումբը դերասաններու ընտրանիով մը, որուն մեջ կային Սաթենիկ Ադամյանը, Գրիգոր Ավետյանը, Միքայել Մանվելյանը։ Նոր թատերախաղեր ալ ու անոնց հետ նաև նոր թարմություն։ Շանթի Հին Աստվածները կատինքնե պահ մը Պոլիսը, ու Շիրվանզադեի Նամուսն ու Ցար ոգին կերկրաձգեին անոր ստեղծած ոգևորությունը։ Ինքնուրույն թատերախաղերու ծարավը սիրով ողջունել կու տար ամեն երկ, որ հայ հեղինակե մը կու գար, մեզ ծափահարել տալով նույնիսկ թատերական նախափորձեր, որպիսին էր, օրինակ, Դերենիկ Դեմիրճյանի «Վասակը», զոր Զարիֆյան-Սեումյան խումբը նույնպես դրեր էր իր խաղացանկին մեջ։

Այդ օրերուն գավառը ևս իր թատրոնն ունենալ կուգեր։ Վանեն 1914 մայիս 1 թվականով Ազատամարտի կգրեին արդարև, թե այդ օրը բացումն են բրած ժողովրդական տան մը Այգեստանի կեդրոնը նորաշեն եկեղեցիին դիմացի սրահին մեջ և թե պատկառելի այդ շենքը օժտված էր պատկառելի սրահով մը, ուր 1000 մարդ պիտի կարենար տեղ գտնել։ Խանդավառությունը զոր տարի մը առաջ ձգեր էր Զարիֆյան Վանի մեջ՝ թատրոնի առաջին այցը տալով հայոց աշխարհին, իր պտուղը կու տար այսպես, հայ արվեստին համար մնայուն խարիսխ ստեղծելու համար նույնիսկ հայ հողի վրա։

Ու իրավ ալ՝ Պոլսեն բաժնվելե առաջ՝ դերասան Զարիֆյան «Ազատամարտ»-ի 1914 մայիս 11/24-ի թիվով թրքահայ հեղինակներուն ուղղված կոչի մը մեջ կրսեր, թե հառաջիկա սեպտեմբերեն սկսյալ շրջիկ խումբի մը հետ թատերապտույտի մը պիտի ձեռնարկե ոչ միայն Կովկասի, Պարսկաստանի, Թուրքիո կեդրոնական քաղաքներուն մեջ (ինչպես Թիֆլիս, Բաքու, Երևան, Նոր Նախիջևան, Թեհրան, Թավրիզ, Պոլիս, Զմյուռնիա), այլ նաև գավառական անկյուններ, Տրապիզոնեն և Սամսոնեն սկսյալ մինչև Վան և Կարին, իր խաղացանկը կազմելով բացառապես հայ հեղինակներու ինքնուրույն գործերեն։

Ան կոչ կբներ այս առթիվ թրքահայ հեղինակներու ալ աջակցիլ իրեն՝ իրենց գործերով։

Զարդարյան, Վարուժան և այս տողերը գրողը հանձն առած էին, տիկին Արաքս Զարիֆյանին հետ մեկտեղ, որ դեռ ատեն մը պիտի մնար Պոլիս, ստացված երկերը զատելու հոգը, և որքան մեծ եղավ անոնց զարմանքը, երբ առաջին թատերախաղը իրենց բերողն եղավ Սրապիոն Թզլյան պատկառելի ծերունին, որ կես դար առաջ մասնակցեր էր, իր թատերական երկերով, պոլսահայ բեմին առաջին մարգանքներուն, և որ դաստիարակն ու ներշնչողն ալ էր եղեր զմայլելի Դուրյանին։ Նոր օրերու չէր դիմանար անշուշտ իր բերած թատերախաղը, բայց այն կմատներ սգևորությունը, որ բռնկցուցեր էր Թզլյան ծերունին։

Ավելցնենք, որ Թզլյան, Զարիֆյանի նույն այդ կոչին առթիվ, հրապարակ կու գար մամուլին մեջ ալ[3] ոգեկոչելով հայ բեմին անդրանիկ տարիները, երբ այն օրերու սերունդին խանդավառությունը թատրոն պարգևեց հայ ժողովուրդին, և մաղթելով այդ թատրոնը հասնի հիմա իր բարձունքին՝ նոր սերունդին ջանքերով։

Հայ հոգին խաղաղ չէր կրնար մնալ այդ օրերուն։ Առիթ կփնտրեր իր խանդավառությունը պոռթկալու համար։ Մկրտիչ Փորթուգալյանի հոբելյանը մեկն եղավ այդ առիթներեն։ Տարբեր պայմաններու մեջ ո՞վ պիտի մտածեր հոբելյանով մը պատվել վաղեմի գործիչ մը, որ երեք տասնյակ տարիներե ի վեր Մարսելիա քաշված, իր ծերությունը կսպասեր համեստ թերթի մը վրա, որ Արմենիան էր։ Իրմե առաջ շատեր երախտիք էին ձգեր հայ կյանքի մեջ, բայց գացեր էին հողը մտնել աննշմար։ Փորթուգալյանը մինակը չէր, որուն վաստակին առջև ստիպված էր ծունկի դալ հայ ժողովուրդը։ Նոր օրերու մեջ բռնկած մեր ոգևորությունը իբրև խորհրդանշան ընտրեց Մարսելիա քաշված ծերունին, և զայն Պոլիս բերավ՝ իր ակնածանքի տուրքը տալու համար մարդու մը, որ քառասուն տարիներ առաջ հայրենասիրության առաջին քարոզները տարեր էր հայոց աշխարհին։

Փորթուգալյան Պոլիս գտնված օրերուն մեկ հարկի տակ ապրեցավ Կոմիտասին և Փանոս Թերլեմեզյանին հետ։ Քառասուն տարիներ առաջ Փանոս իր սանն էր եղեր Վանի մեջ, ու իր ձեռքին մեջ թրծվեր անոր ըմբոստ հոգին, որ հայ արվեստին գալե առաջ՝ հայդուկ մը պատցուցեր էր Վանա սարերը։

Այդ օրերուն ուխտավայր մըն էր Կոմիտասի բնակարանը։ Ամեն օր ան կլեցվեր բազմությամբ, որ կու գար իր մեծարանքը բերելու Միացյալ ընկերությանց երբեմնի նվիրակին, որ իր երիտասարդական խանդավառությունը տարեր էր գավառ, նվիրակիա

[3] «Ազատամարտ», 1914 մայիս 17/30։

և մանավանդ Վասպուրական, լույս շամբելու համար նոր սերունդին, բայց մանավանդ անոր սրտին մեջ վառելու համար հայրենասիրության կրակը։

Ու զարմանալու չէ, եթե հոբելյանական հանդիսությունը, որ տեղի ունեցավ 1914 ապրիլ 27-ին (10 մայիս) Փրթի Շանի ձմեռային թատրոնին մեջ, համազգային տոնի մը կերպարանքն առավ, տոն, որ կու գար փառավորելու ոչ թե վաստակավոր հայ գործիչ մը, այլ հանձին անոր հայ ժողովուրդի ազատագրական շարժումը, որուն առաջին ուսումնասիրաներեն մեկն էր եղած Փորթուգալյան, գրեթե առաջին հեղափոխականը՝ հայ հեղափոխական կուսակցություններեն ալ առաջ։ Հոն էին, այդ հանդիսության մեջ, հայ ժողովուրդի բոլոր խավերն անխտիր, իրենց ավելի քան հիսուն պատգամավորներով և հարյուրավոր ուղերձներով, ու հոն խոսք առին բոլոր հոսանքները իրենց հռետորներով, Ակնունին, Խաչակ ու Թեքեյանը, Վռամյանը, Մշո Գեղամը և պատվելի Շմավոնյանը, Դանիել Վարուժանն ու Հրաչ Երվանդը, ու հայ ժողովուրդի ուրիշ մեկ երախտավորը՝ աչազուրկ ալեոր դաստիարակ Համբարձում Երամյանը։

Ի վերջո խոսեցավ և ինքը, վաստակաբեկ ծերունին՝ պատկառելի նույն իսկ վտիտ կերպարանքին մեջ։ Իր ճառը պատմությունն էր հանդրվաններուն, ուրկե անցած էր մեր ազատագրական շարժումը իր դեղևումներով ու իր հանգնությամբ, իր հույսերով և հուսախաբությունններով, իր սխրագործություններով և իր սխալներով, շարժում, որ սակայն արդար էր և անխուսափելի։ Փորթուգալյան սապես ավարտեց իր երկար ճառը.

«Որքան ալ ըսեք, կեցցե՛ Փորթուգալյան, ան մեկ քանի տարիեն կմեռնի։ Ազգն է, որ միշտ կապրի։ Ուրեմն ըսենք կեցցե՛ հայ ազգը միշտ և հավիտյան»։

Ավելցնենք, որ հանդեսը իր գեղարվեստական մասն ալ ուներ, որու ընթացքին Կոմիտասի գուսան երգչախումբեն երիտասարդներու խումբ մը երգեց «Ով մեծասքանչ դու լեզու»-ն։

Փորթուգալյանի հոբելյանին առթիվ իր սարքած հանդիսական այս ցույցով, ինչպես կգրեր Զարդարյան իր հերթական խմբագրականին մեջ, «թրքահայ ժողովուրդը ինքզինք դաստիարակեց, որովհետև իդեալին նվիրված ամեն հանրային հարգանք ու ցույց՝ հոգեպես կհարստացնե ժողովուրդը՝ մղելով զայն միշտ դեպի առաջ, միշտ դեպի առաջ»։

Դեպքերը, ավա՜ղ, հաճախ զայն կկեցնեն ճամփան։ Անոնք պիտի չուշանային այս անգամ ևս կեցնել հայ ժողովուրդի զմայլելի առաջընթացը...

* * *

Մինչդեռ հայ դատը անգամ մը ևս կփորթար բախել մեծերու խղճմտանքին՝ հայոց աշխարհը իր տառապանքեն փրկելու համար և հայ հոգին կխլրտեր ազատին հույսերու և երազներու անձնատուր, մարգոց մտածումը պահ մը նորեն գավառին կերթար։

Այսպես էր եղեր ամեն անգամ, երբ հույսի նշույլ մը համակեր էր հայ ժողովուրդը։ Անցյալ դարուն, իր վերելքի ճիգերուն ամեն մեկ հանգրվանին, գավառն էր դարձեր ամենուն ուշադրության և մտահոգության առարկան։ Հիմա ևս Պոլիս աչքերը պահ մը հառեց կրկին գավառին։ Հեռավոր այդ երկիրն էր, որ շուտով պիտի դառնար հայ նոր կյանքին և հայ հույսերուն խարիսխը. անհրաժեշտ էր սակայն լրիվ ճանչնալ զայն, ինչպես իր ավերակներուն և իր ավանդությանց՝ նույնպես իր անմիջական կարիքներուն մեջ։

Այդ մտահոգությունը վարակիչ կսկսեր դառնալ տակավ հայ մտավորականության մեջ։

Ու 1914 մայիսին թերթերը արդեն կծանուցանեին, թե խումբ մը մտավորականներու նախաձեռնությամբ հիմնադրված է ընկերություն մը, նպատակ ունենալով դոհացում տալ այժմեական պահանջի մը՝ Հայաստանի ուսումնասիրության։ Թերթերը կծանուցանեին նույնպես, որ առաջին ժողովը տեղի ունեցած է մայիս 24-ին, ներկա եղած են 18 անձեր՝ մտավորականներ, հայ աշխարհի զանազան գավառներեն և տարբեր մասնագիտություններեն։ Հայաստանը ուսումնասիրելու առաջարկը ընդունված է միաձայն, կարդացված է պատրաստված նախագիծը և ընտրված հանձնախումբ մը, բաղկացած պրոֆ. Աստ. Խաչատրյանն, Հովհ. Հակոբյանն և է. Ակնունին, պաշտոն ունենալով հաջորդ ժողովի մը բերել արդեն մշակված կանոնագիրը։

Երկրորդ ժողովը տեղի ունեցած է մայիս 31-ին, ուր և կատարված ու մանրամասն քննությունեն ետք ընդունված է հիմնական կանոնագիրը, որուն համաձայն ընկերության նպատակը պիտի ըլլա մանրամասնորեն ուսումնասիրել Հայաստանը իր զանազան երևույթներու տակ, հրատարակել պարբերաբար ուսումնասիրություններ հայ և թե հարկ ըլլա՝ օտար լեզուներով, ղրկել Հայաստան ուսումնասիրող խումբեր կամ անհատներ, կորուսած ազատել հնությունները և այդ նպատակով հաստատել թանգարան և կամ օգտվել նղածներեն, հարաբերություն հաստատել Եվրոպայի և Կովկասի այն ընկերություններուն հետ, որոնց նպատակն է ուսումնասիրել արևելքը՝ մասնավորապես Հայաստանը։

Ընկերության գործունեությունը, կծանուանեն թերթերը, իր ամբողջությամբ պիտի «կսի այս աշնան, և վստահություն կհայտնեն, որ այս գերազանցապես և այժմեական ձեռնարկը իր շուրջը պիտի խմբե հայ մտքի բոլոր ներկայացուցիչները և հայ բնագավառի բոլոր բարեկամները[3]։

Հարկ կա՞ր ըսելու, թե Կոմիտասի բնակարանին մեջ էր, որ մարմին առավ այդ ընկերությունը, ոչ թե անոր համար, որ այդ բնակարանը միակ հարկն էր այն օրերուն, ուր կրնային քովե-քով գալ տարբեր հոսանքե մտավորականներ՝ եղբայրանալու համար հայ ժողովուրդի վերելքի փորձերուն շուրջ, այլ որովհետև ինք էր նման ընկերության մը առաջին չատագովներեն մին։

Արդարև, Հայաստանը մոտեն ճանչնալու գաղափարը ոգեորած էր մանավանդ Կոմիտասը։ Անմատչելի մնացած ինչ գանձե՞ր կային այնտեղ, ու ի՞նչ քաղցր բաներ հայ դեղջուկին շրթներուն վրա։ Առաջին փորձերեն հետո, զորս Սրվանձտյանց ըրած էր հայ ժողովուրդի հոգևոր աշխարհը դնելու համար, լույսին հանված գոհարները, որոնք անթեղված կմնային դեռ հոն։ Պետք էր զանոնք լույս աշխարհ բերել։

Կոմիտասի ոգեորությունը վարակեց Վարուժանն ալ։ Ինչ հրաշալի պիտի ըլլար, եթե, օրինակ, Սասունը երթային մոտեն ճանչնալ միասին, ու միասին ալ ստեղծեին հայ ժողովուրդի մեծ դյուցազներգությունը՝ հանձին Սասունցի Դավթի, ուր հարազատ Սասունն երևար իր դեռ պահպանած ավանդություններով։

Ոչ Կոմիտաս կրցավ մեկնել, ոչ ալ Վարուժան։ Կոմիտաս կաճապարեր Եվրոպա մեկնիլ, իսկ Վարուժան տարբեր հոգեր ուներ, որոնք կկաշկանդեին զայն այդ պահուն։

Միակ բախտավորները Տիգրան Չեռկիզյանն ու Փանոս Թերլեմեզյանն եղան։ Չեռկիզյան ման եկավ հայկական գավառին մեջ ու զարձավ հոգին լեցված երազներով, զորս պիտի փշրեր դահիճը տարի մը չանցած, Թերլեմեզյան Վան պիտի մնար, և իբրև նախկին հայդուկ, իր փառքի բաժինն ունենալու համար ապրիլյան մեծ դյուցազնամարտին մեջ, Վասպուրականին ժողովուրդին հետ ինք ևս ճողոպրելու այսպես թուրքին մանդաղեն։

* * *

Կոմիտաս չէր կրնար չաղդվիլ այս ընդհանուր ոգեորությենեն։ Անոնք որ իրեն հետ շփում ունեցան 1914 տարվան առաջին միսներուն՝ չեն կրնար հուզումով չհիշել իր գրեթե մանկական խանդավառությունը հույսերու և ճիգերու բռնկման այդ շրջանին։

Ոգեորության այդ վեց ամիսներու շրջանը առավելապես իր սեղանին առջև անցուց Կոմիտաս։ Մեկ կողմե կդաշնակեր իր գրի առած ժողովրդական երգերեն մեկ քանին, և մյուս կողմե կպարապեր ուսումնասիրություններով։ Իր ղլխավոր մտահոգությունը այն դյուցի մը դեկուցներն էին, զորս պիտի ըներ Փարիզի երաժշտական համաժողովին մեջ 1914 հունիսի սկիզբը։

Այդ օրերուն էր, որ հոդված մը գրեց, Թեոդիկի տարեցույցին համար, երաժշտարուժության գեպքերու մասին հայոց մեջ[4]։

Գիտեի, որ Կոմիտաս շարադրելու վրա է խաղերու մասին իր ուսումնասիրությունը, զայն դեկուցումի մը նյութ ընելու համար շուտով երաժշտական միջազգային համաժողովին մեջ։ Ինչպես ըրեր էի՝ «Ազավասարդ»-ի առաջին գրքին հրատարակության ատեն՝ «Հոոու գութաներդ»-ը գրել տալու համար Կոմիտասին, հոգևոր հրեշտակի մը պես կառչելով անոր՝ մինչև որ հոդվածն ավարտեց ու հանձնեց, նույնը ըրի այս անգամ ալ, գրել տալով հոդված մը հայ խաղերու մասին «Ազավասարդ»-ի երկրորդ հատորին համար, զոր խմբագրելու վրա էինք Վարուժանի հետ։

Եթե մեզ շարչարեր էր, մինչև «Հոոու գութաներդ»-ը հանձներ էր մեզի, Կոմիտաս այս անգամ ավելի դյուրավ ավարտեց հոդվածը։ Ուսումնասիրությունը պատրաստ ուներ, և ուրիշ բան չըրավ, բայց եթե հոդվածի վերածել զայն։ «Ազավասարդ»-ի երկրորդ դիրքը լույս պիտի չտեսներ, ավա՜ղ, ու վարդապետին ձեռագիրը պիտի մնար Վարուժանի Լուսավորչյան վարժարանի դզրոցին մեջ, չլանալու համար թանկագին ուրիշ նյութերու հետ մեկտեղ։ Ու հայ արվեստին չար բախտեն, խաղերու մասին իր ուսումնասիրությունն ալ երևան չելավ ցարդ, բացի անոր մեկ խտացումեն, որ նյութ կազմեց իր դեկուցման 1914 հունիսին Փարիզ, երաժշտական միջազգային համաժողովին առջև։

Ճիշտ է, որ Կոմիտաս հրապարակային ելույթներ ցանցառ ունեցավ ոգեորության այդ ամիսներուն։

Տարվան սկիզբը, հունվար 9-ին, ան իր մասնակցությունը բերավ Եսայան սանուց միության տարեկան ցերեկույթին իր քանի մը մենեղգներով։

---

[3] «Ազատամարտ», 1914 հունիս 4/17։

[4] «Յիշկություն երաժշտությանը» (մի էջ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի 2339 համար ձեռագրեն). «Ամենուն տարեցույցը», 1915, էջ 242—246։

Մարտ 4-ին ան մասնակցեցաւ ամերիկյան դեսպանատան մեկ երեկոյթին, դեսպան Մորգընթաուի հրաւերով, որ ամենեն ջերմ հիացողներեն մեկն էր Կոմիտասի։

Հաւանաբար այս երեկոյթին ակնարկելով է, որ վաղեմի ընկերս՝ Վարդան Ագկուլյան, Կոմիտասի խումբին երբեմնի ահաւոր բասը, վերջերս կգրեր ինձ Պոլսեն.

«Անգամ մը Պոլսո ամերիկյան դեսպան Պ. Մորգընթաու Շահմուրադյանն ու Կոմիտասը հրաւիրեց դեսպանատան մեջ տրված մեծ երեկոյթի մը, որուն մասնակցեցանք մենք ալ փոքրաթիվ երգչախումբով մը երգելով հայ ժողովրդական ու գեղջուկ երգեր։ Կոմիտաս վարդապետ հոն առաջին անգամ ըլլալով երգեց քրդական երգ մը՝ իր մեներգին ինքն իսկ ընկերակցելով դաշնակով ինչպես կրներ միշտ։ Պատերազմական նախարար էնվեր փաշա, և Թալեաթ պեյ, այն ատեն դեռ ներքին գործերու նախարար, որոնք ներկա էին, կունկնդրեին արևելյան այդ երգին, գրեթե խանդավառված։

Քիչ հետո, ապրիլ 20-ին (3 մայիս) Կոմիտաս վարդապետ, Փըթի-Շանի թատրոնին մեջ, որ իր նախընտրած սրահն էր, շատ հաջող համերգ մը տվավ, օրվան մեներգիչ ունենալով օր. Մ. Մուկաղյանը և Հայկ Սեմերճյանը, այս վերջինը իր հինգ սաներեն մին, որ հաճախ մասնակցած է իր համերգներու զուգերգներուն։

Պետք էր որ ան ընդհատեր սակայն ամեն աշխատանք, պատրաստվելու համար իր մեծ գրոհին։ Շուտով պարտավոր էր Եվրոպա մեկնիլ՝ գլուխ հանելու համար իր առաքելությունը որ երբորդը պիտի ըլլար 1901-են և 1906-են հետո։

III.—Կոմիտաս և հայ ժողովուրդի դատը

Ճիշտ այն օրերուն երբ հայ ժողովուրդը աշխարհի խղճմտանքին տարեր էր իր մոռցված դատը՝ Կոմիտաս ինքն ալ կպատրաստվեր Եվրոպայի առջև փռելու համար հայ ժողովուրդի հոգեկան գանձերը։

Հայ ժողովուրդը հաճախ էր բախելու դացեր Եվրոպայի դուռները։ Ան դացեր էր դարման աղերսելու իր տառապանքներուն համար, ճիշտ ծուռ, մուրացկանի մը պես։

Կոմիտաս Եվրոպա կերթար հպարտ։ Ան կերթար աշխարհեն հատուցում ուզելու հանուն հայ ժողովուրդի հոգեկան ստեղծագործությանց։

Ան երկիցս դացեր էր արդեն Արևմուտք, 1901-ին և 1906-ին։ Ու ամեն անգամ ալ փառքով էր դարձեր ետ, դափնի բերելով իր ժողովուրդին։

Գնահատական տողերը զորս Կոմիտաս 1912 դեկտեմբեր 25-ին Պոլսեն կուղղեր Զոպանյանին՝ հայ ժողովուրդին հոգեկան արժեքները Արևմուտքին ծանոթացնելու համար անոր թափած ջանքերուն առթիվ, որքա՜ն կպատշաճին նաև Կոմիտասի իր առաքելության։ «Դուն էիր առաջինը,— կգրեր Կոմիտաս իր այդ նամակին մեջ,— որ մեր նախնյաց ստեղծագործ հոգին թղթերով ու գրքերով նկարեցիր ու ցուցադրեցիր օտար աշխարհի մեջ քաղաքակրթության հարազատ դավակներին, որ մենք ևս իրենց շավիղն ենք բռնել, մենք ևս իրենց ճամփան ենք քալել, մենք ևս մեր ձեռքից լույս բռնել, և թեպետ ջանացել են դևերը փշել ու մարել մեր կյանքը, բայց փշողներն են խորտակվել ու մենք դեռ մոխիրների տակ առկայծել ենք՝ ապավինելով դիտության և կրթության, ու թեև մերն է եղել՝ իր արևելքի դավակներ, բայց մեր ձեռքեն դուրս է ելել ու Եվրոպան լուսավորել. արդ, քանի որ մեզ համար անծանոթ չէ մեր մտքի նախատիպը և կարողությունը, որ այժմ Եվրոպայից է որ մեզ լուսավորում է, ինչու չունենանք մեր իսկ լուսո ջահը՝ մեր ձեռքին։ Դուն էիր առաջինը, որ հրավիրեց հայի գեղարվեստական ստեղծագործությանց ծանոթացնելու քաղաքակիրթ աշխարհին...»[5]։

Ի՜նչ խանդավառությամբ Պոլսեն մեկնեցավ Կոմիտաս՝ մասնակցելու համար Միջազգային երաժշտական ընկերության համաժողովին, որ 1914 հունիսին գումարվեցավ Փարիզ։ Սույն ընկերությունը 1899-ին հիմնված էր Բեռլինի պրոֆեսոր Օսկար Ֆլայշերի նախաձեռնությամբ և մասնակցությամբ 20 երաժշտագետներու։ Կոմիտաս մեկն էր հիմնադիրներեն։

Փարիզի այդ տարվան համաժողովը մեկն էր եղեր ամենեն պատկառելիներեն։ Անոր կմասնակցեին մոտ 400 երաժշտագետներ՝ քաղաքակիրթ բոլոր ազգերեն։ Մերձավոր Արևելքի ժողովուրդներեն հայն էր միայն որ ներկայացված էր հոն հանձին Կոմիտասի։

Համաժողովին մեջ երեք դասախոսություններ կարդաց Կոմիտաս, երկուքը,—հայ խազագիտությունը և հայ գեղջուկ երաժշտությունը,— ըստ համաժողովին կանխոշոր ծրագրին, հայ երաժշտության ամանակի (temps), կշռի (mesure), շեշտադրության (rythme) և տաղաչափության (mètrique) մասին, ծրագրեն դուրս, համաժողովի անդամներուն մասնավոր խնդրանքով։

1914-ի Փարիզի համաժողովեն քիչ հետո Կոմիտաս իր տպավորությունները հետևյալ

[5] «Պատմա-բանասիրական հանդես», 1958, Ա, էջ 263—264։

կերպով ամփոփեր էր տիկ. Հրանուշ Շահպազին.

— Ափսոս որ մենք խոսող ժողովուրդ ենք, իսկ հազար խոսք ոչ մեկ գործ չի շիներ, մինչ մեկ գործը հազար կյանք կշինե. ամենեն ավելի զիս հուզեց այն բանը որ այդ օտար հեղինակավոր երաժշտագետները լսելով իմ բացատրություններս, հասկցան և համոզվեցան որ աշխարհի մեջ կա հայ երաժշտություն մը բոլորովին ինքնատիպ ու ինքնուրույն, այնպես՝ ինչպես հայ լեզուն և հայ կյանքը, մինչդեռ մեր ժողովուրդը դեռ կտարակուսի թե ինքը լեզու ունի, երաժշտություն ունի և կյանք ունի[6].

Համաժողովին մեջ ստեղծված խանդավառության անմիջական տպավորության տակ՝ Կոմիտաս Հրանուշ Շահպազին կանդրադառնար իր հետագա ծրագիրներուն.

«Ամբողջ մտատանջությունս է հասցնել թշակերտներ, որոնք դպրոցներու մեջ տեղ գրավեն, նվիրվին ազգային երաժշտության ուսումնասիրության, տարածեն ժողովուրդին մեջ հայ երաժշտության ոգին, որպեսզի ժողովուրդին մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնանա և անոր ազդեցության տակ ժողովուրդը թոթափելով իր թույլ պատյանը, մտնե վերակենդանացման շավղին մեջ։ Ինչքա՜ն բաղձալի էր ունենալ այս նպատակով առանձին վարժարան, որուն միջոցով մեծ արդյունք կարելի կըլլա ձեռք բերել։ Մեր մեջ երաժշտության վրա կնային իբրև հաճույքի և ժամանցի միջոցի մը վրա։ Բայց նախ՝ եկեղեցական տեսակետ երաժշտությունը ընդհանրանալով, առաջ կբերե ժողովուրդին մեջ մաքուր ջերմեռանդություն և սերտ համախմբություն եկեղեցիին շուրջը, իսկ եկեղեցիեն դուրս ազգային երաժշտությունը կտարածե հայրենի շունչ և միամիտ ու պարզուկ զգացումներ՝ գաստիարակվող սերունդին մեջ։ Մեկ հասկցված անկեղծ ձայն՝ հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը որ կարենա անկե սնունդ առնել, ինչ որ ժամանակներու գործ է, իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդուն կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարանը։

* * *

Ամեն անգամ որ Կոմիտաս գացեր էր աշխարհին պատմել գեղեցկությունները զորս հայ ժողովուրդը դրեր էր իր երգերուն մեջ՝ ուզեր էր այդ երգերեն նմուշներ ալ տալ։

Միջազգային երաժշտական սույն համաժողովը ևս գեղեցիկ առիթ մըն էր աշխարհի զանազան կողմերեն հավաքված երաժշտական համբավներուն քանի մը գոհարներ ճանչցնել հայ հոգևոր և գեղջուկ երաժշտություններեն։

Օտար այդ երաժշտագետները համաժողովի նիստին մեջ իրենք իսկ խնդրեր էին ծանոթանալ անոնց՝ տպավորված Կոմիտասի բանախոսություններեն։

Երաժշտական հավաքույթը զոր Կոմիտաս սարքեց Փարիզի հայ եկեղեցիին մեջ, հոգեգալստյան նախատոնակին առթիվ, նոր հաղթանակ մը եղավ իրեն և հայ երգին համար։ Բարեբախտություն եղավ իրեն համար որ այդ պահուն Փարիզ դտնվին քանի մը հայ երգիչներ և երգչուհիներ, ինչպես օր. Մարգարիտ Թաքյան, օր. Իսկուհի Գավառոդ, օր. Մանոնիկ Պերպերյան, Արմենակ Շահմուրադյան, Խաչիկ Միսքճյան, և մասնակցին երգեցողությանց իր հետ միասին։

Տպավորությունը եղած է աննախընթաց։ Համաժողովին առթիվ ուրիշ ազգերու երգեր ալ լսեր էին օտար երաժշտագետները՝ բայց ոչ մեկը անոնցմե կրցեր էր այնքան հմայել զիրենք որքան հայ երգերը։

Ինչպես Հրանուշ Շահպազ հիշած էր իր թղթակցության մեջ՝ երաժշտական այդ հավաքույթեն ելլելուն էր որ Վիեննայի պրոֆեսորներեն Ադլեր, վերին աստիճան հուզված, ըսած էր Կոմիտասին.

— Ձեմ գիտեր, թե Աստված եթե հայոց ձայներ չլսե, ալ որո՞ւն ձայնը պիտի լսե...

Իսկ Ֆինլանդիայի ներկայացուցիչ պրոֆ. Իլմարի Քրոն ավելցուցած էր.

— Աստված ձեր ժողովուրդին ազատություն և անդորրություն տա, որպեսզի կարենա ազատորեն սավառնել գեղարվեստի մեջ, և պիտանի բաներ ընել մարդկային կյանքին համար...[7]։

Խանդավառված էր Կոմիտաս ինքն ալ հայ երգերուն ձգած այդ տպավորությամբ։ Տղու մը պես հրճվեր էր հայ երգերուն տարած հաղթանակին ի տես։

Փարիզեն 1914 հունիս 22 թվականով Պոլիս՝ Արմինե Մելիքյանի և Նազենի Գեչեճյանի ուղղած իր նամակին մեջ ան կգրեր.

«... Մեր եկեղեցական երաժշտությունն ևս շատ հափշտակեց ու հիացուց բոլոր համաժողովականները. ըստ լրագրաց՝ համաժողովի համար կազմված համերգներեն ընտրելազույններեն մեկն եղավ։ Այնքան գրաղված եմ, որ նույնիսկ ժամանակ չունեցա ժողովելու մեր երաժշտության մասին գրվածքները թերթերեն. մեկին խնդրել էի, այն ևս ականջի տակովն էր ձգել և ոչինչ չէր արեր[8]։

[6] «Ազատամարտ», 20 հունիս 1914։

[7] «Ազատամարտ», 1914 հունիս 26/հուլիս 9։

[8] Դոքտոր Արայաք, Կոմիտասի 1914—1916 թվականների նամակներից, «Գրական թերթ», 1965, թիվ 13։

Նախատոնակի այդ երեկոն իր հմայքը շարունակեր էր պահել տարիներ ետքն ալ։ Անոնք որ ներկա եղեր էին Փարիզի հայ եկեղեցվո այդ կիրակմուտքին՝ զայն պիտի չմոռնային այլևս երբեք։

Ավելի քան երկու տասնամյակ հետո, պրոֆ. Կուրդ Սաքս, 1935 հոկտեմբեր 27-ին, Կոմիտասի դագաղին վրա խոսած իր դամբանականին մեջ կրսեր.

«Առաջին անգամ չէ, որ կտեսնեմ այս եկեղեցին։ Ան իմ մեջս անջնջելի հիշատակը 1914 տարվան հունիսյան իրիկուն մը, համաշխարհային ազետին պայթելեն քանի մը շաբաթ առաջ։ Փարիզ համաժողովի մը հրավիրած էին մեզ՝ անդամներս երաժշտաբանական միջազգային ընկերության, որուն անդամ էր նաև հանգուցյալը։ Ու հնազանդած էինք այդ հրավերին, սիրտերնիս լեցուն այն ուրախությամբ, զոր միևնույն նպատակին հետապնդման համար աշխարհիս բոլոր անկյուններեն վազած եկած ըլլալու զգացումը կու տա մարդոց։ Ու ինծի կթվի թե՝ նորեն ահա կտեսնեմ իմ առջևս Կոմիտաս վարդապետը, այդ միախառնումը քահանայական վեհության և մանկական բարության։ Կտեսնեմ ինքը որ երկու ձեռքերն ինծի կերկարե ու կրսե իմ մայրենի լեզվովս. «Եկե՛ք, եկե՛ք մեզ հետ հոգեգալուստը տոնելուս։ Ո՞վ պիտի կարենար դիմանալ այդ ձայնի շեշտին և այդ աչքերու փայլին։ Եկանք հոս, ու լսեցինք հայ եկեղեցական երաժշտությունը, ինչպես որ անիկա զայն իրականացուցած էր իր հետևորդներուն հետ։ Ով որ այդ արարողության ներկա է եղած, երբեք պիտի չկրնա զայն մոռնալ։ Դեռ աչքերուս առջև են երգիչներն ու երգչուհիները՝ ոսկեզօծ ծիրանիով զգեստավորված, ու դեռ կլսենք երգասացությունը իր զմայլելի ելևէջներով։ Ու այդ ինքա՞ն խանդավառությամբ երգված կրոնական երգեցողության ետին, կզգայինք մեծ ոգևորիչը որ իր ամբողջ սերը տված է այդ գործին և որ անոր ծառայած է անխոնջ հետապնդողին ըռնողությամբն ու ստեղծագործ երաժիշտին փափկազգացությամբը։ Եթե մինչև այն ատեն քանի մը մասնագետներ միայն սքանչացած էին Կոմիտաս վարդապետին վրա, այդ օրեն հետո միջազգային երաժշտաբանությունն է որ մոտեն հետևեցավ անոր աշխատության, որ անոր նոանոր իրեն օրինակ առավ և որ զայն երբեք պիտի չմոռնա»[9]։

Իսկ Ամեդե Գասթուե, ֆրանսական երաժշտաբանական ընկերության նախագահը, կրսեր նույնպես Կոմիտասի դագաղին վրա.

«1914-ի գարնան, Կոմիտաս վարդապետ կրկին եկավ Փարիզ, մասնակցելու համար երաժշտաբանական միջազգային համաժողովին, ուր իր ըրած զեկուցումները կարևոր տեղ մը պիտի բռնեին։ Հուզումով կհիշենք այն զմայլելի հոգեղեն երգեցողությունները, զորս վարեց այս եկեղեցիին մեջ, ուր եկած ենք անոր աղոթելու իր հիշատակին համար»[10]։

Ֆրեդերիկ Մակլեր, ինքն ալ, պիտի անդրադառնար տարիներ հետո այդ օրերուն ու պիտի ըսեր իր «Երաժշտությունը Հայաստանի մեջ» գրքի էջերեն.

«1914 թվին, Փարիզի երաժշտական համաշխարհային համաժողովին մեջ, ուր հավաքվեր էին տիեզերքի գլխավոր երաժշտագետները, Կոմիտաս վարդապետ հայ ժողովրդական և հոգևոր երգերու համերգ մը տվավ, հիացում առթելով ներկա երաժշտական հեղինակությանց։ Ժողովրդական երգերը, ինչպես և արորի, խոփի, գութանի երգերու մասին անոր տված դասախոսությունները, պետք է ըսել, համագումարին նիստերեն ամենեն թանկագինը եղան։ Երբ Կոմիտասը դաշնամուրին մոտ նստավ մեղմորեն երգելու, ունկնդիր հասարակությունը քարացած մնացած էր լուռ, և այնտեղ տիրեց այն վեհապանծ հմայքը, այն գերագույն պարզությունը՝ որ կրզիչի հայկական երաժշտությունն։

Ռուս անվանի երգահան Թոմաս Հարտման Կոմիտասի մասին 1919-ին Թիֆլիս կատարած իր մեկ բանախոսության ընթացքին հատված մը կարդաց նամակ մը ղրի իրեն ուղղած էր բժշկապետ Առաքել Օհանյանց, պատվական հայ մը որ ֆրանսերենի թարգմաներ էր Կոմիտասի ըրած երկու դասախոսությունները համաժողովին մեջ։ Բժիշկ Օհանյանց իր նամակին մեջ հետևյալը կգրե 1914-ի համաժողովի օրերուն Կոմիտասի ստեղծած մթնոլորտին մասին.

«Նորից հանդիպեցա նրան 1914 թ., երբ նա եկած էր Փարիզ համաշխարհային երաժշտական համագումարին մասնակցելու համար։ Անհունորեն երջանիկ էի համարյա ամեն օր նրան հանդիպելու հայտնի երգչուհի օր. Մարգարիտ Բաբայանի տանը, որ հայ երաժշտության անխոնջ մշակն ու տարածողն է Արևմուտքում։ Շնորհիվ Հայր Կոմիտասի, օր. Մ. Բաբայանի և նրա երկու աշակերտների՝ պ. պ. Մուզունյանի և Շահմուրադյանի՝ հայ երաժշտությունը անասելի ընդունելություն գտավ համագումարին։ Դրան մեծապես նպաստեցին Կլոդ Դեբյուսին, մեծահայտնի Ռոմեն Ռոլանը, անմահ երաժշտա-գրական վեպի՝ Ժան Քրիստոֆի

[9] «Ապագա», 1935 նոյեմբեր 10։

[10] «Ապագա», 1935 նոյեմբեր 3։

հեղինակը, Լուի Լալուան՝ մեծարժեք քննադատը և Դեբյուսիի կենսագրողը և ուրիշ շատ անվանի ֆրանսացի երաժիշտներ և երաժշտագետներ։

«Այս եղավ 1914 թ. հունիս և հուլիս ամիսներին։ Հայր Կոմիտասը գրավել էր ամբողջ համագումարի ուշադրությունը իր դասախոսություններով հայ երաժշտության մասին, ներկայացնելով նրա ծագումը, նրա տեսակն ձայն առ ձայն ոճի բեղմնավորումը, որ նա գրած էր հին հայկական նոթագրության մեջ, և իր երգահանդեսներով։

«Փարիզի ժամանակակից երաժշտական կյանքին մեջ նրա հաջողությունը ամենացայտունը եղավ։ Այդ օրերի թերթերը և ամսագիրները, թե՛ Ֆրանսիայի և թե՛ օտար երկիրների, վկա են նրա անխնայելի հաջողություններին։

«Համեստ Կոմիտաս վարդապետը հրճվում էր ոչ այնքան իր հաջողության, այլ հայ երաժշտության փառաբանության համար։ Նա խորին գոհունակությամբ տեսնում էր, որ իր տոհմիկ երաժշտությունը՝ իր նվիրական երջանկությունը, ամբողջ համագումարի համակրությունը և սերը գրգռեցրել էր։ Այդ հաջողությունների օրերին՝ իր սիրած, մոտ բարեկամների շրջանակում մասնակից էր անում նոցա իր նվիրական երազներին։ Նա մեծ հույս ուներ, որ համագումարի այդ հաջողությունները աչքը բանան մի շարք մարդոց, որ կարող էին նպաստել իր երազի իրականացման՝ Պոլսում հայկական երաժշտանոց (կոնսերվատորիա) բանալու գործում։ Նա երազում էր աշակերտների մի շարք պատրաստել, որոնք կարողանային նրա գործը շարունակել և որոնց նա կարող էր մատակարարել իր գիտության պաշարը ու փորձառությունը ժողովրդական երաժշտության ապագա զարգացման գործում»[11]։

Օր. Մարգարիտ Բաբայան, Կոմիտասի անզուգական հիացողն ու աշխատակիցը, պիտի գրեր ինքն ալ տարիներ հետո համաժողովի օրերուն ակնարկած ատեն.

«Թացի այդ դասախոսություններից, որտեղ Կոմիտասը երևան եկավ իբրև դասախոս, երգիչ և նվագող (հովվական սրինգ), մեզ հաջողվեց երաժշտական հոդեոր երգահանդես կազմակերպել Փարիզի հայոց եկեղեցում, որին տպավորությունը ահագին եղավ։ Տարիներ հետո, հանդիպելով այդ համագումարին ներկա եղած՝ մեծանուն ֆրանսական և օտար երաժիշտներին, բոլորը հիացմունքով ու զմայլանքով հիշում էին վարդապետի անմոռանալի զեղարվեստը[12]։

Հանգուցյալ ռումեն կոմպոզիտոր Քոսթանթին Բրայիշոյու, որ ֆոլկլորային երաժշտության մասնագետներեն մեկն էր և որ մասնակցած էր 1914-ի Փարիզի երաժշտական համաժողովին, զմայլանքով կվերհիշեր Կոմիտասի տեսությունները ժողովրդական ստեղծագործության մասին համաժողովին մեջ, և դայն կնկատեր ռահվիրաներեն մեկը ֆոլկլորային երաժշտության՝ որ իր խանձարուրին մեջ էր դեռ այն օրերուն։ Բրայիշոյու, որ նույնպես ներկա եղած էր հայ եկեղեցվո նախատոնակին, հիացմունքով կհիշեր անոր թողած բացառիկ տպավորությունը։ Այդպես ալ արտահայտվեցավ երբ հրավիրեցինք զինքը 1930 հունիսին նախաբանն ընել Թուքբեշի ռադիոյին մեր կազմակերպած հայ երգի համերգին։ Իր ճառը՝ զոր ինծի հանձնեց՝ զժբախտաբար կորսվեցավ ուրիշ այնքան թանկագին նյութերու հետ մեկտեղ։

* * *

Հայ ժողովուրդը անգամ մը ևս հպարտ կնայեր այսպես Եվրոպային։

Երեկվան մուրացիկը չէր ան հիմա՝ որ մեծատուններու դուռներուն առջև ման կու գա ափը երկարած։

Իր արդար տեղը կպահանջեր ան հիմա բոլոր այն ազգերու կարգին որոնք իրենց հոգին ճմլեր էին հանուն քաղաքակրթության։

Շնորհ մը պիտի չըներ ուրեմն Եվրոպան հայ ժողովուրդի կողքին կանգնելով իր վարած նոր դատին մեջ։

Կոմիտաս գացեր էր ինքն ալ հիշեցնելու քաղաքակիրթ ժողովուրդներուն թե աշխարհ պիտի չդղջա ճամբա բանալով հայ ժողովուրդին։

---

[11] Մարգարիտ Բաբայան, Թովմաս Հարտման և Կոմիտաս վարդապետ, «Անահիտ», 1935, թիվ 1—2, էջ 78։

[12] «Անահիտ», 1935, թիվ 1—2, էջ 76։

(Շարունակելի)

Ս. ՔՈՂԱՆՋՅԱՆ

ՄԵՐ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ *

Անկյուրիա.— Ձեռագրերով հարուստ էր Գաղատիայի հայությունը։ 20-րդ դարի սկզբին հայերեն ձեռագրերը մեծ մասամբ կենտրոնացված էին Կարմիր վանքում։

1915 թվականի ապրիլի 30-ին էր. աքսորական հայ մտավորականների մի խումբ, որ ճանապարհ էր հանված Կոստանդնուպոլսից, մի պահ իր հանգրվանն էր գտել Անկյուրիայի ս. Աստվածածնի վանքում, ուր նույն օրը տեղի հայ գաղութը նշելու էր Համբարձման տոնը։ Այդ օրը Անկյուրիայի հայության տոների տոնն էր, քանի որ երգելու էր աքսորականների խմբին մաս կազմող՝ Կոմիտաս վարդապետը։ Ինչպես նկարագրում է իր հուշերում, հայտնի հրապարակագիր Բյուզանդ Քեչյանը, Կոմիտասին լսելու համար եկել էին նույնիսկ օտարներ։ Հայ մտավորականների խումբը, նույն օրն իսկ Անկյուրիայի հայությանը հրաժեշտ տալուց առաջ, չմոռացավ այքն անցնելու «Գաղատիո վերջին հայ առաջնորդին՝ Կյուլեսերյան Բարգեն եպիսկոպոսին մեծ խնամքով կարգի դրած, նոթագրած և երկաթյա սնդուկներու մեջ պահած կարգ մը շատ հին ձեռագիրները»[187]։

Մեր ժողովուրդի շողշողուն աստղերը հանդիսացող աքսորական մտավորականները անգամ այդ դժնդակ օրերին չմոռացան ըմբոշխնելու հայերեն հնագույն ձեռագրերի հմայքը և անխախտ հավատքով դեպի հայության ապագան մեկնեցին իրենց վերջին համբույրը դրոշմելով հայ հանճարի արգասիքը հանդիսացող այդ նշխարներին։ Ո՛վ դիտե ինչքան էր հմայված այդ վսեմ պահին Կոմիտասի հոգին, ի տես ձեռագրերում ցանցնված խազերին, և որոնց համր լեզուն ինք խոստացել էր շուտով բացել, այդպիսով փարատելու համար դարերի մշուշը ու համառորեն քարացած մնացած գաղտնիքը, եթե վերադտներ միայն երբեմնի իր անդորրը...

Ու քարավանը շարժվեց... և քչերին միայն բախտ վիճակվեց վերադառնալ սպանդից, այդ քչերի հետ էր նաև Կոմիտասը, սակայն ի՞նչ փույթ, նա թեև կար, սակայն վեր էր ածվել կենդանի դիակի...

Հայ աքսորականների խմբին նման դժխեմ ճակատագիր վիճակվեց նաև Անկյուրիայի հայերեն գրչագրերին, այն տարբերությամբ միայն, որ նրանցից և ոչ մի ձեռագիր հնարավոր չեղավ ցարդ փրկել...

Մենք հիշատակություն ունենք այն մասին, որ Անկյուրիայի ձեռագրերի մի մասը անցյալում, այսինքն նախքան Բարգեն

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Ա Ա Բ—Գ—Դ-ից, Ե—Զ—Է-ից և 1966 թվականի Մ Ա Ը—Թ—Ժ-ից։

[187] Թեոդիկ, Ամենուն տարեցույց, ԺԶ տարի, 1922, Կ. Պոլիս, էջ 44։

արքեպ.-ի կողմից ցուցակագրվելը, փրկվել էր վատթար վիճակից և ձեռարկվել նրանց ցուցակագրմանը։ Ինչպես երևում է մի հիշատակագրությունից գրված 1899 թվականի հոկտեմբերի 5-ին, Ստեփան Մխիթարյան անունով մի անձ շուրջ 60 ձեռագրեր էր հանել տվել մեծ դժվարությամբ Անկյուրիայի ս. Նշան եկեղեցու դանձարանից։ Ձեռագրերը մինչ այդ պահվում էին «աղտոտ և վրան բաց ու ծիռած սնտուկի մը մեջ, ուր լխկելու աստիճան խոնավութենն և ճճիներու ոստայնեն բորբոսած» էին։ «Հանել զկնի ձեռնարկեցի զանոնք մեկիկ մեկիկ ցուցակագրել խստաս կորնչելե ազատելու»[188] համար, գրում է նույն Ստ. Մխիթարյանը։

Անշուշտ նույն անձն է, որ դեռ 1900 թ. Կ. Պոլսի «Բիւրակն» հանդեսում Ս. Մ. սկզբնատառերով (իմա Ստեփան Մխիթարյան) հրատարակել է «Էնկիւրիի հայ. ձեռագիրներու»[189] խորագրով մի հոդված, ուր դարձյալ խոսում է 60 ձեռագրերի փրկության մասին։ Նա ի մեջ այլոց գրել է հետևյալը. «... Շատ արգահատելի վիճակի մը մեջ գտանք 60 օրինակ ձեռագիրներ, բոլորը եկեղեցական մատյաններ են որոնց աղտն ու փոշին մաքրելե վերջ, ցուցակագրած եմ Վիեննական հայրերու և Տ. Տրդատ եպս. Պալյանի կողմեն ցուցակագրման համաձայն։ Հոդվածագիրը շարունակության մեջ խոստանում է հետագայում նույն «Բիւրակն»-ում հրատարակելու ամբողջ ցուցակը, մինչ այդ նա հրատարակում է այն համառոտ կերպով և նկարագրում միայն 15 ձեռագրեր, որոնց մեծ մասը դտանք նկարագրված ընդարձակորեն Կյուլեսերյան ցուցակում։ Ինչ վերաբերում է մնացած 45 գրչագրերի համառոտ ցուցակին և կամ խոստացված ընդարձակ ցուցակին, մենք չկարողացանք գտնել «Բիւրակն»-ի հաջորդ համարներում։

Բարդեն արքեպ. Կյուլեսերյանը իր կազմած Անկյուրիայի ձեռագրացուցակում գրել է, որ 1910 թվականին ս. Նշան եկեղեցուց ձեռագրեր է տեղափոխել Կարմիր վանքի մատենադարանը։ Դարձյալ հիշյալ ցուցակում, կազմողի կողմից արված նշումներից երևում է, որ ս. Նշան եկեղեցուն պատկանող գրչագիրներից շուրջ 55 թիվը եղել է ձեռագիր։

Սակայն, Անկյուրիայի կորած մեր ձեռագիր ժառանգության համար մեծ բարեբախտություն եղավ այն, որ Բարդեն աթոռակից կաթողիկոս Կյուլեսերյանը դեռևս Գաղատիայի թեմի իր առաջնորդության ընթացքում (1909—1913 թթ.) հատուկ խնամքով կազմել էր Անկյուրիայի Կարմիր վանքի և նրա շրջականերում գտնվող 323 հայերեն ձեռագրերի գիտական ցուցակը։

Սակայն բավական չէր միայն ցուցակագրելը, անհրաժեշտ էր մանավանդ փրկել այդ ձեռագրացուցակը, չէ որ մի շարք վայրերում ոչնչացան ոչ միայն ձեռագրերը, այլև նրանց ցուցակները։ Դիպվածի բերումով է, որ փրկվեց Բարդեն Կյուլեսերյանի կյանքը։ 1913 թ. աշնանը Կյուլեսերյանը իրեն հանձնարարված պարտականությունը կատարելու ճանապարհին, գալով իր ծննդավայր Այնթապ քաղաքը, իր եղբոր մոտ պահ դրեց իր երկարամյա տքնաջան աշխատանքի արդյունք եղող ձեռագիր աշխատությունները, որոնց մեջ էին գտնվում նաև Անկյուրիայի և Ղալաթիայի ձեռագրացուցակները։ Շուտով նրա կյանքը փրկվեց բժշկական գործողության ենթարկվելու, ինչպես նաև պաշտոնով Ամերիկա տեղափոխվելու հետևանքով։

Սակայն ծանր ողբասական էր վիճակված տեսնելու, ինչպես Կյուլեսերյանի հարազատներին, այնպես էլ Անկյուրիայի ձեռագրացուցակին։ Այս առիթով, ի՞նչպես կարելի է չվերհիշել Կյուլեսերյանի եղբորորդու՝ Վահե Ն. Կյուլեսերյանի կողմից հիշյալ ձեռագրացուցակի փրկությանը նվիրված ուշագրավ հոդվածը, որի ներկայացրած շահեկանության համար ստորև բերում ենք այն հապավումներով։ Վահե Ն. Կյուլեսերյանը իր եղբայրների հետ երկար դժվարությունների հաղթահարելուց հետո, կարողացել է ազատել իր հորեղբոր գործերը և իր ու հարազատների անունը կապել մեր նորագույն ձեռագրերի փրկողների պատմության հետ։

Ինչպես նշվեց, Բարդեն եպիսկոպոս Կյուլեսերյանը, Անկյուրիայից Այնթապ գալով, իր ներսես եղբոր տանը թողել էր միջակ մեծություն ունեցող չորս սնդուկ գործերը՝ տպագիր և ձեռագիր։ Նրա արտասահման մեկնելուց հետո, 1915 թ. հուլիսին սկսվեց Այնթապի հայության տարագրությունը։ Տարագրվողներից ոմանք իրենց ունեցվածքը և գրքերը սնդուկների մեջ դնելով հանձնում էին ի պահ Ամերիկյան կենտրոնական կոլեջի և ս. Աստվածածին եկեղեցու դեկավարությանը։ Սրբազանի հարազատները ի վերջո որոշեցին վերջինիս սնդուկները տանել և պահել ս. Աստվածածնի ավագ խորանի հետևում գտնվող գետնափոր մի թաքստոցում, և որը եկեղեցու պաշտոնյաների կողմից համարվում էր անմատչելի և նրանց ասելով. «սատանան իսկ այն գտնելու հնարավորություն չունեցող մի վայր»։ Չնայած հիշյալ սնդուկները սրբազանի հարազատները նա-

[188] Բարդեն սրբազան կաթողիկոս, նշված աշխատությունը, էջ 870—872։

[189] «Բիւրակն», 1900 թ., № 7, էջ 101—103։

խապես մի տեղում թաղել էին, սակայն այն ապահով չհամարելով, նրա երեք եղբորորդիները շուտափույթ կերպով տարել ու իջեցրել էին վերոհիշյալ ապահով համարված վայրը։

Սակայն շատ շուտով սրբազանի եղբայրը իբրև պղնձագործ իր ընտանիքով տարագրությունից աղատվելով, որոշում է եկեղեցում թաքցրած հիշյալ սնդուկները տուն բերել։ Գնալով եկեղեցի, պարզվում է, որ թուրք պաշտոնյաները անմատչելի համարված վերոհիշյալ վայրից, ամեն ինչ դուրս էին բերել և չորս կողմ սփռելով զբաղվում էին նրանց ցուցակագրման աշխատանքներով։ Վահեն, որը եկեղեցի էր եկել իր հորեղբոր սնդուկները գտնելու հույսով, սահմռկում է ի տես այդ տեսարանին։ Վերջինս երբ սարկավագի կողմից թուրքերին դովացուցիչ օշարակ բերելու ուղարկվեց, վերադարձին նրան կարգադրվեց սնդուկները տանել ավանդատուն և նա հնարավորություն ունեցավ դրանք զետեղել ու արդեն իսկ այնտեղ լցված հարյուրավոր սնդուկների միջև, իրարից անջատ։ Աշխատանքներից հետո քահանան և սարկավագը եկեղեցու դուռը կողպելով բանալին հանձնեցին թուրք պաշտոնյաներին և փոխարեն ստացան ստորագրված թղթի մի կտոր։

Երեք օր հետո, բոլոր սնդուկները և կապոցները թուրքերի կողմից աճուրդի էին հանված, իսկ հայերին արգելված էր այնտեղ մոտենալը։ Միակ հույսը մնում էր հասկացվել շենքի գիշերային պահապան նշանակված թուրք ծերուկի հետ։ Շուտափույթ կերպով Կյուլեսերյան եղբայրները որոշում են այդ գիշերն իսկ պահապանի մոտ ուղարկել իրենց ամենակրտսեր եղբոր՝ 16-ամյա Բաբգենին։ Վերջինս նույն երեկոյան մոտենալով պահապանին ասում է.

«Աղա, մենք նպարավաճառի խանութ մը ունինք և թուղթի պակաս, կուզես քեզի քանի մը դրուշ տամ և ներս մտնելով մաս մը թուղթ առնեմ։ Եվ պահապանի պատասխանը առանց սպասելու նա ասաց. «Ահա սա փաքեթ մը ծխախոտն ու դրամը։»

«Այս դրամը քիչ է, շատ չ՚առնես հա՞» պատվիրելով՝ բարի կըլլա դուռը բանալ ու ներս անցնել Բաբգենը։ Վերջինս իրեն բացատրված տեղում գտնում է ձեռագրերի սնդուկը և պարունակությունը տոպրակի մեջ դնելով, դուրս է հանում. և այն ոչ թե ուղղակի տուն է տանում, այլ նախապես որոշվածի համաձայն, թողնում է մի հայ ընտանիքի տունը։ Հետևյալ օրը, Կյուլեսերյան ընտանիքի բոլոր անդամների կողմից հնարավոր եղավ ձեռագիրները փոքր ծրարների վերածելով փոխադրել տուն։

Հապիվ մի շաբաթ էր անցել վերոհիշյալ նշանավոր օրից, երբ եկեղեցին դինվորական կայանի էր վերածվել, իսկ վերոհիշյալ թաքստոցը՝ զուգարանի (ՏԵՄԻՇի)։

Հաջորդ 4 տարիների ընթացքում այս ձեռագիրները բազմաթիվ անգամներ թաղվեցին հողի տակ, թաքստոցից թաքստոց տեղափոխվեցին, կասկածանքի ենթարկվեցին և այլն։ Պատերազմի ավարտից հետո ձեռագիրներն էլ իրենց թաքստոցներից դուրս հանված էին և օդ ու արև էին տեսնում։

Սակայն 1920 թ. ապրիլին, Այնթապի ինքնապաշտպանության ժամանակ, Կյուլեսերյան ընտանիքի անդամները կրկին ստիպվեցին թաղել ձեռագիրները։ Քեմալականները. երբ 1921 թ. գրավեցին Այնթապը, մնացած բոլոր հայերը որոշեցին թողնել քաղաքը։ Ոչնչացումից փրկված ձեռագրերին նոր աղետ էր սպառնում։ Այս առթիվ Վահե Կյուլեսերյանը պատմում է հետևյալը.

«Անելը ինձի համար ձեռագիրներն էին։ Չէի կրնար տունը ձգել. ատիկա հարյուրին հարյուր կորուստ կնշանակեր. հետս տանիլն ալ ուներ իր դժվարությունները։ Բռնվելու պարագային՝ կոչնչանային թե մենք և թե ձեռագիրները։ Երկրորդ միջոցը ձեռագիրներուն համար ավելի ապահով զգալով՝ զանոնք դրի հին երեսով սնդուկի մը հատակը, վրան տախտակ դամեցի ու հին թուղթերով ծածկեցի. մեր հագուստեղենն ալ դրի տարտղնած և խառնիխուռն։

Սահմանագլուխի խուզարկության վայրը սահմռկեցուցիչ էր։ Զինյալ դինվորներու խումբեր ամեն ինչ վար առնել կուտային։ Վայրը բազարի տեղ մը եղած էր. կանչվրտուք, նախատինք, հայհոյություն միայն լսելի էին, կին թե այր կխուզարկվեին անխնա...»։

Թեև պաշտոնյաների գլխավորին հնարավորություն ունեցան կաշառելու, սակայն այդ խստագեմ մարդու դեմքը ավելի ևս խոժոռեցավ, և նա հրամայեց, որպեսզի Կյուլեսերյանները բաց անեն իրենց ընտրերը։

«Բարեբախտաբար մարդը չկրցավ զանազանել սնդուկի ներսի խորության տարբերությունը դուրսի բարձրության հետ, և թանկագին ձեռագիրները այս անգամ ևս ազատեցան դաժան քննիչի մը խստություններեն. այլապես մեր մուխը մարած էր և ձեռագիրներն փճացված անպայման։

Օր մը եկա Հալեպ հասած էինք։

1923 թվի սեպտեմբերին, հորեղբայրս՝ Բաբգեն կաթողիկոս Կուլեսերյան—այն ատեն եպիսկոպոս—Հալեպ եկավ Ամերիկայեն, այն ձեռագիրները, դուրս ինքը մեր տունը ձգած էր Այնթապ, ճիշտ տասը տարիներ ա-

ռաջ, անվթար հանձնեցի իրեն՝ թանկարժեք նվերի մը փոխանակ»[100]։

Այսպիսով հնարավոր եղավ արյան և մոխրի միջով փրկել մի հարուստ ձեռագրական գանձարանի անգին հաշվեմատյան, և որը ի տարբերություն մեր բաղմաթիվ իսպառ կորսված մատնված գրչության կենտրոնների, կոչված էր հայելին հանդիսանալու Անկյուրիայում մեր երբեմն ունեցած ձեռագրական հարստության։ Ահա թե ինչու հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը՝ Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանցը իր կաթողիկոսության օրերին ժամանակավորապես մեկ կողմ թողնելով նույնիսկ իր կոթողական գործերի հրատարակումը, մեծ նախանձախնդրություն էր ցուցաբերել ինչպես Անկյուրիայի, այնպես էլ 1915 թ. արհավիրքներին կորած և ոչնչացած հայերեն ձեռագրերի ցուցակները տպագրության հանձնելու ուղղությամբ։ Եվ այսպես, Անկյուրիայի փրկված ձեռագրացուցակը Վեհի կենդանության օրոք արդեն իսկ տպագրվում էր, սակայն այն լույս տեսավ ուշացումով, հաղիվ 1957 թ.։ Նրա հրատարակումը կարևոր ավանդ հանդիսացավ ինչպես մեր ձեռագրագիտության, այնպես էլ մատենագրության և առհասարակ հայագիտության համար։

Այժմ, քանի որ Անկյուրիայում երբեմն պահվող մեր ձեռագիր գանձերի արժեքը բացահայտող միակ հավաստի աղբյուրը հանդիսանում է հիշյալ ձեռագրացուցակը, ուստի անհրաժեշտ ենք գտնում ստորև շատ համառոտ կերպով խոսելու 323 գրչագրեր երբեմն բովանդակող այդ հոյակապ հավաքածուի մասին։

Բարգեն աթոռակից կաթողիկոսի «Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց և շրջակայից» փրկված գործում կան նկարագրված 323 գրչագրեր, որից 309-ը պահվում էին Անկյուրիայի Կարմիր վանքում, մեկը՝ անհատի մոտ, իսկ 13-ը՝ հիմնականում Սթանող գյուղի եկեղեցում։ Անկյուրիայի ձեռագրերը իրենց հնությամբ մոտավորապես հետևյալ պատկերն են մեզ ներկայացնում. ԺԱ դարից՝ 1 ձեռագիր, ԺԲ—ԺԳ դարերից՝ 3, ԺԳ դարից՝ 5, ԺԴ դարից՝ 13, ԺԵ դարից՝ 15, ԺԶ դարից՝ 16, ԺԷ դարից՝ 91, ԺԸ դարից՝ 83, և ԺԹ դարից՝ 22. կան նաև բաղմաթիվ ձեռագրեր նկարագրված, որոնց ժամանակը ցուցակում չի նշված։

Ձեռագրերի մեծ մասը գրված է Անկյուրիայում, սակայն կան նաև բաղմաթիվ գրչագրեր, որոնք գրվել են Հայաստանում և հայկական մի շարք դաղթավայրերում։ Այսպես. Էջմիածնում, Կարինում, Բաբերդում, Մեծոփա վանքում, Սեբաստիայում, Եվդոկիայում, Ամասիայում, Կեսարիայում, Ուրֆայում, Թոմարծայում, Պրուսայում, Ղոնիայում, Կուտինայում, Գարահիսարում, Ամիդում, Սիսում, Դրապարկի և Սկեռայի վանքերում, Զեյթունում, Լամբրոնում, Սիվրի Հիսարում, Սպարթայում, ինչպես նաև Կոստանդնուպոլսում, Երուսաղեմում, Հալեպում, Կաֆայում, Կամենիցում, Լվովում, Քիլիսում և այլ վայրերում։

Անկյուրիայի գրչագրերը իրենց բովանդակությամբ մոտավորապես կարելի է բաժանել հետևյալ կերպ։ Աստվածաշունչ՝ 7 ձեռագիր, Ավետարան՝ 36, Սաղմոսարան՝ 10, Ճաշոց՝ 11, Տոնապատմուռ՝ 1, Մաշտոց՝ 29, Գանձարան՝ 10, Ճառընտիր՝ 2, Տաղարան՝ 2, Տոնացույց-Ավետարանացույց՝ 3, Ոսկեփորիկ՝ 1, Խորհրդատետր-Պատարագամատույց՝ 7, Ժամագիրք՝ 4, Վարք Սրբոց՝ 2, Հայսմավուրք՝ 4, Պարզատումար՝ 4, Ժողովածու տարբեր նյութերի՝ 46, Մեկնություն՝ 35, Քարոզգիրք՝ 39, Շարակնոց՝ 19, Բժշկարան՝ 3, Բառարան՝ 4, Քերականություն՝ 3, Խրատականք՝ 1, Վեց Հաղարյակ՝ 1, Աշխարհացույց՝ 2, Կանոնագիրք-Դատաստանագիրք՝ 2, Գրիգոր Նարեկացու «Ողբերգության Սատեան»՝ 2, և այլն, և այլն։ Կային նաև հայ բաղմաթիվ հեղինակների գործերից, այդ թվում՝ Ն. Շնորհալու «Հիսուս որդին» և «Ողբ Եղեսիոյ»-ն, Գրիգոր Տաթևացու քարոզգրքերն ու նրա «Գիրք հարցմանց»-ն, Թովմա Մեծոփեցու պատմությունը և այլն։ Հավաքածուից մաս էին կազմել նաև թարգմանական բաղմաթիվ աշխատություններ, այդ թվում՝ Կյուրեղ Երուսաղեմացու, Դիոնիսիոս Արիսպագացու, Հովհան Ոսկիբերանի և այլոց գործերը։

Պատկառելի հնություն ունեցող գրչագրերից անհրաժեշտ ենք գտնում հիշատակել հետևյալ ձեռագրերը։ 1176 թվականին գրված «Հաւաքումն Մեկնութեանց Եւթանեցունց Թղթոցն Կաթողիկեայց» գրչագիրը, որը ապահովաբար պատկանում էր սույն գործի թարգմանիչ Ներսես Լամբրոնացու գրչին և

[100] Սույն արժեքավոր նկարագրականը պարունակող Վահան Ներսես Կյուլեսերյանի հոդվածը «Մարգեն Կաթողիկոսի ձեռագիրներուն և Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռագրաց ցուցակին ազատագրումը» վերնագրով. լույս է տեսել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրի 1951 թվականի № 7—8-ում՝ 227—229 էջերում։ Նկատի ունենալով, որ հիշյալ համարը մեզ չհաջողվեց գտնել Երևանի գիտական գրադարաններում, ուստի «Էջմիածին» ամսագրի խմբագրության միջոցով հնարավոր եղավ ստանալ «Հասկ»-ի հարգո խմբագրությունից, որին և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

գրված էր Լամբրոնում[191], 1212 թվականին հավանաբար Մուշի ս. Կարապետի վանքում Զուբիաս գրչի կողմից ընդօրինակված Գիրք Սողոմոնի հավաքածուն[192], 1239 թվականին Դրաղարկի մեծահռչակ անապատում, Սարգիս կրոնավորի կողմից արտագրված Ավետարանը[193], 1255 թվականին հավանաբար Կիլիկիայում Միքայել քահանայի և Զախար գրիչների կողմից ընդօրինակված Աստվածաշունչը[194], 1255 թվականից առաջ Կիլիկիայում Գրիգոր Կոզեռն գրչից գրված և նշանավոր ծաղկող Կոստանդինի կողմից նկարազարդված Ավետարանը. նրա պատվիրատուն, ինչպես երևում է ձեռագրում գտնվող մի հիշատակագրությունից, եղել է հայտնի զորավար և օրենսգետ Սմբատ Գունդստաբլը[195], Մի այլ Ավետարան գրված 1259 թվականին Թորոս քահանայի կողմից Տարսոնի սուրբ Յայտնի Սալ գյուղում[196], 1276 թվականին Կոստանց սարկավագի և Հակոբ քահանայի կողմից Սիսում արտագրված Վարք Սրբոցը[197], և վերջապես մի այլ Ավետարան ընդօրինակված 1289 թվականին գրիչ Ստեփանոս քահանայի կողմից Կիլիկիայի Ցախոտան անապատում[198]։

Հետաքրքրությունից զուրկ չէ նաև նշելը այն մասին, որ Անկյուրիայի հավաքածուում պահվել էին մեծարժեք ձեռագրերից կատարված ընդօրինակություններ։ Այս տեսակետից մեծ արժեք էր ներկայացնում 1255 թվականին ընդօրինակված վերոհիշյալ Աստվածաշունչը, որի հիշատակարանում գրված էր հետևյալը. «Գրեցաւ ի յաւրինակէ որ գրեալ էր ի ՆԼԶ (986) թուականին»[199]։ Այսպիսով հիշյալ Աստվածաշունչը իր Մաշտոցի և ժամագրքի մասերով ցարդ մեզ հայտնի ամենահին, այսինքն մոտ հազարամյա մի Աստվածաշնչից էր ընդօրինակվել։

Աստվածատուր երեց անունով մի գրիչ 1561 թվականին իրեն իբրև նախագաղափար է ունեցել նշանավոր հայ մատենագիր Հովհաննես սարկավագի սաղմոսը։ Իսկ 1629 թվականին Սարգիս «աշխարհակալը» արտագրել է մի այլ սաղմոս, Մերենցի օրինակից[200]։ Դարձյալ հավաքածուում եղել է մի Մաշտոց, որը իբրև բնագիր է ունեցել ապահովաբար 893 թվականին Մաշտոց կաթողիկոսի աշակերտ Ստեփանոս Սեանցու օրինակը[201]։ Ուշագրավ է Կոնդակների պատմությունների, օրհնությունների նամակների և ձեռագրաց հիշատակարանների հավաքածուն, որը կարևոր նշանակություն կունենար ժէ դարի պատմության համար։ Գաղատիայի հայ գաղութի պատմության համար որոշակի արժեք էր ներկայացնում Անդրեաս և Թադեոս եպիսկոպոսների 1758—1823 թթ. վերաբերող օրագրությունը, և այլն և այլն։

Նկատի ունենալով Անկյուրիայի ձեռագրերի գիտական արժեքը, ցուցակի հեղինակը զանազան ձեռագրերի վրա իր ուշադրությունը բևեռելով, իրավացիորեն նկատում է, որ այդ գրչագրերը շատ ուշագրավ են թե՛ իրենց հնությամբ և թե՛ բովանդակությամբ և արժի հետագայում լուրջ ուսումնասիրության ենթարկել դրանք։ Ինչ իմանար տգնչյան հեղինակը, որ սույն տողերը գրելուց քիչ անց, Անկյուրիայի իր մատնանշած ձեռագրերը ոչ միայն բախտը չէին ունենալու ուսումնասիրվելու, այլև այս հարուստ հավաքածուից ոչ մի նմուշ չէր հասնելու մեզ։

Հայերեն ձեռագրերի խուզարկու հայտնի բանասեր Հ. Քյուրտյանը, որ քաջածանոթ է Արևմտյան Հայաստանից ու Թուրքիայի երբեմնի հայաշատ վայրերից արտասահման տարված և օտար մատենադարաններում ու թանգարաններում պահված ձեռագրերին, նշում է, որ «Անկյուրիայի ձեռագրերի հավաքածուն բոլորովին անհետացած է[202] (ընդգծումը մերն է, Ս. Ք.)։ Դարձյալ նա է, որ մի այլ առիթով վերջերս կրկին հաստատում էր իր նախորդ ասածը, գրելով. «Անկյուրիայիններեն ցարդ ոչ մեկ գրչագիր հայտնված է»[203]։

Անկյուրիայի ձեռագրացուցակը կազմվել էր 1913 թվականին, շատ հնարավոր էր, որ 1915 թվականին հավաքածուի թիվը աճած լիներ և կամ շրջականերում ևս գտնվեին այլ ձեռագրեր ևս ցրված, որոնք դուրս մնացած լինեին ցուցակագրումից։ Սակայն, այսօր փաստ է այն տխուր իրականությունը, որ Անկյուրիայի հարյուրավոր ձեռագրերի հարուստ

---

191 Բարդեն արքեպիսկոպոս, Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 309—310։

192 Նույն տեղում, էջ 623—684։

193 Նույն տեղում, էջ 881—886։

194 Նույն տեղում, էջ 277—290։

195 Նույն տեղում, էջ 1271—1276։

196 Նույն տեղում, էջ 147—150։

197 Նույն տեղում, էջ 757—764։

198 Նույն տեղում, էջ 1115—1120։

199 Նույն տեղում, էջ 1223—1230։

200 Նույն տեղում, էջ 1213—1218։

201 Նույն տեղում, էջ 971—978։

202 Հ. Քյուրտյան, «Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց և շրջակայից» (դրախտություն), «Բազմավէպ», Վենետիկ, 1959, էջ 48։

203 Հ. Քյուրտյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, պատրաստեց Հ. Թոփճյան... (դրախտություն), «Բազմավէպ», 1964, էջ 17։

հավաքածուն սկզբից մինչև ամենավերջին ձեռագիրը այլևս գոյություն չունի...

Հայագիտությունը անչափ շնորհակալ է և միշտ կհարգի հիշատակը անխոնջ հետազոտող Բաբգեն արքեպ. Կյուլեսերյանի, որը դժվարին պայմաններում կարողացավ կազմել Անկյուրիայի հայերեն ձեռագրերի ցուցակը, նույնքան շնորհակալ է նաև նրա հարազատներին, որոնք հաճախ վտանգելով իրենց կյանքը, կարողացան փրկել ոչ միայն իրենց հարազատի ժառանգությունը, այլև մեր գանձարաններից մեկի հաշվեմատյանը...

Ահա շնորհիվ այդ ցուցակի մենք այսօր գիտենք մոտավորապես այն, թե ինչ կորցրեցինք մեր ձեռագրական գանձերից Անկյուրիայում։

Արմաշ։ Մեր ամենահայտնի հայ ձեռագրական կենտրոնների շարքում որոշակի տեղ է գրավել նաև Արմաշի դպրեվանքին առընթեր գոյություն ունեցող մատենադարանը։ «Արմաշու վանքը հիմնվեցավ ԺԷ դարուն առաջին տասնամյակին մեջ էջմիածնէ եկած նվիրակներու ջանքով, տեղվույն ցանցառ հայության կրոնական ի յանքը հոգևոր հաստատության մը շուրջը ամփոփելու մտադրությամբ և ամբողջ Փոքր Ասիո առաջակողման և Բյուրանիան ու շրջակայից հայության համար ուխտավորական կայան մը կազմելու հեռավոր նպատակով»[204]։

1786 թ. Բարթողիմեոս արքեպ. Կպուտիկյանի առաջնորդության ժամանակ է, որ բարգավաճում է վանքը և բազմաթիվ վերանորոգությունների և շինությունների շարքում կառուցվում է նաև հատուկ մատենադարան[205]։ Պետք է կարծել, որ իբրև հոգևոր կարևոր կենտրոն՝ Արմաշում հիմնադրության օրվանից գրվել ու հավաքվել են գրչագրեր, սակայն միայն վերոհիշյալ թվականին է, որ ստիպվել են առանձին մատենադարան կառուցել, անշուշտ նկատի ունենալով հավաքված ձեռագրերի կարևոր թիվը։ Դեռ 18-րդ դարի վերջում Արմաշում էին հավաքված բազմաթիվ գրչագրեր, սակայն նույն դարի վերջում Զակրը Հասան բռնապետը արշավելով վանքի վրա կրակի տվեց նրա բոլոր շենքերը, այդ թվում նաև նորակառույց մատենադարանը։ Արմաշի գրչագրերի հմուտ ուսումնասիրող Հ. Թոփճյանը գրում է, որ իր նախընթացը չունեցող այս հրդեհի ընթացքում երկու դար շարունակ խնամքով այստեղ հավաքված ձեռագրերից ո՞վ գիտե ինչքան ոչնչացան[206]։ Մի բան սակայն ստույգ է, որ վերջերս հրատարակված Արմաշի ձեռագրացուցակում, ոչ մի ձեռագիր չենք գտնում գրված Արմաշում և կամ նվիրված նույն մատենադարանին 18-րդ դարի ընթացքում։ Այսպիսով պետք է հաշտվել այն իրականության հետ, որ մինչև 18-րդ դարի վերջը Արմաշում հավաքված գրչագրերից և ոչ մեկը չի աղատվել թշնամու հրդեհից։ Արմաշի դպրեվանքի մեջ հայտնի ժողովածուն սկսում է գոյանալ միայն ԺԹ դարի սկզբից, շնորհիվ տեղի ունեցած ձեռագրական նվիրատվությունների և նորանոր գրչագրերի ընդօրինակության, քանի որ Արմաշի Զարխափան ս. Աստվածածնի վանքը շարունակում է մնալ մեր գրչության կենտրոններից մեկը։

Ըստ մի վկայության, Արմաշի ձեռագրերը բավականին մեծ թիվ են ունեցել[207]։

ԺԹ դարի վերջից, երբ Արմաշի դպրեվանքը իր վերածնության շրջանն էր ապրում շնորհիվ Մաղաքիա արքեպ. Օրմանյանի և Եղիշե արքեպ. Դուրյանի վանահայրության, գրադարանն ու ձեռագրատունն էլ զգալիորեն ճոխանում են։

Արմաշում հավաքված և Թոփճյան ձեռագրացուցակում գրանցված 223 գրչագրերն էլ ձեռք են բերվել ԺԹ դարի ընթացքում։ Ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ նրանցից մի մասը նվիրվել է Արմաշի դպրեվանքի մատենադարանին Ստեփանոս և Պողոս պատրիարքների, վանահայր Գևորգ արքեպ. Ալիքսանյանի, Եղիշե արքեպ. Դուրյանի, Բաբգեն վ. Կյուլեսերյանի հորդորներով՝ Քիրեճյան ընտանիքի (1897 թ. նվիրել են 16 գրչագիր) և ուրիշների կողմից։

Արմաշի մատենադարանն էլ մեր շատ ձեռագրական կենտրոնների նման 1915 թ. կողոպտվեց ու ոչնչացվեց, երբ արմաշականներն ու Արմաշի բնակիչները տարագրվեցին։ Մեծ բարերախտություն էր հայագիտության համար, որ նման Անկյուրիայի, փրկվեց նաև Հ. Թոփճյանի կազմած Արմաշի ձեռագրերի դիտական ցուցակը, և որը վեր-

---

[204] Արմաշու դպրեվանքին 25-ամեայ Յոբելեանին առթիւ 1889—1914, Կ. Պոլիս, 1914, էջ 6։

[205] Նույն տեղում։

[206] Հ. Թոփճյան, Արմաշի ձեռագիրները, «Հասկ», Հայագիտական տարեգիրք, Ա տարի, 1948 թ., Աեթիլիա, էջ 62—88։

[207] Հ. Բարսեղ Սարգիսյանը գրում է, որ Խորովիկի մի գործք, որը պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում 319ղ համարի տակ, ընդօրինակվել է Արմաշի վանքի 1827 համարը կրող մի ձեռագրից, Հովհաննես Տեր-Կարապետյան Պրուսացիի կողմից։ Այս վերջինն էլ արտագրվել էր «1795 Սկյուտարի Սեյմիճ թաղը բնակող Տեր Մարտիրոս կուսակրոն սարկավագին ձեռագրեն, զոր խնդրեց անանուն ոմն Պրուսիացի գազափարիլու համար» («Բազմավէպ»,

ջերս հրատարակվեց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կողմից, Վենետիկում, ս. Ղազարի տպարանից։ Բեռ Թոփճյանը իր ցուցակում թվագրել է միայն 223 գրչագիր, սակայն նրա ցուցակում գտնվում են նաև մեկ համարի տակ գրանցված ձեռագրեր, որոնք բաղկացած են 6 (տե՛ս № 102), 5 (տե՛ս № 103), 2 (տե՛ս № 46) և այլ հատորներից։ Արմաշի գրչագրերը 1915 թվականին պետք է որ ավելացած լինեին, քանի որ Թոփճյանի ասելով, ձեռագրացուցակը կազմվել էր 1903—1904 թթ., այդ հաստատվում է նաև նրանով, որ մուտք գործած նորագույն ձեռագիրը ձեռք էր բերվել 1903 թվականին (տե՛ս № 145)։

Այս բոլորից հետո կարծում ենք, որ առանց հիմքի չէ մեր այն ենթադրությունը, թե Արմաշի գրչագրերը ի հաշիվ թվագրված համարներից դուրս գտնվող հավելվածական հատորների և ինչպես նաև 11 տարիների ընթացքում ժողովածուի ունեցած հնարավոր աճի, նրանց թիվը եղեռնի նախաբրյակին պետք է որ հասած լիներ ամենայն հավանականությամբ ավելի քան 250 գրչագրի։ Անշուշտ այս թվի մեջ մենք դեռ նկատի չունենք Արմաշի դպրեվանքի շրջանավարտների (ապագա հայտնի հոգևորականների և աշխարհականների) բազմաթիվ ավարտաճառերը, որոնք ևս խնամքով պահվում էին այնտեղ, և որոնց դարձյալ նույն ողբերգական վախճանը վիճակվեց։

Արմաշի վարդապետական ավարտաճառերից իբրև նմուշ այստեղ հիշենք միայն մեկի մասին։ Կ. Պոլսի Նախկին պատրիարք Զավեն արքեպ.-ը 1930 թ. Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանին նվիրել է Արմաշի դպրեվանքում 1896 թ. իր կողմից գրված վարդապետական թեկնածու Հովհաննես Իմաստասեր Օձնեցու մասին (բաղկացած 421 էջից), որի հիշատակարանի մի մասը մեջ ենք բերում ստորև. «... Աշխատությունս ավարտելի հետո հանձնեցի զայն դպրեվանքին Տեսչության։ Աշխարհավեր պատերազմի ժամանակ Թուրքիո Հայոց պատահած աղետքեն գերծ չմնաց մեր սիրելի դպրեվանքն ալ։ Անոր պաշտոնյաներն և ուսուցիչները ցրվեցան կամ տարագրվեցան ու վանքը կողոպտվեցավ։ Աշխատասիրությանս բնագիրը, որ Դպրեվանաց Մատենադարանին մեջ էր, անհետ կորսվեցավ։ Անոր այս ընդօրինակությունը, որ քովս պահված կը մնար նույնությամբ կը հանձնեմ Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանին։

1930 փետր. 27, Պաղտատ, Զավեն արքեպս.»[208]։

Անհրաժեշտ է նշել նաև, որ Արմաշի դպրեվանքին նվիրված հոբելյանական հատորում նշված են բազմաթիվ ավարտաճառեր, որոնք պատկանում են հայտնի արմաշականների գրչին։

Արմաշի գրչագրերը ընդօրինակվել էին ԺԹ—ԺԹ դդ.։ Հավաքածուի հնագույն ձեռագիրը գրվել էր 1351 թ. Կիրակոս վարդապետի ձեռքով և այն նաև Ասորու՝ Հովհաննու Ավետարանի մեկնությունն էր։ Ձեռագրերի կողերին կարված մագաղաթյա պահպանակների շարքում եղել են մեսրոպյան երկաթագրով գրված բազմաթիվ պատառիկներ Աստվածաշնչի Հին և Նոր կտակարաններից, ճառընտրերից և այլն։ Արմաշի գրչագրերի ժողովածուն ժամանակագրական կարգով հետևյալ պատկերն էր ներկայացնում։ ԺԴ դարից էր՝ 4 ձեռագիր, ԺԵ դարից՝ 7, ԺԶ դարից՝ 8, ԺԷ դարից՝ 30, ԺԸ դարից՝ 58, ԺԹ դարից՝ 116 ձեռագիր։ Գրչագրերից միայն 5-ն էին գրված մագաղաթի վրա, իսկ մեծ մասը՝ թղթի վրա։ Ձեռագրերի որոշ մասը ընդօրինակվել էր Արմաշում, իսկ մյուսները՝ Կ. Պոլսում և նրա զանազան մասերում (Սկյուտար, Սամաթիա, Միջագյուղ, Պեկոզլի, Գալաթա, և այլն), Սեբաստիայում, Կեսարիայում, Տիգրանակերտում, Ամասիայում, Պրուսայում, Եվդոկիայում, Բալուլում, Ցողատում, Եկեղյաց գավառում, Կարինում, Կուտինայում, Էջմիածնում, Շուռթում, Ջուղայում, Հռոմում, Սուրխաթում (Ղրիմ), Լեհաստանում, Երուսաղեմում, Զմյուռնիայում և այլ վայրերում։

Ձեռագրերի գրիչների շարքում էին գտնվում միջնադարյան նշանավոր գրիչ Ստեփանոս Գոյներերիցանցը, Հակոբոս

1892 թ., էջ 211, հմմտ. նաև Հ. Հ. Տաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրություններ... Վիեննա, 1895 թ., էջ 63)։ Այստեղ ուշագրավ է երկու հանգամանք. առաջինը՝ որ վերոհիշյալ ձեռագիրը այժմ բացակայում է Թոփճյանի կազմած ձեռագրացուցակից. և երկրորդը՝ որ այդ գրչագիրը կրել է համար, այսինքն «Թիւ 1827»։ Պետք է ենթադրել, որ գրչագիրը ապա ընդօրինակվել է ԺԹ դարի սկզբում, երբ վերոհիշյալ գրիչը ուսանում էր Արմաշում և բացի հիշյալից, ինչպես երևում է Արմաշի ձեռագրացուցակից, բազմաթիվ ձեռագրեր էր ընդօրինակել և կամ թարգմանություններ արել Արմաշում և այլուր։ Հավանաբար անցյալում Արմաշի ձեռագրերն ու տպագիր գրքերը միասին էին գրանցվել, ցուցակ այդ պատճառով էլ հիշյալ ձեռագիրը կրել է 1827 համարը։ Այստեղ կարևորն այն է, որ Արմաշում դեռ ԺԹ դարի սկզբում եղել է մի ձեռագիր, որը հավանաբար կորած լինելով դուրս է մնացել Թոփճյան ցուցակից։ Պետք է կարծել, որ այս օրինակը միակը չպետք է լիներ այս ժողովածուի պատմության մեջ։

[208] «Սիոն», 1930 թ., Երուսաղեմ, էջ 94։

նալյան պատրիարքը, հայտնի գրչուհի Բրաբիոն Նոտարը, բժիշկ Ստեփանոս Շեհրիմանյանը, Ստեփանոս Իլովացին, Պետրոս Կոպիսկ. Ադամյան-Բերդումյան Նախիջևանցին, Հովհաննես քհ. Միրզայանց Վանանդեցին, Ֆիզիկա Պոդով պատվելին, Հովհաննես Տերոյենց-Ջամուրճյանը և ուրիշներ։

Ձեռագրերի պատվիրատուների թվումն էին Հովհաննես Պատրիարք Բաղիշեցին (Կոլոտ), Թրակիայի Հայոց առաջնորդ Աբրահամ վարդապետ Կրետացին (ապա Աբրահամ Գ կաթողիկոս Ամենայն Հայոց) և ուրիշներ։

Հայագիտության համար զգալի կորուստ է Արմաշի հարուստ ձեռագրական հավաքածուի ոչնչացումը։ Ձեռագրացուցակի կազմող Հ. Թոփճյանը, ինչպես իր ցուցակի առաջաբանում, այնպես էլ իր գրած հոդվածներում[29] հանգամանալից կերպով անդրադարձել է Արմաշի գրչագրերի գիտական արժեքին, ուստի մենք այստեղ կբավականանանք միայն նրանց բովանդակության վերաբերյալ շատ համառոտ մի ակնարկով։

Հավաքածուում կային հայ մի շարք պատմիչների գործերից կատարված ընդօրինակություններ, երբեմն մի քանի օրինակներով, այսպես՝ Մովսես Խորենացու (2 օրինակ), Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու (3 օրինակ), Թովմա Արծրունու, Թովմա Մեծոփեցու (ձեռագիր 1597 թ.) և այլոց պատմությունները։ Նույն ժողովածուում էին գտնվում նաև Միքայել Ասորու ժամանակագրությունը, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ գործ»։ Հարուստ էր նաև կրոնական գրականությունը, գտնվում էին հայ և օտար բազմաթիվ հեղինակների աշխատություններ, այդ թվում Հովհան Ոսկեբերանի անտիպ մի քանի գործերը, ուսիթոռական և կաթոլիկ աստվածաբանության թարգմանական մեծ թվով աշխատությունները։ Այստեղ էին նաև Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու և ուրիշների իմաստասիրական գործերը։ Պահվում էին նաև Ներսես Շնորհալու հանելուկները, Վարդան Այգեկցու առակները, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ինքնագիր քարոզգիրքը (№ 76) և այլն։ Շատ հարուստ էր նաև բժշկական գրականությունը, ուր կային օրինակներ Ամիրդովլաթի, Ստեփան Շեհրիմանյանի, Բեստենի և ուրիշների գործերից։

Ճոխ էր կանոնական և ծիսական գրականությունը, ինչպես օրինակ՝ Ավետարան, Սաղմոս, Մաշտոց, Հայսմավուրք, Շարակնոց, Աղոթագիրք, Գանձարան, Ճառընտիր, Քարոզգիրք և այլն։ Կային նաև բառգրքեր Պարսկերեն-հայերեն, ինչպես նաև թուրքերեն-արաբերեն, իտալերեն և ֆրանսերեն լեզուների, Գիրք վասակոցի ԺԸ դարի մի ընդօրինակությունը։ Ուշագրավ էին նաև հին և նոր պատմական անձնավորությունների և քաղաքների նվիրված ոտանավորների ժողովածուն, ուր կային Հայկ Նահապետին, Անիին, Վաղարշապատին, Լեոն թագավորին, Ներսես Լամբրոնացուն, Լեոն վերջինին և այլոց նվիրված բանաստեղծություններ։ Բաղդագիրք ռամկականը, Վենետիկի Մխիթարյան հայրերի քերթվածների ժողովածուն, նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանի նամականին և այլն։ Աշխարհագրական բովանդակությամբ երկերի շարքում էին գտնվում 7-րդ դարի «Աշխարհացույց»-ը, և մանավանդ № 11 գրչագիրը, ուր տրվում էին Հայաստանի գավառները և նշվում բոլոր այն քաղաքներն ու գյուղերը, ուր նշանավոր անձնավորությունների գերեզմաններն էին գտնվում։ Ըստ Հ. Թոփճյանի, վերջինս արժեքավոր էր հատկապես եկեղեցական-հնախոստական տեսակետից, և այն ամենայն հավանականությամբ խմբագրված էր 15—16 դդ. և իր բովանդակությամբ բոլորովին տարբերվում էր հայտնի հայ աշխարհագրական գրականությունից (էջ 55)։ Բացի Կանոնագրքերից և Դատաստանագրքերից, մեծ արժեք էր ներկայացնում նաև № 28 գրչագիրը, որը ինչպես երևում էր իր բովանդակությունից, Կիլիկյան հայկական թագավորության մեջ օգտագործված մի Դատաստանագիրք էր և առատ նյութ էր պարունակում Կիլիկյան միջավայրի և նրա հետ կապված հարաբերությունների ուսումնասիրման համար։ Ուշագրավ է, որ առանձին օրենքով արգելվում էր երեխաներին իրենց հոր հետ թատրոն գնալը։

Արմաշի գրչագրերը մանրանկարչական տեսակետից շատ չէին աչքի ընկնում, սակայն նրանց մեջ բացի Ավետարանների խորաններից, ավետարանիչների նկարներից գտնվում էին նաև մեր միջնադարյան նշանավոր դեմքերի դիմանկարներով զարդարված ձեռագրեր, որոնցից անհրաժեշտ ենք

---

[29] Հ. Թոփճյան, «Հուշեր Արմաշի ձեռագիրներեն», «Սիոն», 1927 թ., էջ 218—220, նույն հեղինակի՝ «Արմաշի ձեռագիրները», «Հասկ» հայագիտական տարեգիրք, Ա տարի, 1948, Անթիլիաս, էջ 62—88, նույն հեղինակի՝ «Կաթոլիկ գրականությունը Արմաշի ձեռագիրներուն մեջ», «Հասկ» հայագիտական տարեգիրք, Բ տարի, 1949—50 թթ., էջ 294—309, նույն հեղինակի՝ «Ցուցակ Ձեռագրաց Արմաշի վանքին», Վենետիկ—ս. Ղազար, 1962 թ., էջ 5—7։

գտնում հիշատակել. Գրիգոր Մագիստրոսի նկարը իշխանական զգեստով, և որը, ինչպես նշում է ցուցակի կազմողը, հավանաբար արտագրված պետք է լիներ հին մի գրչագրից (№ 41 և այլն), Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու (ձեռ. № 222), Գրիգոր Տաթևացու նկարները (ձեռ. № 197), և այլն։ Հավաքածուին մաս էին կազմում նաև խազագրված ձեռագրերը, և այլն։

Արմաշի ձեռագրերում կային այնպիսիները, որ բազմիցս փրկվել էին ասպատակողների ձեռքից։ Նման ձեռագրերի հիշատակարանների հետ ծանոթացումն իսկ մեզ հնարավորություն է ընձեռում պատկերացնելու, թե մեր պապերը ինչպիսի անհողդողդ հավատք էին տածում դեպի հայ ժողովրդի ապագան։ Այստեղ բավական է հիշատակել միայն № 145 գրչագիրը, որը Ավետարան էր և գրվել էր 1433 թ. Հովհաննես գրչի կողմից։ Շատ շուտով այն դերի էր ընկել թշնամիների ձեռքը և հայ մի տիկին Գուլազ անունով «Հանեալ ի պարանոցէն զուլ մի ԳՌ (3000) դեկնի և ետուր ազատեաց զՍուրբ Աւետարանս»։ Սակայն մի քանի դար անց 1733 թ. հունվարի 10-ին նույն գրչագիրը այս անգամ Շամախիում է գերի ընկել լեզգիների ձեռքը և դարձյալ ազատվել է Ակնցի մահտեսի Աբրահամի որդի Հակոբի կողմից[210]։

Արմաշի ձեռագրերի ճակատագրի մասին ցարդ շատ քիչ բան է հայտնի։ Այդ պակասը մենք ցանկացանք լրացնել դիմելով ականատեսների վկայություններին։ Այս տեսակետից ուշագրավ է բնիկ արմաշցի, այժմ Օրևանում բնակվող ուսուցիչ և գրող Մ. Փափազյանի գրառած ականատեսի անտիպ հուշերը, որոնք վերաբերում են Արմաշի վանքի հարուստ ձեռագրական հավաքածուի ողբերգական վախճանին։ Այդ մասին նա գրել է հետևյալը. «Ես բնիկ Արմաշցի եմ և իմ մանկությունը անց եմ կացրել գրեթե վանքի բակում՝ ուսումնարանում սովորող դպիրների հետ ու միշտ ցանկացել եմ ուսումնարանի նկուղային հարիվ ընդարձակ սրահի դարակներում դասավորված գրքերին ծանոթանալ մոտիկից։ Թերևս այդ էր պատճառը, որ 1918 թվականի նոյեմբեր ամսին, թե դեկտեմբերին, երբ կրկին հայրենի գյուղ վերադարձա (աքսորից), խնդրեցի գնացի մատենադարան, ուր ինձնից առաջ շատերն էին անարգել կերպով մտել ու դուրս եկել։ Սակայն խորապես հուզվեցի, երբ դարակներում ոչ մի գիրք չտեսա... կային հատակին թափված գրքեր՝ անխնամ ու քրքրված...

Այդ օրերին կլինեի 13 տարեկան և չէի իմանում, թե ձեռագրերն ինչ արժեք են ներկայացնում։ Սկսեցի անփութորեն հատակին կիտված թղթերի միջից փնտրել միայն չպատառոտված ու ամբողջական գրքեր, որոնց թիվը կազմեց ութ ձեռագիր, մեկ տպագիր և մեկ հատ էլ Հայաստանի պատմական քարտեզը՝ կտորի վրա փակցված։

Հայրս՝ Հակոբ էֆենդին, որ հմուտ գրաբարագետ էր, տուն վերադարձավ 1919 թվականի գարնան. նա մեկնաբանեց, թե ձեռագրերը ե՞րբ են գրված և ովքե՞ր են նրանց հեղինակները։ Հետևյալ օրը, հորս հրավերով, մեր տուն եկան, դպրեվանքն զրաղեցնող երկրագործական թեքումով, դպրոցի տնօրենն ու երկու դասատուներ։ Մատենադարանից հրաշքով փրկված ձեռագրերը հայրս նվիրեց հիշյալ դպրոցին, նույնպես տպագիր գիրքն ու քարտեզը։ Դպրոցի տնօրենը սիրով և շնորհակալությամբ ընդունեց մեծարժեք նվերը, մանավանդ շատ ուրախացավ, երբ այդ գրքերից մեկը գրված էր երկրագործության մասին։ Դպրոցի տնօրենը խոստացավ գրանցել ձեռագրերի նվիրատվության մասին դպրոցի հատուկ մատյանում։

Ահա այն ամենը, որ հայտնի է ինձ Արմաշի դպրեվանքի մատենադարանի ու ձեռագրերի մասին»[211]։

Սակայն ինչպես երկրագործական վարժարանը, այնպես էլ Արմաշի երբեմնի ճոխ մատենադարանից փրկված վերոհիշյալ սակավաթիվ գրչագրերն էլ քմայական շարժումների հետևանքով լքվեցին և հայ բեկորները ստիպվեցին փախուստի դիմել։

Որքան մեզ հայտնի է, մինչև այժմ մեկ ձեռագիր է միայն փրկվել Արմաշի դպրեվանքի գրչագիրներից։ Հայ ձեռագրերի ժրաջան խուզարկու, բանասեր Հ. Քյուրտյանը Արմաշի գրչագրերի ճակատագրի մասին նշում է հետևյալ արժեքավոր մանրամասնությունները. «Ինչ ինչ գրչագիրներ ալ կրնան հոս ու հոն փրկված ըլլալ կորուստե, քանի որ իմ հավաքածուիս մեջ Արմաշի հավաքման նախկին թիվ 200 գրչագիր Մաշտոցը կա։ Ինձի ղրկված է Կ. Պոլսեն, ուրիշ գրչագիրներու հետ։ Սակայն մեծարգո բանասերը նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արմաշի հավաքածուն չուներ առուծախի համար հնա-

[210] Հ. Թոփնյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 277—278։

[211] Օգտվելով առիթից մեր շնորհակալությունն ենք հայտնում հարգելի ուսուցիչ Մ. Փափազյանին՝ սիրահոժար կերպով մեզ տրամադրած վերոհիշյալ կարևոր տեղեկությունների համար։

գարյան և նկարազարդ ձեռագիրներ, ուստի նա եզրակացնում է գրելով. «Այդ իսկ պատճառով կարելի է մեծ մասամբ չփրկվեցին»[212].

Արմաշի ձեռագրերին վիճակված ճակատագրի մասին մենք ունենք նաև մի այլ ուշագրավ վկայություն, որը հիմնված է ականջալուր անտիպ մի հիշողության վրա, որը զժբախտաբար դալիս է հաստատելու վերևում մեր կողմից արված ենթադրությունը.

«1921-ին հանդիպեցա Պուքրեշ տարագրուած մեն վերադարձող Իզմիտցիի մը, որուն հետ խոսակցելով՝ միասին հասանք ափսոսանքի որ Իզմիտի հայաշատ և ազգասեր գաղութը փճացավ, ինչպես նաև Արմաշի Դպրեվանքը, որու նախկին ուսանողն եմ եղած։ Մարդը ավաղելով հայտնեց, թե տարագրութենե վերադարձին Իզմիտի թուրք նպարավաճառները մեզ պանիր, բրինձ կը վաճառեին, իսկ թուղթերը ձեռագիր գրքերն փրցված էջեր էին, մեզ հետ եղող Արմաշցի մը հայտնեց, թե Արմաշի ձեռագիրներն են»[213].

Ահա այսպես է, որ մեր ձեռագրական բազմահարուստ մյուս հավաքածուների նման ոչնչացվեցին նաև Արմաշի դպրեվանքի գրեթե բոլոր գրչագրերը...

Սեբաստիա.— Հնուց ի վեր մեր գրչության կարևոր կենտրոններից մեկն է եղել Սեբաստիան։ Սեբաստիայում գրված ու ցարդ մեզ հայտնի հնագույն գրչագիրը՝ 1066 թվականին ընդօրինակված մի Ավետարան է, որի գրիչն է եղել Գրիգոր քահ. Ակոռեցին։ Նույն գրչագիրը հետագայում պատկանել է Ներսես Շնորհալուն։ Այն այժմ պահվում է Մաշտոցյան մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի 311 համարի տակ։ Սեբաստիայի հայոց վանքերն ու եկեղեցիները բացի գրչության վայրեր լինելուց, հանդիսացել են նաև մատենադարաններ։ Ս. Հրեշտակապետի վանքը հարուստ է եղել եկեղեցական անոթներով, զգեստներով և ձեռագիր մատյաններով, որոնք տպա ս. Նշան են փոխադրվել։ Ս. Նշան վանքը իր հիմնարկությունից սկսած մինչև վերջին ժամանակներս կալվածներից բացի, ստացել է նաև անոթ ու զգեստ, ձեռագիր ու տպագիր գիրք[214].

Անցյալում Սեբաստիայից ևս բազմաթիվ գրչագրեր տարվել են այլ վայրեր։ 1896 թ. շարգերից հետո մի շարք գրչագրեր է վաճառել Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը Փարիզում բնակվող հնավաճառ Մ. Ինճյուճյանին՝ ջարդերի պատճառով տուժած դպրոցների և այլ հաստատությունների վերաշինության համար։ Այդ ձեռագրերի մեջ էր գտնվում հնագույն մի Ավետարան մանրանկարներով զարդարված, որը սակայն ներկայումս մասերի բաժանված գտնվում է տարբեր վայրերում ապրող անձնավորությունների մոտ։ Հիշյալ Ավետարանը նախապես Փարիզի Սվաճյան հավաքածուից մաս կազմելուց հետո, տարվել է Նյու-Յորք՝ հնավաճառ հանգուցյալ Գրիգոր Մինասյանին, որը գրչագրից Ղուկասի Ավետարանը ծախել է Վաշինգտոնի Ֆրիր Արտ Գելլերիին, ուր և այժմ պահվում է Ղուկասի սկզբնազարդով։ Մնացածը, ձեռագրի կարգը հետ, Մինասյանի մահից հետո ծախվել է բանտեր Հ. Քյուրտյանին։ Նույն Ավետարանը Սվաճյան հավաքածուում եղած ժամանակ ունեցել է նաև հինգ կանոնախորաններ և մեկ էջի վրա ամփոփված չորս ավետարանիչների մանրանկարներ, որոնց սակայն ուր գտնվելը ցարդ հայտնի չէ[215].

Ս. Նշանի վանքում մինչև ԺԹ դարի վերջում պահված որոշ ձեռագրեր, ըստ Մեսրոպ եպիսկ. Տեր-Մովսիսյանի, այժմ գտնվում են Օքսֆորդի և Լոնդոնի Բրիտանական թանգարանի մատենադարաններում։ Հիշյալ գրչագրերը նախապես հիշվել էին Սրվանձտյանցի ցուցակում[216]. Տեղեկություն ունենք

---

212 «Բազմավէպ», Վենետիկ, 1964, էջ 170։

Արմաշից փրկված մեզ հայտնի վերոհիշյալ միակ գրչագիրը բովանդակությամբ Մաշտոց է և գրվել է 1699 թ. Կոստինայում՝ Տեր Աստվածատուր դրչի կողմից (տե՛ս Հ. Թոփնյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի.... էջ 382—387)։

213 Վերոհիշյալ տեղեկությունը մեզ սիրահոժար տրամադրեց, Բրիմնի արմաշական, Հարգելի Ս. Մատենճյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

214 Հ. Հ. Ոսկյան. Սեբաստիայի վանքերը, «Հանդէս ամսօրեայ», 1945, էջ 35, 36, 65։

215 Հ. Քյուրտյան. Ակնարկ մը հին հայ մանրանկարչության պատմության վրա, «Հանդէս ամսօրեայ», 1965, էջ 233։

216 Մեսրոպ եպիսկ. Մեր-Մովսիսյանի դիվան (այժմ Մաշտոցյան Մատենադարանում)։

նաև այն մասին, թե 1903 թ. Վենետիկի Մխիթարյաններից Հ. Ալեքսիս Հովսեփյանը Սեբաստիայի և Արաբկիրի կողմերից 29 ձեռագրեր է բերել և հանձնել Վենետիկի Մխիթարյան մատենադարանին[217]։

Սեբաստիայի գրչագրերով առաջինը զբաղվել է Ղևոնդ վ. Փիրղալեմյանը, որ 1864 թ. կազմել սկսած իր «Ընչխարք պատմութեան Հայոց» անտիպ հավաքածուներում նյութեր է քաղել Սեբաստիայում պահված շուրջ 16 գրչագրերից։ Սակայն Սեբաստիայի հայերեն ձեռագրերի մասին համեմատաբար ավելի կարևոր տեղեկություններ է հաղորդել Գ. վ. Սրվանձտյանցը։ Նա 1878 թ. տեսել ու համառոտ թվագրել է 89 գրչագիր, միևնույն ժամանակ ասելով, որ ինք հնարավորություն չի ունեցել տեսնելու Սեբաստիայի բոլոր ձեռագրերը, քանի որ «Սեբաստիո մեջ բազմաթիվ են ձեռագիրները, բայց մենք մեր տեսածներու ցանկը և հիշատակներն միայն կը դնենք այստեղ»[218], գրել է նա։ Սեբաստիայի ձեռագրերի մասին խոսել է նաև Պողոս վ. Նաթանյանը[219]։ Նվ վերջապես Սեբաստիայի «Եղեռնապատում»-ի անմահ հեղինակ բանասեր Կարապետ Գարիկյանն էր, որ առաջին անգամ լինելով ձեռնամուխ էր եղել և ուվարտել ըլ-ուես Սեբաստիայի, այնպես էլ նրա վանքերում գտնվող ձեռագրերի հարուստ ցուցակագրությունը, որը սակայն եղեռնի ժամանակ հեղինակի բազմաթիվ այլ աշխատությունների հետ ոչնչացավ[220]։ Կ. Գարիկյանը նախապես Կ. Պոլսի «Բիւզանդիոն» թերթում 1906 թ. մի հոդվածաշարով անդրադարձել էր Սեբաստիայում պահվող բժշկական ձեռագրերին և հնատիպ գրականությանը[221]։ Գերմանացի հայագետ Ֆր. Մյուլլերը հիմնվելով Սրվանձտյանի տվյալների վրա, գերմաներեն լեզվով 1896 թ. հրատարակել է Սեբաստիայի ձեռագրերի համառոտ ցուցակը[222]։

Սեբաստիայի ընդարձակ ձեռագրացուցակը կազմելու պատիվը սակայն պատկանում է թեմի առաջնորդ և ապա Երուսաղեմի պատրիարք, բանասեր Թորգոմ արքեպիսկ. Գուշակյանին, որը 1908—1913 թթ. ընթացքում սկսեց և ավարտին հասցրեց այն։ Հ. Ն. Ակինյանի վկայությամբ, այդ ցուցակը կազմված էր հինգ հատորի մեջ մեծ բարեխղճությամբ և գիտական հասկացողությամբ[223], թեև այդ ձեռագրացուցակը կրում է «Ցուցակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա» խորագիրը, սակայն պարունակում է նաև շրջակա վանքերի մեջ պահվող գրչագրերը, թեև ոչ լրիվ, որոնք ապա մասամբ տեղափոխվել են ս. Նշան վանքում[224]։ Սեբաստիայի ձեռագրերի հավաքման մասին ուշագրավ են Թորգոմ արքեպ. Գուշակյանի հետևյալ տեղեկությունները հաղորդված Հ. Ն. Ակինյանին. 1922 թ. մարտի 3-ի իր նամակում. «Մեծագույն մասը գտած եմ Ս. Նշանի վանուց Մատենադարանին մեջ, զորոնք իմ հոն հասնելեն հառաջ վերջին անգամ ամփոփեր է Դպրեվանքի մեր միաբաններեն Սեբաստացի Տ. Սահակ վ. Օտապաշյան, որ ատեն մը իմ նախորդիս Տ. Պետրոս արք.-ի օգնական էր։ Թեև հավաքման կազմվելու մասին որևէ հիշատակ չկար հոն, բայց կը կարծեմ թե այդ մասին մեծ ջանք պետք է ունեցած ըլլա Տ. Հովհաննես եպիսկոպոս Սեբաստացի, որ առաջնորդ էր վիճակին և վանահայր Ս. Նշանի, Ս. Գրոց և ազգային ուսմամբ մշակված միտք մը։ Այս հավաքման վրա ես հետո ավելացուցի իմ նախորդիս Տ. Պետրոս արքեպ. Թահմիզյանի սեփական քանի մը ձեռագիրները և Աղտուց գյուղի Ս. Հրեշտակապետ վանաց (Սեբաստիո վիճակին մեջ) և Սեբաստիո քաղա-

---

217 Հ. Բ. վ. Սարգիսյան. *Մայր ցուցակ... Ա*, 1914, էջ. 279 (№ 187)։

218 Գ. վ. Սրվանձտյանց, *Թորոս աղբար*, Ա, էջ 183։

219 «Տեղեկագիր ընդհանուր վիճակին Սեբաստիոյ», Կ. Պոլիս, 1877, էջ 100—106։

220 Գուժական Սեբաստիո (Կ. Գարիկյան). *Եղեռնապատում Փոքրն Հայոց և նորին մեծի մայրաքաղաքի Սեբաստիոյ*, 1924, Պոսթն, էջ 133—134։

221 «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1906, № 2962—2963։

222 Die armenischen Handschriften von Sewast (Siwas) und Sençuš. Von Dr. Friedrich Müller. Professor an der Wiener Universität. Wien, 1896.

223 Գ. արք. Գուշակյան. *Ցուցակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա*, Վիեննա, 1961, առաջաբանից (Հ. Ն. Ա.)։

224 Նույն տեղում։

քի Ս. Սարգիս եկեղեցվո մեջ պահված ձեռագիրները»[225],

Սույն ձեռագրացուցակը պարբերաբար լույս տեսավ «Հանդէս ամսօրեայի»ի էջերում 1922 թ. օգոստոսից մինչև 1929 թ. օգոստոսը, ընդգրկելով 155 գրչագրի նկարագրություն։ Սակայն մնացած 128 գրչագրերի նկարագրությունը կազմողը այն ժամանակ պահանջած լինելով, այնպես էլ նա ամբողջական ձևով ցարդ չհրատարակվեց, ուստի Հ. Ն. Ակինյանը այն ամբողջացնելու մտադրությամբ, օգտագործեց իր անձնական գործածության համար կազմած համառոտ ցուցակը, որով և ձեռագրացուցակի այս մասը ավելի նման է ցուցակներին սովորաբար կցված համառոտ տախտակի նկարագրության։ Սույն ձեռագրացուցակը 1961 թ. լույս տեսավ նաև առանձին գրքով։ Այն ընդգրկում է 283 + 1 գրչագրերի նկարագրություն։ Սակայն դժբախտաբար մինչև այժմ էլ անտիպ է մնում Թորգոմ արք. Գուշակյանի ձեռագրացուցակի երկրորդ մասի 128 գրչագրերի ընդարձակ նկարագրությունը, որը պահվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մատենադարանում։

Նախապես կարծվում էր, թե Սեբաստիայի ձեռագրերից ոչինչ չի փրկվել։ Ահա թե ինչ էր գրում բանասեր Կ. Գարիկյանը այդ մասին։ Տեղվույն հայության վիճակված ահավոր տարագրությունից և կոտորածից հետո, Սեբաստիայի ս. Սարգիս եկեղեցին, Անապատի վանքը, հայոց գերեզմանատունը հիմնահատակ քանդում են և նրանց քարերով զորանոցներ կառուցում և փողոցներ սալահատակում։ Ի վերջո կարգը հասնում է ս. Նշան վանքին։ Նրա մատենադարանի մի քանի հազար ընտիր գրքերը և գրչագրերը բաժանում են պարենային խանութներին, հալվա, թութուն ծախողներին և հիվանդանոցների դեղարաններին և թերթ-թերթ պատառոտելով մեջը ապրանք են փաթաթում և կամ հրապարակների վրա ոտնակոխ են անում։ Դարձյալ Գարիկյանը գրում է, որ «եղտյուր եղայուր կը թապլեն, աղբանոցները կը նետեն, կայրեն, տյունյա յուզերիտե պունլարը օգոյան ատամ տուսիա գալը՝ մը ըսելով (Աշխարհի երեսին սրանք կարդացող դեռևս մարդ մնացե՞լ է)։ Ոչնչացվեցին նաև գրպրոցների, ընթերցարանների, կուսակցությունների հավաքատեղիների, գրավաճառների և բնակելի տներում պահված ձեռագրերն ու տպագիր արժեքավոր շատ գրքեր[226]։

Սեբաստիայում հայերեն ձեռագրերի ոչնչացումը շարունակվում է մի շարք տարիներ։ Ըստ երևույթին հայերի տարագրությունից շատ հետո, թուրքերը կարողացել էին բացել, ինչպես Սեբաստիայի, այնպես էլ նրա շրջականերում գտնվող և հայերի կողմից պահպանված թաքստարանները, քանի որ դեռևս 1926 թվականին Սեբաստիայի շուկայում մթերքները փաթաթվում էին հայերեն տպագիր և ձեռագիր գրքերի թերթերով։ Այդ մասին է վկայում հասարակական գործիչ և ազգագրագետ, հանգուցյալ Դ. Հալաճյանը, մեզ տրամադրած իր հետագա անտիպ հուշերում։ «12 օգոստոս 1926։ Երեկ խնդրած էի բանտի կառտիյան Ահմետ էֆենտիին, որ շուկայեն կարդ մը գնումներ ընե ինձ համար (կառտիյան Ահմետի մասին տե՛ս «Դէպի կախաղան», էջ 566)։ Թերված ծրարները փաթաթված էին պանազան գույնի թուղթերու մեջ. հետաքրքրությունս գրավեց հայատառ թերթիկներու գործածությունը թուրք նպարավաճառներու կողմե. երկյուղածությամբ բացի ծրարները և կարդացի էջեր Օրմանյանի «Ազգապատում»ենն, որոնք օգտագործված էին շաքար լեցնելու համար. կիսված գունազարդ մաներանկար մը ձախ կողմի մասով առկը «Հայոց թագաւորս մակագրությամբ։ Ջշարունակեցի. կանչել տվի կառտիյան Ահմետ էֆենտին և խնդրեցի փնտռել պանիրը գնած թուրք նպարավաճառի մոտ մաներանկարի մյուս կեսը։

Ահմետ վերադարձավ ուշ ժամանակ կարգ մը մագաղաթյա պատառիկներ հավաքած պայուսակի մեջ և այլ հայերեն գրքերու էջեր, բայց մաներանկարը չկար։

---

[225] Նույն տեղում։

[226] Կ. Գարիկյան, Նշնոնագատում.... էջ 363։

(Շարունակելի)

Ս. Ա. ԱՎԱԴՅԱՆ

(Հայկ. ՍՍՀ ԳԱ նեագիտության և ազգագրության ինստիտուտի գիտ. աշխատող)

ՄՈՐՈ ԶՈՐՈ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Սրանք նույն բովանդակությունն ունեն, այսինքն հաղորդում են Գեորգի Գ-ի արտոնագիրը վանքը հարկերից ազատելու մասին, այն տարբերությամբ միայն, որ եթե № 7-ում այդ հաղորդումը կատարվում է Ամիր Քրդի անունից, ապա № 8-ում ինքը՝ Թագավորաց Թագավորն է շարադրում «դիր ազատությանը», իհարկե շեշտելով՝ «Ամիր Քրդին հոգեոգությամբ»։

Մեր կարծիքով Ամիր Քրդի արձանագրությունը (№ 7) ինչ որ ժամանակով նախորդել է Գեորգի Գ-ի արձանագրությանը, քանի որ այն տեղավորված է Քաղի արևմտյան, այսինքն ձախ կողմում, որտեղից ավելի հավանական է արձանագրության սկիզբը։ Մինչդեռ Գեորգի Գ-ի արտոնագիրը տեղադրված է նույն Քաղի արևելյան, աջ կողմում, իբրև շարունակություն № 7 արձանագրության։

Պետք է ենթադրել, որ Ամիր Քուրդը Գեորգի Գ Թագավորից ձեռք բերելով «դիր ազատությանը» նախապես որոշել է այդ իրողությունը արձանագրել իր անվամբ («ասի դիր ազատությանս») և հետո միայն նույնը կրկնել է «Թագավորաց Թագավորիս անունով, ըստ երևույթին նպատակ ունենալով արքայական հրովարտակի նշանակություն տալ այդ արտոնագրին։

9. Եկեղեցու արևմտյան խաչթևի ներքևի՝ դեպի հարավային մուտքը նայող մասում, մի քարի վրա, խիստ քայքայված, 7 տող

1 (ԵՍ ԵՐ)ԱՆՇԱՀ ՄԻ

2 (ԱՐԱ)ՆԵՑԱՑ ԱԾԱԾՆԻ(Ս)

3 (ԵՒ ԵՏ)ՈՒՆ ԻՆՁ, Բ, ՓԱՌ(Ա)

4 ՍՈՒՆՑ, Ա,) ԻՆՁ, Ա, ԾԻՐ

5(ԱՆ)ԻՆ, ՈՎ ՁԱՌՆԷ, ՄԵ(Բ)

6 (ՄԵ)ՂԱՑՆ ՊԱՐՏԱԿ

7 ԱՆ Է։

Նանոթություն.— *Արձանագրված քարի ձախակողմյան հատվածը՝ տողերի սկիզբը հողմահարվել, քայքայվել է, ուստի թեպիրը հնարավոր է վերականգնել միայն դատողության ուժով։*

ա. Առաջին տողում նվիրատուի անունը վերապահությամբ վերծանում ենք Երանշահ։ Տողակերի շարքված մասի վրա կարող էր տեղավորվել միայն 3—4 տառ, որից երկուսը պետք է լիներ հավանական ԵՍ։

Երանշահ անձնանունը Աճառյանը ծագած է համարում պարսկերեն Իրանշահ ձևից (Անձ. բառ. Բ, էջ՝ 397)։ Միջնադարում գործածական է եղել Իրան անվան նախնագույն՝ Երան, Էրան ձևը, ըստ այդմ էլ անձնանունը ավանդված է Երանշահ, Երանշայ, Էրանշահ ձևերով։ Նույն անվան Ռանշահ փոփոխակը հանդիպում է Մակարավանքի գլխավոր եկեղեցու մի արձանագրության մեջ։

Վերծանվող արձանագրության Երանշահը այդ անձնանվան հնագույն հիշատակությունն է և վերաբերում է 13-րդ դարի առաջին տասնամյակին։

բ. 4-րդ և 5-րդ տողերում Սիրանին անունը նույնպես վերականգնում ենք ոչ հաստատորեն։ Տողավերջում պարզ երևում են Սիր գրերը, իսկ հայորդ տողի սկզբում պակասում է 2—3 տառատեղ, որին հետևում է՝ ԻՆ։

Եթե մեր վերծանությունը ստույգ է, ապա այս արձանագրության մեջ առկա է Սիրան իգական անձնան-

---

* Տարբերակված «Էջմիածին» ամսագրի 1967 թվականի № № 9—10-ից։

...ն առաջին և միակ վկայությունը, որը վերաբերում է 13-րդ դարակեզրին։

10. Եկեղեցու գմբեթի թմբուկի արևմտյան դրսեսին, արտաքուստ, խիստ քայքայված, 5 տող

1 ԵՄՀԱՑՐ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՌԻ Զ
2 ՎԱՆՔՍ, ՇԻՆԵՑԻ ՁԱԾԱԾԻՆՆ,
3 ԱՐԿԻ ՁԱՑԳԻՆ, ԳՆԵՑԻ ԶՋԱ
4 ՂԱՑՆ, ՑԻՇԵՍՋԻՓ Ի ՓՍ, ԱՂ
5 ԱՋԵՄ։

Մեկնություն.— Արձանագրությունը խիստ հողմահարված, եղծված է և դժվարությամբ է կարդացվում։ Դա է երևի պատճառը, որ նրա առաջին հրատարակիչ Բարխուդարյանցը մեջ է բերել միայն մի քանի տակավ բառեր, իսկ մնացածը համարել անընթեռնելի։ Արձանագրության հեղինակ Հայր Գրիգորիսը, այլ անդրադառնում Գրիգորը, Մորո Ձորո վանքի մեզ հայտնի միակորդ առաջնորդն է. առաջին անգամ իրեն այդտեղ նա հիշատակվում է Նանայի 1197 թվի արձանագրության մեջ (№ 1)։

Գրիգորիսը գործել է մինչև 13-րդ դարի առաջին տասնամյակը, քանի որ աթաբեկ Իվանեն 1213 թվի արձանագրության մեջ (№ 1) վանքի առաջնորդ է հաստատում «յազգէ քոյդ, մինչև յաւիտեան հայր վանքին»։

ա. 1—2 տողերում «...ատի գվանքս» պետք է հասկանալ ոչ թե բառացի, վանքը դնելու իմաստով, այլ հանձնեցի վանքի առաջնորդությունը։ Այս հատվածը Բարխուդարյանցը բաց է թողել («Արցախ—342)։

բ. 2-րդ տողում «...շինեցի զԱծածինս» դժվար է հստակ որոշել, թե ո՞ր շենքի շինությանն է վերաբերում խոսքը։ Ըստ եկեղեցին, հիշտ է, Աստվածածին է անվանվում, սակայն նրա կառուցումը այդ շրջանին չի հարող պատկանել, որովհետև, ինչպես երևում է վրաց Գեորգի Գ թագավորի և Ամիր Քրդի արձանագրություններից (տույն հավաքածուի № № 7, 8), Մորո Ձորո վանքը գոյություն ուներ և արտոնություններ էր ստանում դրանից շատ առաջ, համենայն դեպս մինչև 124 թ.։

Մեզ ավելի հավանական է թվում, որ «շինեցի Ածածինս» վերաբերում է կամ եկեղեցու վերանորոգմանը կամ հուշարձանախմբի այլ կառուցվածքներին (մատուռ, խաչարձան), որոնք չեն պահպանվել։

3-րդ և 4-րդ տողերում «...արկի զայդին, գնեցի զաղաղն». ցույց է տալիս, որ Մորո Ձորո վանքն ունեցել է ոչ փոքրաթիվ միաբանություն, որի կարիքները հոգալու նպատակով ստեղծվել է վանական տնտեսությունը։

11. Եկեղեցու գմբեթի թմբուկի հարավահայաց երեսին, արտաքուստ, երկու քարի վրա, կիսաեղծ, 7 տող

1 ✠ Ի ԹՈՒԻ ՈՒՋ (ԱՏԱՆ ԵՐԿՈ)—
ՁԱԳԱ—Բ—
2 ԵՒ ԻՍԱՆԷ(Շ)Ի(Ն)ԵԱՑ ԻՍԱՆԷ ԶՎԱՆՔՍ
ՄՈՐՈ ՁՈՐՈ ԵՒ(Ե)
3 Ս ՆԱՆԱ ԿԱՄԱԿԻՑ ԵՒ ԱՒԳՆԱԿԱՆ
ԵՂԷ ԱԾԱԾՆԻՍ
4 ԵՒ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ՊԱՏ-
ՈՒԱԿԱՆ ՀԱՒՐՍ ԳՐԻԳՈՐ
5 ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԻՆՁ
ՏԱՐԻՆ, Բ, ԺԱՄ ՁԱՒ(ԱԳ)
6 ՀԻՆԳՇԱԲԱԹ ԱՒՐՆ ԵՒ ՁՀՈԳՈՑՆ ԳԱ-
ԼՈՒՍՏՆ ՀԱ
7 ՍՏԱՏ Է (Ա)Ն(ՈՒԱՄԲՆ) ԱՑ։

Մեկնություն.— Արձանագրությունը հարավահայաց տեղադրության հետևանքով չափազանց հողմահարված է, եղծված և հատկապես առաջին տողերը դժվարությամբ են վերականգնվում։

ա. Առաջին տողի սկզբում թվադիրը ոչ այնքան հաստատորեն վերականգնվում ենք ՈՒՋ (1197). կասկածելի է և գիրը, որը հստակ չի երևում և ավելի նման է Ի-ի։ Սակայն ՈՒՋ ընթերցումն անընդունելի է, քանի որում այդ ժամանակ (1177) նանան հավանաբար հաղիվ մի քանի տարեկան էր։

Թվադրին հաջորդող տառաշարքը առաջին տողում և երկրորդի սկզբում բառանջատման ենք ենթարկում վերապահորեն, քանի որ այդ հատվածը պարզ չի կարդացվում և դժվարությամբ է կապակցվում հետագա բովանդակության հետ։

Տարակույս է առաջացնում Իվանե անվան կրկնությունը երկրորդ տողում։

բ. 4-րդ տողում «Ի միաբանեցա սբ ուխտիս և պատուական հաւրս Գրիգոր...» հավանաբար սխալ է, պետք է լինի՝ «պատուական հայրս Գրիգոր»—այդ է ցույց տալիս հատվածի անմիջական շարունակությունը։

գ. 7-րդ տողում անեծքի բանաձևի վերջին բառերը փորագրված են մանր դրերով, ավելի պակաս խորությամբ և իսպառ եղծվել են։ Պահպանված մի քանի դրերը թույլ են տալիս մոտավոր ճշտությամբ վերականգնելու այդ տողը։

Չնայած արձանագրության եղծված և անվերծանելի հատվածներին, նրա հիմնական բովանդակությունը որոշ չանցքերից հետո վերականգնվում է. ամիրսպասալար Հարդին մեծի դուստր, Զաքարիայի և Իվանեի քույր Նանան միաբանել է Մորո Ձորո վանքին, «կամակից և օգնական» եղել Իվանեին՝ վանքի շինության գործում, և պատարագաժամեր ստացել դրա դիմաց։

Վերծանվող արձանագրությունը կարևոր է նրանով, որ նոր տեղեկություններ է հաղորդում Կյուրիկյան վաղամեռիկ Արաս Բ թագավորի ամուսին Նանայի շի-

նարարական գործունեության մասին. մինչ այս՝ Նանայի կառույցներից հայտնի էին Սանահնի միակամար կամուրջը, որ նա կառուցել է ամուսնու հիշատակին, Հովհաննավանքի բուրգավոր պարիսպները և վերջապես իր որդեգիր, ազնվակերտ վարդապետ, նույնպես վաղամեռիկ Մարգարեի հիշատակին կանգնեցրած խաչարձանը նույն վանքի գերեզմանոցում[10]։ Նշված հուշարձանների կառուցման ժամանակները ստույգ կերպով որոշված չեն, քանի որ նրանց շինարարական արձանագրությունները անթվագիր են, իսկ մատենագրական աղբյուրներում էլ այդ մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Մի բան անվիճելի է, որ սրանք բոլորն էլ նանան կառուցել է իր ամուսին Արաս Բ թագավորի մահվանից (1182 թ.) հետո։

Ներկա արձանագրությունը, եթե նրա տարեթիվը ճիշտ ենք ընթերցել, ստույգ թվագրված առաջին հիշատակությունն է Նանայի կառուցողական գործունեության մասին։

12. Եկեղեցու գմբեթի թմբուկի վրա, ներքուստ, հյուսիսային լուսամուտի քանդակազարդ պսակին կից, նրանից դեպի հարավ, շղագիր տառերով, մի քարի վրա, 2 տող

1 ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԻ
2 ՅՈՀԱՆԱ

Նանոթություն.— Ամենայն հավանականությամբ արձանագրությունը վերաբերում է Մորո ձորո վանքի մեջ հայտնի առաջին առաջնորդ Յոհաննիսին։

Ճիշտ է, բնագիրը փորագրված է թմբուկի ներսի մակերեսին, այնի լրենկող և անմատչելի մասում, որտեղ սովորաբար իրենց անունները էին թողնում շինքը կառուցող ճարտարապետ-վարպետները։ Սակայն, հաշորդ՝ № 13 արձանագրությունը, որը նույնպես փորագրված է թմբուկի ներսում, նման տառաձևերով և անվիճելիորեն վանքի առաջնորդ Գրիգորիսին է վերաբերում, հաստատում է մեր միտքը, որ Յոհաննեսը ոչ թե շինարար փարպետն է, այլ վանքի առաջնորդը։

Ինչպես արդեն նկատել ենք, հուշարձանի նախնական արձանագրություններում (№ № 7, 8) վրա Գեորգի Գ թագավորը հատուկ արտոնագրով Մորո ձորո վանքն ազատում է հարկերից և հանձնում վանահայր Յոհաննիսի տնօրինությանը։

Վանքի վիմագրության տվյալներից դատելով նրա առաջնորդությունը շարունակվել է մինչև 1187 թվին, երբ նրա փոխարեն առաջնորդ է հիշվում Գրիգորիսը։

13. Եկեղեցու գմբեթի թմբուկի վրա, ներքուստ, հարավային լուսամուտից դեպի արևելք, շղագիր տառերով, 8 տող

1 ԱԾ ՈՂՈՐՄԻ ԳՐԳ
2 ՈՐԻՍԻ ԵՒ ԻՒՐ Ծ
3 ՆՈՂԱՑՆ

Նանոթություն.— Գրիգորիսը կամ Գրիգորը առային անգամ Մորո ձորո վանքի առաջնորդ է հիշվում Նանայի 1197 թվի արձանագրության մեջ։ Հավանաբար այդ թվին կամ դրանից ոչ շատ առաջ նա փոխարինել է վանքի՝ մեզ հայտնի առաջին վանահայր Յոհաննիսին, որ հիշատակվում է № № 7, 8 արձանագրություններում (մինչև 1184 թվին)։ Հետագա բնագրերը, որոնց մեջ փորագրված է Գրիգորիսի անունը անթվագիր են (№ № 2, 4, 10), ուստի դժվար է որոշել, թե մինչև երբ է շարունակվել նրա առաջնորդությունը։ Հայտնի է միայն, որ աթաբեկ Իվանեի 1213 թվի արձանագրության մեջ (№ 1) արդեն վանքի առաջնորդ է հաստատվում Եվագրը։

Իվանեն Աստվածածին եկեղեցին նորոգել է Եվագրի առաջնորդության տարիներին, ուստի պետք է ենթադրել, որ Եվագրը Գրիգորիսի փոխարեն վանական միաբանության գլուխ է անցել 1213 թվից մեկ կամ երկու տարի առաջ։

Բնագրում Գրիգորիսի անունը փորագրված է «Գրգորիսիս» ձևով։ Մենք վերականգնում ենք ուղիղ ձևը, հիմք ընդունելով № 10 արձանագրությունը, որը գրված լինելով հենց իր՝ Գրիգորիսի կողմից, ավելի հավաստի է։

---

10 Տե՛ս Գ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948 թ., էջ 112—113։



ՀԱՆԳԻՍՏ ՋՅՈՒԼԻԵՏ ՋՈՆՍՈՆԻՆ

Վերջերս 93 տարեկան հասակում վախճանվեց հայ եկեղեցու և հայ ժողովրդի բարեկամ, Քենտրբերիի տաճարի վանահայր Հ. Ջոնսոնը, որը մանավանդ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում բացառիկ գեր է խաղացել միջկրոնական և խաղաղության գաղափարի մշված պայքարում։

Հ. Ջոնսոնը ծնվել է 1874 թվականին Մանչեստրի արվարձաններից մեկում, գործարարական հարուստ ընտանիքում։ 17 տարեկան հասակում նա ընդունվում է Մանչեստրի համալսարանը, որն ավարտում է 1894 թվականին՝ երկրաբանի վկայականով։ Երկար տարիներ Հ. Ջոնսոնը հեռու է մնում կրոնական գործունեության շրջանակներից։ Սակայն որոշ ժամանակ անց նրա մեջ զարթնում է քրիստոնեական ավետարանչության և առաքելության ոգին, սեր և նվիրվածություն դեպի կրոնական գործունեությունը, և նա դառնում է քարոզիչ հոգևորական՝ 4 տարի աստվածաբանական, կրոնական, եկեղեցական կուրսերում սովորելուց հետո։

1905 թվականին նա հրատարակում է «Interpreter» աստվածաբանական ամսագիրը, իսկ 1908 թվականին ստանում է քահանայական աստիճան և իր անունն ու կյանքը կապում եկեղեցու գործունեության և առաքելության հետ։

1931 թվականին արքայական հատուկ հրամանով նշանակվում է Քենտրբերիի տաճարի վանահայր, պաշտոն, որը կատարում է փայլուն հաջողությամբ։ Մինչև իր կյանքի վերջը նա եղել է Սովետական Միության եկեղեցիների և ժողովուրդների անկեղծ բարեկամը։ 1945 թվականին այցելել է Սովետական Միություն և ներկա եղել էջմիածնում Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության և օծման հանդեսին, լինելով նաև հայ եկեղեցու ջերմ բարեկամը, երբ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ն այցելեց Անգլիա, Հ. Ջոնսոնը Հայոց Հայրապետին պաշտոնապես ընդունեց և պատվեց Քենտրբերիի պատմական Մայր տաճարում։

Հ. Ջոնսոնի մահը մեծ վիշտ պատճառեց Ամենայն Հայոց Հայրապետին։ Հանձին նրա Մայր Աթոռ ս. Էջմիածինը կորցրեց իր լավագույն բարեկամներից մեկին, որը շատ բան է կատարել հայ և անգլիական եկեղեցիների սիրալիր և փոխադարձ հարաբերությունների զարգացման բնագավառում։

Հանգուցյալը հայտնի է նաև իր գրական-քարոզչական գործունեությամբ։ Նա հեղինակ է մի շարք գրքերի, որոնցից մեկն է «Քրիստոնեությունը և կոմունիզմը» կարևոր աշխատությունը, որն արտացոլում է ժամանակակից անգլիական փիլիսոփայության և աստվածաբանական մտքի վերաբերմունքը դեպի ժամանակակից արդիական հարցերը։

Հանգուցյալն ապրեց տիպար ու հավատավոր քրիստոնյա քարոզչի դժվար, բայց փառավոր կյանք և իր աչքերը փակեց որպես ամշակ առանց ամաթոյ։

Թող Աստված իր անթառամ փառքին և լույսին արժանացնի Հ. Ջոնսոնի բարի ու հավատավոր հոգին։

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Բարձրագույն պարգև Բյուրականի աստղադիտարանին.—Սովետական Միության Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Բյուրականի աստղադիտարանը պարգևատրվել է Սովետական Միության բարձրագույն պարգևով՝ Լենինի շքանշանով: Աստղադիտարանը այդ մեծ պատվին արժանացել է աստրոֆիզիկայի բնագավառում ձեռք բերած խոշոր նվաճումների համար: Բյուրականի աստղադիտարանը Սովետական Միության մեջ առաջին աստղադիտարանն է, որ պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Մայիսի 7-ին Երևանի օպերային թատրոնի շենքում տեղի ունեցավ մեծարանքի բազմամարդ հանդես՝ նվիրված աստղադիտարանի պարգևատրմանը: Հայաստանի Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության անունից Բյուրականի աստղադիտարանին հանձնեց բարձր պարգևը և ջերմապես շնորհավորեց աստղադիտարանի աշխատողներին՝ մաղթելով նրանց նոր հաջողություններ:

Ողջույնի խոսքերով հանդես եկան գիտական և հասարակական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ: Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը իր ողջույնի խոսքի մեջ ասաց.

—Հայ աստղագետների հաջողությունները աստղերի գոյացման և գալակտիկաների զարգացման պրոցեսների ուսումնասիրության բնագավառում համաշխարհային ճանաչման են արժանացել և պատիվ են բերել ոչ միայն աստղադիտարանին, այլև ամբողջ հայ ժողովրդին:

Վերջում հանդես եկավ աստղադիտարանի տնօրեն, մեծանուն գիտնական Վ. Համբարձումյանը շնորհակալություն հայտնելով սովետական կառավարությանը բարձր պարգևի համար և բոլոր այն հաստատություններին, որոնք նպաստում են Բյուրականի աստղադիտարանի աշխատանքների հաջողությանն:

«Բանբեր Երևանի համալսարանի».—Լույս տեսավ «Բանբեր Երևանի համալսարանի» առաջին համարը: Այս նոր պարբերականը լույս է տեսնելու տարեկան երեք անգամ: Հոդվածները տպագրվելու են հայերեն և ռուսերեն լեզուներով:

Համալսարանի հիմնադրման առաջին տարիներից սկսած լույս են տեսել ավելի քան 100 գիտական ժողովածուներ՝ պարունակելով համալսարանում մշակվող գիտական ուսումնասիրությունը նվիրված աշխատություններ՝ գրականության, պատմության, փիլիսոփայության, լեզվաբանության, տնտեսագիտության և այլ հասարակական գիտությունների վերաբերյալ: «Բանբերը»-ը շարունակելու է սահմանված ավանդական կարգը:

Հանդեսում տեղ է տրվելու համալսարանից և Հայաստանից դուրս ապրող ու գործող գիտնականների, այդ թվում՝ սովետական մտավորականների աշխատություններին:

Հայաստանի գորգերը.—Իջևանի գորգագործարանը խոշորագույններից մեկն է Կովկասում: Նրա արտադրանքը լայն ճանաչում է գտել: Մեծ պահանջկա «Հոբելյանական», «Հայաստան», «Լոռի», «Զանգեզուր» կոչվող գորգերի:

Այս տարի ֆաբրիկան պետք է արտադրի 400000 ք/մ զանազան տեսակի գորգեր և գորգուղիներ: Դա 40 տոկոսով ավելի է անցյալ տարվա արտադրանքից: 1970 թվականին ֆաբրիկայի արտադրանքը կհասնի մեկ միլիոն ք/մետրի:

Արփա-Սևան գետնուղու շինարարությունը.—Շարունակվում է Արփա-Սևան գետնուղու կառուցումը, որով Արփա գետի ջրերը պիտի հոսեն դեպի Սևան: Ներկայումս գետնուղու (թունել) հորատումը կատարվում է վեց տարբեր մասերից, որոնցից մեկը գործի է դրվել ապրիլին: Հինգ աշխատամասերը միասին վերցրած ապրիլ ամսին փորել են 445 մետր թունել: Իսկ աշխատանքների սկզբից մինչև մայիսի 1-ը փորված է ընդամենը 7800 մետր (գետնուղու երկարությունն է 48 կմ):

Հունիս ամսին հորատման աշխատանքների թիվը կավելանա 4-ով, որով գետնուղու փորումը կկատարվի 10 տարբեր կետերից:

Դավիթ Անհաղթի երկասիրությունը ռուսերեն.—Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը ռուսերեն լեզվով լույս է ընծայել փիլիսոփայական գիտությունների թեկնածու Սեն Արևշատյանի աշխատությունը՝ «Դավիթ Անհաղթի Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնաբանությունը»:

Դավիթ Անհաղթը 5—6-րդ դարերի ականավոր հայ գիտնական-փիլիսոփա էր՝ իր կրթությունը առա-

ցած Ադերսանորիայում: Նա հեղինակ է մի շարք հնագիտական և թարգմանական երկերի, որոնք հասել են մեզ ձեռագիր ձևով և պահվում են Մատենադարանում: Վերոհիշյալ աշխատությունը Դավիթ Անհաղթի կարևոր երկասիրություններից մեկն է, որ վերաբերվում է Արիստոտելի ուսմունքը տրամաբանության մասին:

Աշխատությունը առաջին անգամ է լույս տեսնում ռուսերեն, որ և հնարավորություն կտա հոչակավոր հայ գիտնականի երկասիրությունը սովետական մյուս ժողովուրդներին ծանոթացնել: Ռուսերեն թարգմանության հետ միասին տրված է Դ. Անհաղթի երկասիրության գրաբար բնագիրը:

Մենագրություն Հարություն Սվաճյանի մասին.—Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել Աս. Աստուրանի աշխատությունը՝ նվիրված անցյալ դարի կեսերի հայտնի հրապարակախոս և հասարակական գործիչ Հարությունի Սվաճյանի կյանքին ու գործունեությանը:

Մենագրության մեջ հատուկ տեղ է տրված Հ. Սվաճյանի գործունեությանը «Մեղու» պարբերականում, ինչպես նաև Հ. Սվաճյանի և Մ. Նալբանդյանի համատեղ գործունեությանը: Գրքի հավելվածում տրված է Հակոբ Պարոնյանի վերաբերմունքը Հ. Սվաճյանի ստեղծագործության նկատմամբ:

Երևանի կենտրոնական պուրակի բարեկարգումը.—Երևանի կենտրոնում՝ Լենինի և Շահումյանի հրապարակների միջև ընկած պուրակը ներկայումս ինտենսիվ վերափոխվում ու բարեկարգվում է: Պուրակի կենտրոնական ծառուղին ընդարձակվում է և ունենալու է հինգ ջրավազաններ՝ մի ամբողջ շարք շատրվաններով: Ավազանների երկու կողմերում կլինեն ճեմուղիներ ու նստարաններ: Պուրակում տնկվել են նոր ծառեր ու թփեր:

Նոր երգչախումբ.—Մեր հանրապետության մեջ շատ կան ինքնագործ երգչախմբեր: Սակայն պրոֆեսիոնալ երգչախումբ միայն մեկն էր՝ Հայաստանի պետական երգչախումբը, որի համբավը հայտնի է հանրապետության սահմաններից դուրս:

Հայաստանի երգչախմբային ընկերությունը կազմակերպել է մի նոր խումբ՝ ղեկավարությամբ Սովետական Միության ժողովրդական դերասան Թաթուլ Այթոնյանի: Նոր երգչախումբը մայիսի սկզբներին տվեց իր անդրանիկ համերգը, որն ունեցավ մեծ հաջողությամբ:

Խմբի երգացանկի մեջ մեծ տեղ են գրավելու հայ դասական ու ժամանակակից երգահանների գործերը: Խումբը շրջելու է Հայաստանի գյուղերն ու քաղաքները, ինչպես նաև խոշոր գործարաններն ու համերգներ է տալու՝ նպատակ ունենալով ժողովրդականացնել հայկական խմբերգի արվեստը:

Նոր հյուրանոցներ Երևանում.—Ըստ միջին հաշվարկումների, ներկա Երևանը պետք է ունենա 3500 հյուրանոցային տեղ: Մինչդեռ քաղաքի բոլոր հյուրանոցները միասին վերցրած հազիվ դրա կեսի չափ տեղ ունեն միայն: Ահա թե ինչու այնքան կարևոր նշանակություն է ստանում նոր հյուրանոցներ կառուցելու խնդիրը:

Ներկայումս մայրաքաղաքում միաժամանակ կառուցվում են երեք հյուրանոցներ՝ Ազատության փողոցում, Նորքում և Հ. Պարոնյանի փողոցում: Երեք հյուրանոցներն էլ լինելու են 14 հարկանի և յուրաքանչյուրն ունենալու է 500 տեղ:

Նախատեսված է առաջիկայում սկսել ևս երեք հյուրանոցների կառուցումը: Դրանցից մեկը՝ 16 հարկանի, կկառուցվի կայարանամերձ հրապարակում, մյուսը՝ Տերյանի և Մարքսի փողոցների անկյունում («Սևան» հյուրանոցի շարունակությունը) և երրորդը՝ Էջմիածնի խճուղու վրա: Եկող տարի կսկսվի «Արմենիա» հյուրանոցի 4-րդ կորպուսի շինարարությունը՝ ներկա շենքին կից:

Երևանի պատմության թանգարանում.—Երևանի պատմության թանգարանը վերջերս հարստացավ բազմաթիվ արժեքավոր նոր նյութերով, որոնք հայտնաբերվել են քաղաքի շրջակայքում գտնվող հին բնակավայրերի պեղումների ժամանակ: Թանգարանում այժմ ինքնուրույն պեղումներ է կատարում Թալին գյուղի շրջակայքում, ուր հայտնաբերվել են բրոնզյա դարի շրջանին պատկանող հետաքրքիր դամբարաններ:

Հայտնաբերված են բազմաթիվ զարդեր, զենքեր, տնային գործածության առարկաներ, որոնք վկայում են ժամանակի բնակիչների զարգացած մշակույթի մասին: Հայտնաբերված բոլոր իրերը ցուցադրված են թանգարանում:

Թղթի գործարանում.—Սկսվել է Երևանի թղթի և խավաքարտի գործարանի հիմնական վերակառուցումը, որից հետո գործարանի արտադրանքի ծավալը մի քանի անգամ կավելանա: Կառուցվել են նոր արտադրամասեր, որոնցում ներկայումս տեղադրվում են Լենինգրադից և Քիշնևից ստացված կատարելագործված մեքենաներ:

Գործարանը կարտադրի փաթեթման թուղթ և մեծ քանակությամբ ալիքաձև (գոֆրե) խավաքարտ:

Մայրաքաղաքի երթևեկության միջոցները.—Մեքենայաշինական տոների նախօրյակին Երևանում սկսեց աշխատել տրոլեյբուսային մի նոր գիծ, որն Արովյան փողոցը Ավանի ծորով կապում է Նորքի նորակառույց թաղամասի հետ: Գծի երկարությունը 12 կմ է: Վերջին ամիսներին տրամվայի, տրոլեյբուսի և ավտոբուսի նոր երթուղիներ են բացվել դեպի քաղաքի ընդարձակ թաղամասերը:

Բնակչությանը սպասարկելու համար ընթացիկ տարում մայրաքաղաքը կստանա 1270 հատ տրամվայի նոր վագոն, տրոլեյբուս, ավտոբուս և տաքսի ավտոմեքենաներ:

Երևանյան սառնարաններ.—Երևանի Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանը, ի թիվս բազմապիսի այլ մեքենաների ու սարքավորումների սկսել է նաև տնային սառնարանների թողարկումը: Երևանյան սառնարանները կոչվում են «Արագած», ունեն 200 լիտր տարողություն, արտաքուստ գեղեցիկ ձևավորված են և գործածության համար շատ հարմար:

Արդեն թողարկված է ավելի քան 1000 սառնարան: